

ANDASTAN
ARTS ET
LETTRES



Մայրենի
Գրույն

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՊԻԵՍԻ

Fonds A.R.A.M

Ե. ԱՅՎԱԶԵԱՆ
Բ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Գ. ԳԱԻԹԵԱՆ
Վ. ԵՐԱՆԳԵԱՆ
ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ
Ա. ԽԱՆՏԱՆԵԱՆ
Ա. ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ
Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
Կ. ՂԱՖԱԴԱՐԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ
Յ. ՄԱՐՏՈՒՆԻ
Վ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
ԱՐՇ. ՄԿՐՏԻԶ
Վ. ՆՈՐԵՆՑ
ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ
Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ
ՈՒ. ՍԱՐՈՅԵԱՆ
ԵԴ. ՄԻՄՔԷՇԵԱՆ
ՓՕԼ ՎԱԼԵՐԻ
Կ. ՓՕԼԱՏԵԱՆ
Գ. ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆ
Յ. ՔԻԻՐՏԵԱՆ

ԹՈՐՈՍԵԱՆ
ՍՈՆԱ ԹՕՓԱԼԵԱՆ
Բ. ԹՕՓԱԼԵԱՆ
ՃԵՐԱՆԵԱՆ
ՇԱՐԹ
Բ. ՊՈՏՈՍԵԱՆ
ՏԷՐ-ՂԵԻՈՆԴԵԱՆ
Տ. ՓՈԼԱՏ
ՔԱԶԱԶՈՒՆԻ

1962

13



ԱՆԴԱՍՏԱՆ

Պարբերական

Գրականության եւ Արուեստի

*

13

1962

ANDASTAN

Revue arménienne

Arts et Littérature

PARIS

Fonds A.R.A.M





ԱՊՈՒԲԱՆՈՒՄ
ՈՐ ՊԵՅՄՈՒՐԿԷ




ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԻՐԱՏ,
ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՆ ՀԱՆՃԱՐՈՅ:
ԵՐԱՆՈՅՆ ԺԵՐԱՅ, Ե
ՆՐՈՆԵԼ զԳԱՐՆՈՒԹՅԱՆ
ՆԵՅ. ԻՄԻՏԱՆՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՄ ԶԻՐԱՆՈՒՄ ԵՒ
ԵԼԳԻՐԱՆՈՒՄ, զԻՄԱՍՏ
ՆԱՆԿԱՆԵՅ ՍԵՂՅՈՅ զԻՄԱՍ
ԼԵԶՆԱՆՃԱՐ
|| ԸՈՒՄԻՐԵԼՆՈՒՄԵՆ ԻՄԱՍՏ

Է

ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԻՐԱՏ,
ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՆ ՀԱՆՃԱՐՈՅ:

(Հայ տառերով առաջին պարբերութիւնը Մեսրոպ Մաշտոցի կազմէ գրուած)



Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

(ԻՐ ԾՆՆԴԵԱՆ 1600ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Պարգորէն, հաւատքով ու ծնրազիր պէտք է ողջունել իր դարա-
դարձը, որովհետեւ բոլոր վերագիրները կը նսեմանան իր մեծութեան
առջեւ:

Մերոպ Մաշտոց կոչուեցաւ ան, ծնաւ Տարօնական անդաստա-
նին, Հացեկաց զիւղի ծոցէն, եղաւ սերմանող ու զօրական, վարդա-
պետ ու վերժանող, առաքեալ ու դաստիարակ, եւ շրջելով աւանէ ա-

ւան, քարայրէ քարայր, լսե՛ց վերջապէս աստուածային իրականութեան պատգամը, եւ իր մոլորուն ժողովուրդը յաւերժացուց Հայ Գիրերու հեղեղային լուսածաղին մէջ: Այդ մեծադոյն ժառանգը թողուց ամէնուս, եւ Օշական նուիրադործեց իր գերեզմանը, որուն վերեւ կը հսկէ Լուսաւորչի աստղը, եւ պատմութիւնը կը շփոթէ իր անունը իրր Հայ քաղաքակրթութեան երկնառաք ճարտարապետը: Իր մէջ կը ծնին Բանին, Քնարին եւ Դպրութեան բոլոր համերգութիւնները, այն հրեղէն խօսքը՝ որ սերունդէ սերունդ կը հնչէ մշտանորոգ երիտասարդութիւնով, եւ մեզ կը փրկէ մտաւոր ու ողեկան անսուղութենէ:

Իր տեսանած Տառերուն խորհուրդովը պիտի պսակենք իր նուիրականութիւնը, քանի որ ծաղիկներու ամէն դրասանգ կ'անչքանայ իր յաղթանակին առջեւ: Իր դամբարանին վրայ երախտագիտութեամբ պիտի դնենք այդ պսակը, ուր կան Անթառամ եւ Բրարիոն, Գինի եւ Դաշխուրան, Երախակալ եւ Զարդուզէն, Էութիւն եւ Ըմբոստացում, Թափ եւ Ժայթքում, Իմաստութիւն եւ Լինելութիւն, Պաշ ու Ծաղկատօն, Կալ եւ Հունձք, Զայն ու Դօղանջ, Ճոռողում եւ Մեղեղի, Յոյս եւ Նպատակ, Շնորհ եւ Ուխտ, Զարչարանք եւ Պայծառակերպութիւն, Զահ եւ Ռազմ, Սէր ու Վաստակ, Տաւիղ եւ Բախճանք, Տօղ եւ Հիւթք, Փառք եւ Քանդակ:

Մեսրոպ կը սւանայ գաղափարական արժէքներէն անդին եւ կը բարձրանայ արարչագործութեան սահմաններուն, կը վերածուի ամբողջովին լուսատու ու կենարար զօրութեան մը, նման արեւին, հողին, պտղաբերութեան եւ վերածնունդի օրէնքներուն:

Զինքը պաշտող հոգիները այդ ջերմութիւնով ապրեցան դարէ դար, իր հանգանակը միշտ բարձր պահելու, տառապելու հրճուանքին եւ ստեղծելու պատիւին համար:

ԵԿ. ՍԻՄԳԷՇԵԱՆ

*

Դ

ու դարձել ես մեր աշխարհում այս հարուստ,
Անգլիայի գանձի տեր,
Անվատեյի, անհատնեյի, ինչպէս սէր :

Երեսունեւեկ աստղերով դու վառեցիր
Հայ աշխարհում այնպիսի վառ մի արեւ,
Որ մեր ազգը՝ յանախ եղած ցան ու ցիր
Նրանով է միաւորեալ արդարեւ :

Օշականում քո մատուցն եմ դարձել հող,
Սակայն, ինչպէս ամէն բոյսի, պտղի մէջ
Կայ արեւից մի սուրբ մասնիկ, քաղցր շող,
Քեզանից մաս կայ ամէն հայ սրտի մէջ...



Հ

այ ժողովրդի բազմադարեան տարեգրութեան մէջ բացառիկ նշանակութիւն ունեցաւ հայ գրի եւ գրականութեան ստեղծումը : Այն դարագլուխ կազմեց հայ մշակոյթի պատմութեան մէջ եւ պաշտպանողական հօր վաճան դարձաւ ձուլման վտանգի առջեւ հետագայ դարերի մեծ փորձութիւնների ժամանակ : Պատմական իրադարձութիւնները սովորաբար գնահատուում եւ արժեքաւորուում են իրենց ժամանակի մէջ եւ ժամանակի չափանիշով, իսկ հայ գրի եւ գրականութեան ստեղծումը պատկանում է ա՛յն իրադարձութիւնների շարքին, որի նըշանակութիւնը դուրս է գալիս Ն. դարի սահմաններից եւ հետագայ դարերում ո՛չ միայն չի կորցնում իր երբեմնի նշանակութիւնը, այլ՝ եւ նոր ու աւելի մեծ բովանդակութիւն է ստանում :



Բ

ուրը կարող են երազել, բայց երազը բոյրն է հոգե-
խող, ներքին հագուստը ծաղկի, որն անկարելի է կամա-
ւոր մշակել: Քանզի նրա հունտն է սէր, եւ արմատն է տառա-
պանք, ծիւն է թախիճ ու ցողունը՝ սփոփանք: Գերզայնու-
թիւն են տերեւները, եւ ինքը՝ ծաղիկն է՝ տենչանք:

Բուրը կարող են երազե՛լ, բայց երազը ծիածանն է
երփներանդ՝ աննիւթական մի լոյսի, որ դժուար է վառ պա-
հել յարատեւ:

Ան քաղցրահնչիւն արձագանգն է հեռուոր, արձագանգը
ներքին, տրտում մի տենդի շարունակութիւնը ներդաշնակ:

Բուրը կարող են երազել՝ բայց երազանքը զեղեցիկ եւ
խորհրդաւոր դէմքն է ծածուկ էութեան որ դժուար է կենդա-
նի պահել:

Քանզի նրա զեղեցիկութիւնը՝ կարօտ է, խորհուրդ եւ
սպասում: Նրա կարօտն է բացակայութիւն, եւ սպասումն է
սէր, եւ բացակայութիւնն է՝ խորհուրդ, եւ սէրը Գեղեցիկու-
թիւն:

Բուրը կարող են երազել.— Բայց երազանքը..

*

Մ Ո Փ Ա Ս Ա Ն Ի « Գ Լ Օ Շ » Ը

«Նորավէպ»

Յ աճախ կը պատահի որ երեւակայութեամբ աշխատող զբաղէտ մը, այսինքն որոշ իմաստով՝ բանաստեղծը, վկան՝ լաւագոյնին և յոռին, ստեղծագործ կարգ ու սարքի, կշտոյթի և ճշմարտութեան, խորհող մը նկատուի պարզ մարդոց կողմէ, որոնք ամենայն լըջութեամբ հարցնեն իրեն թէ կարելի՞ է արդեւք ըլլալ մարդկութեան ինքզինքը փճացնելու և եթէ այո՛, ի՞նչ ձեւով:

Գիտենք որ անկարելի է մարդկութեան ինքզինքը փճացնել: Անշուշտ սեւէ օրէնք չկայ այդ անկարելիութիւնը ապացուցանող, բայց ևս այն համոզումը ունիմ որ գոյութիւն ունի անձանօթ օրէնք մը և եթէ մարդուն ճակատագիրն է այս աշխարհի մակերեսէն հեռանալ, այդ ճակատագիրը փութացնողը ինքը պիտի չըլլայ:

Ան պիտի ընթանայ հանդարտ կերպով, վստահօրէն դէպի իր կորուստը, առանց վայրկեան մը խակ անդրադառնալու որ ստուգօրէն դէպի հո՛ն կ'երթայ:

Այսպէս, խորհուրդը պիտի տեւէ՝ թոյլ տալով մեզի որ ճանչնանք միայն այն պզտիկ մասը որ կը ճանչնանք՝ մնացեալը պիտի մնայ մթութեան մէջ:

Ոչ ալ մեր երկրագունդը պիտի պայթեցնենք ինչպէս կը հաւատան և կը վախնան կարգ մը կրօնականներ և գիտուններ, որոնք իմաստուններ են տարբեր նկատողութեամբ:

Երկրագունդը գոյութիւն պիտի ունենայ միշտ. հետեւելով իր անձանօթ և անճանաչելի ընթացքին և բոլորս արդէն երկար ատեն ասանկ ապրած պիտի ըլլանք և բոլորս մեռած և մոռցուած, կամ սչինչի վերածուած և կամ այլ բան մը դարձած. թերեւ երկուքն ալ:

Յամենայն դէպս ևս այսպէս կ'ըսեմ, բայց նախապէս ձեզի ըսի որ սխալ մըն էր զիս խորհող մը նկատել:

Որոհող մը չեմ:

Նոյնիսկ երեւակայութեամբ աշխատող զբաղէտն՝ ալ չեմ, բառին բուն իմաստով, որովհետեւ բոլոր դրածներուն մէջ զիս կը գտնեն,

ամէն բառի ետին, պատմուածքներուս, վէպերուս, թատերական կտորներուս ամէն մէկ հերոսին ետին:

Արդ՝ երեւակայութեամբ զըրզներու արուեստը կը կայանայ անձնաւորութիւնները ստեղծելուն մէջ:

Իմ անձնական տիպարս ստացած, ընդունած, զարգացուցած կամ պարզապէս ստեղծած ըլլալս ինծի կը բաւէ. բայց անշուշտ այսքանով կարելի չէ երեւակայութեամբ զըրզի տիպարուն արժանանալ:

Այսուհանդերձ ես գրազէտ եմ: Իմ աշխատանքս է բռներ զործածել: Անգլիերէնը որ սկսայ սիրել, թերեւս անոր համար որ միակ լեզուն է որ գրեմ եւ միակը որ կը զործածեմ, երբ գրելու համար նստիմ գրամեքենայիս առջեւ որեւէ տեղ եւ բան մը գրեմ. ինչ որ կ'ընեմ այս միջոցիս եւ որուն «պատմուածք» տիպոսը տուի:

Եթէ լաւ խորհիք, թերեւս ալ պատմուածք մը չէ: Ի՞նչ մը որ խորքին մէջ ո՛չ մէկ կարեւորութիւն ունի: Ի՞՞վ պիտի տուժէ, ո՞՞վ պիտի դժգոհ մնայ, ո՛չ ոք. այն ատեն...

Որոհող մը չեմ, երեւակայութեամբ աշխատող գրազէտ մը չեմ. ամէն ինչ մտածել կուտայ որ ձախողած եմ ամէն բանի մէջ. բացի մէկ բանէ. — միշտ Սարոյեան եղած եմ:

Ասոր մէջ չեմ ձախողած. քիչ է, բայց բաւական է:

Ընդհանրապէս ինծի շատ խրթին հարցումներ չեն ուղղեր, այլ դիւրին հարցումներ, ի մասնաւորի հատ մը որ յանկերզի պէս միշտ կը կրկնուի.

— Ինչպէ՞ս գրազէտ դարձած ես: Ինչպէ՞ս Սարոյեան եղած ես: Ինչպէ՞ս դուն ինքզ դարձար, գրեմ: Կ'ազաչեմ, ըսէ ինծի:

Ասոնց համար պատասխան չունիմ: Պատասխանը իրենք իրենց մէջ պէտք է գտնեն: Կամ պէտք է հարցնեն ուրիշ գրազէտի մը, ինձմէ նուազ բարեկիրթ, գրազէտ մը որ քարտուղարը կանչէ եւ ըսէ որ սովորական տեղեկագրութիւնը զրկեն: Ան գրեմ ինչ որ պէտք է ըսել: «Ըսէք որեւէ բան, ըսէք որ գրազէտ դառնալու միակ միջոցը գրականութիւն ուսումնասիրելն է: Ուսումնասիրել համբերութեամբ, երկարօրէն կարգալ, կարգալ: Կարգալ անդիլիական գրականութիւն, Ֆրանսական, ռուսական, գերմանական, իտալական, յունական, սպանական, իրլանտական, յետոյ ասիական գրականութիւն, ամբիկեան գրականութիւն եւ Նազազականի կղզիներունը: Անկէ վերջ պատմուածքներ գրելու լուրջ դասընթացքի մը հետեւիլ. ուրիշ դասընթացքի մը՝ տոամներ գրելու. թերեւս չորրորդ մըն ալ նամակագրութեան արուեստին մասին:»

Նոյնիսկ ենթադրելով որ մէկը կարենայ իրապէս ցնորական ձեռնարկով մը շահագրգռուիլ՝ այս ձեւով չէ որ գրազէտ կը դառնայ:

Գրազէտը ըստ ինքեան գոյութեան որեւէ պատճառ չունի. բացի

չարիքի պարագային, որուն դէմ հարկ կը տեսնէ բողոքել, առաւել կամ նուազ բացայայտ կերպով, բառերու միջոցաւ եւ ըստ երեւոյթիւն այն յոյսով որ այդ բառերը պիտի համոզեն չարիք ընողները որ դադարին չարիք ընելէ :

Միակ բանը որ դրազէտը կ'արդարացնէ, փոխելն է կազացողը շիտակ քաղովի, մէկ խօսքով աշխարհը բարեփոխել ջանալը :

Եւ կարծես այդ բաւական չըլլար • դրազէտը կը փորձէ կերպարանափոխել նոյնինքն մարդը : Փոխել մարդկային բնութիւնը, անհատականութիւնն ու մարդուն նկարագիրը : Յեղաշրջել մարդը, տարբեր ձեւի վերածել, մէկ խօսքով իր իսկ պատկերին նման վերստեղծել : Այսինքն այս ներկայ պարագային անով Սարոյեան մը շինել :

Անշուշտ Սարոյեաններու ցեղ մը անտանելի պիտի ըլլար, բայց քանի որ ո՛չ Սարոյեաններու ցեղ մըն ալ տանելի չէ, կ'արժէ թերեւս որ լրջօրէն փորձենք :

Ինքնահաւան մարդիկ ինչքա՞ն ինքնագոհ են : Կը մտածես թէ ինչո՞ւ, պէտք էր դադրէին ըլլալէ : Ատիկա որեւէ բանի պիտի չծառայէր :

Եւ ստրկամիտ մարդիկ ինչո՞ւ ստրուկ են : Աւելի լաւ է ամբարտաւան ըլլալ, հակառակ անոր որ այդ ալ լաւ չէ :

Իտէալը նորէն ամէն ինչ ըլլալն է միաթամանակ եւ փոխն ի փոխ :

— Ինչպէ՞ս քու ինքնութիւնդ դտած ես • Ի՞նչ միջոցաւ հասած ես : Ինչպէ՞ս կրցած են ըլլալ այսքան անհաւատարի, յանդուգն, անիմաստ, տարօրինակ, աւելորդ, հոյակապ, անօգուտ, հրաշալի եւ սաստիկ ջրայնացնող :

Ո՛հ, ճիշտն ըսելու համար, շատ դիւրին եղաւ : Յանկարծ աչքերս բացի, շուրջս նայեցայ եւ ամբողջ աշխարհը դոյութիւն ունենալ սկսաւ երբ աչքերս բացի • ահաւաստիկ — եւ մարդկային ամբողջ ցեղը նոյն ձեւով սկսաւ : Երբեմն կը զզջամ ըրած ըլլալուս • դուք ո՞չ :

Ծառի մը վրայ մագլցած էի Ֆրէզնոյի ամէնէն աղքատ թաղին պատկանող շատ հին տուներէն մէկուն կոնակի պարտէզին մէջ, Միացեալ Նահանգներու արդարացիօրէն հպարտ եւ հոյակապ նահանգին՝ Քալիֆորնիայի մէջ, 1911 մայիսին • Ես երկու տարու եւ ինը ամսու մարդ մը : Եւ ահա վար իջած ատենս բոպիկ ոտքերով կոտրած դարեջուրի շիշի կտորի մը վրայ կոխեցի եւ վիրաւորուեցայ :

Եւ սկսայ անիծել այս աշխարհը որ պատասխանատու էր եղածին : Արիւնոտ ոտքս ձեռքերուս մէջ, սկսայ պոռալ՝ բերանս լայն բացած : Արգարին կամ մեղապարտին բողոքի կանչը, ամէն պարագային մին կամ միւսը : Ինչո՞ւ ալլպիսի բան մը, ի՞նչ պատճառաւ : Պատճառ մը չկայ որ ոտքս կտրեմ ծառի մը վրայ մագլցած ըլլալուս համար :

Այս բոլորը թերեւս հրապուրիչ է, այս չէ սակայն պատճառը

գրագէտ մը եղած ըլլալուս, թէեւ արդեւք մըն ալ չէր: Կը թուի թէ բան մը չէ կրցած արդեւք ըլլալ:

Նոյն տարւոյն յունիսին հայրս զոր հազիւ կը ճանչնայի, մեռաւ: Բայց բոլոր հայրերը կը մեռնին օր մը չէ օր մը, իմինիս մահը չէր որ ստիպեց զիս գիրերը, յետոյ բառերը կաղմեւ, յետոյ փնտուել լեզուին գործածութիւնը, ամէնուն պէս խօսելու կամ գրելու համար: Մասնաւոր պատճառ մը չունեցայ գրելու:

Բան մը անմոռանալի եւ հզօր ազդեցութիւն մը ունեցաւ, բան մը զոր պատմելը կը պարտիմ ճշմարտութեան եւ Ֆրանսայի եւ այդ բանն է որ որոշեցի պատմել քիչ առաջ, զորք մը կատարած ըլլալու տարտամ յոյսով: Թերեւս պատմուածք մը, կամ բան մը որ պատմուածքի նմանի, նայինք ի՞նչ դուրս պիտի գայ եթէ վերջին բառը գրեմ:

Շատ կարգացած էի բայց ըստ բախտի եւ անկէ ի վեր մեթոտ չեմ փոխած, բայց գրեթէ ինչ որ կարգացած էի մեռեալ թուած էր ինծի, ինծի անյարմար, իբր ընթերցող, կամ ալ իբր գրագէտ:

Գիպուածաւ պատմուածքներու հատընտիր հատորի մը վրայ ինկայ, թերեւս ալ նոյն գորողին բոլոր գործերուն հաւաքածոն էր: Չեմ գիտեր, բայց պատմութիւնը զոր դտայ «Լա Գլօշ» կը կոչուէր եւ հեղինակն էր Կի տը Մոփասան:

Շատ ուշադրութեամբ կարդացի պատմութիւնը, առաջինէն մինչեւ վերջին բառը: Այս պատմութիւնը տակն ու վրայ ըրաւ զիս:

Գիւժ մնաց ամբողջ աշխարհին պիտի պոռայի. «Գտայ դայն, ինքզինքս գտայ, գրագէտը գտայ: Ես եմ գրագէտը: Գրելու կերպը գտայ, ասկէ ետք եւ ընդմիջտ իմ գրելու կերպս պիտի ըլլայ այս»:

Ինչ որ կ'ուզեմ ըսել ան է թէ՛ այս վայրկեանը այն մեծ վայրկեաններէն մին է զոր ամէն մարդ կը ճանչնայ: Վայրկեան մը որ ամէն ինչ կը բեղմնաւորէ, որ լեցուն է կորովով, իմաստութեամբ, ցաւով, խինդով, խոր վիշտով, արդարացի սրտմտութեամբ, ահարկու խոնարհութեամբ. խելացնոր մեծամտութիւն կամ ամբարտաւանութիւն. ապուշ դարձած էի, գիւնով:

Կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով անմահ էի: Գտած էի ինչ որ կը փնտուէի եւ ոչինչ կրնար զիս անջատել իրմէ: Գիտէի ով էի. լաւազոյն բան մը չէր կրնար պատահիլ: Այս բոլորը գութով լեցուց զիս տառապողներուն եւ ճախողածներուն հանդէպ:

Բայց գանք բո՛ւն պատմուածքին որ «Լա Գլօշ» կը կոչուէր: Անգամ մը միայն կարդացի դայն ո՛չ թէ երկու, բայց բա՛ն մը որ նրպատեց ես ինքս գառնալու, ամբողջական, կենդանի, անկորնչելի այս պատմութիւնն է:

Գլօշ կը կոչէին զինքը, որովհետեւ ատենին կորսնցուցած էր իր քրկու սրունքները եւ հիմա ծերունի մըն էր, ծեր **Fonds A.R.A.M**

իրմէ մնացած մասը անթացուպերուն միջեւ տրորելէն կը յառաջանար, մէկ տեղէն միւսը երթալով պատառ մը չոր հացի, քանի մը սուրի, կամ պատսպարուելու համար կոպտութեան, հեգնանքի, դէշ վերաբերմունքի, ծեծի եւ առ հասարակ անդթութեան դէմ:

Ո՛չ ազգական ունէր, ո՛չ բարեկամ այս աշխարհի վրայ, թերեւս ունէր միմիայն երկինքը եւ ծառերը, դաշտերն ու գետակները:

Մարդու գէշութիւն չէր ընէր, բայց օրին մէկը յուսահատ, անօթի, փորձեց ազարակապանէ մը վառեակ մը գողնալ:

Ինչ որ ալ ըլլայ չյաջողեցաւ: Այդ բանը արգելք չեղաւ որ ազարակապանը զինքը չարաչար ծեծելէ ետք նետէ փոսի մը խորը: Անշարժ, սովահար, ծարաւ, վիրաւոր, լքուած մարդոցմէ եւ աստուծմէ, ամբողջ գիշեր մը մնաց փոսին մէջ կէս մեռեալ եւ միայն յաջորդ առաւօտուն էր որ պահակները գտան զինքը հոն, անշուշտ ազարակապանը կանխաւ լուր տուած էր: Պահակներն ալ ազարակապանէն աւելի բարութեամբ չվարուեցան հետը: Կոպտութեամբ տարուեցաւ զարչահոտ բանտ մը եւ գլորուեցաւ խոնաւ գետնին վրայ, վեր ելլելու անկարող, եւ հոն մոռցան զինքը:

Երբ ոստիկանները ետ եկան, մեռած էր:

Այս է բոլորը. պատմութիւնը այս էր:

Ինչո՞ւ Մովսսան գրած էր զայն: Եւ ինչո՞ւ պարզ իրադարձութիւններով այսքան պարզ պատմութիւն մը ունէր այսպիսի զօրութիւն մը: Ինչո՞ւ շիտակ սրտիդ կ'երթար, գլխուդ, մտքիդ, այսքան ուժեղ կերպով: Այս հարցումները թերեւս պատասխաններ ունէին, բայց ես դեռ չէի գիտեր զանոնք: Միակ բանը որ գիտէի, այն էր որ «Գլօշ»ը պատմուածք մըն էր զոր կրնայի գրած ըլլալ եւ այն ձեւով որ պիտի գրէի ի մօտոյ, ոչ թէ Փրանսացի հերոսներով, այլ Քալիֆորնիայի մարդոցմով:

Որովհետեւ շատ բան տեսած էի տարիներու ընթացքին Փրէզնոյի փողոցներուն մէջ եւ ես կրնայի տեսնել ինչպէս ինքը կը գրէր: Մինչեւ հիմա կրցած էի ըլլալ միմիայն ականատես մը յուզուած՝ առանց փորձելու տեսածին «ինչո՞ւ»ն հասկնալ:

Եւ չէի կրնար հասկնալ:

Այսուհետեւ գիտէի թէ ինչ պիտի ըլլար իմ գործս, թուղթին յանձնել ինչ որ կը տեսնէի եւ ընթերցողին թողուլ եզրակացնելու հոգը:

Համայն տիեզերքը Փրէզնոյի փողոցներուն մէջ էր. մարդկութիւնը ամբողջութեամբ:

Եւ գրադէտ մըն էի, այդ էր ինձի սպասող գործը:

Թող հոգերոյժները հետաքրքրուին այս բանով, եթէ հաճելի է իրենց:

Պարզ պատահա՞ր մը :

Ուրիշ պատմուածք մը, ուրիշ գրադէտի մը կողմէ, կեանքիս այս որոշ շրջանին կարգացուած, նոյն արդիւնքը կրնա՞ր ունենալ :

Կարելի է, բայց եղածը այն է որ ուրիշ մը չէր, այլ այս էր եւ բնաւ չեմ դադրած այս մասին հպարտանալէ :

Սկսայ կարդալ Մովսասնի բոլոր միւս պատմուածքները. մէկը միւսէն լաւ էր :

Ընդ միշտ կենդանի էր ինք, հայրս էր, եղբայրս էր, զաւակս էր, բարեկամս էր :

Ձէին կրնար զինքը մեռցնել :

Բազմաթիւ գրադէտներ եւ քննադատներ կ'ըսեն այսօր որ համեստ տաղանդ մը միայն ունէր. շատ նեղ, շատ սահմանափակ, բայց ձգեցէք որ ըսեն, կարեւորութիւն չունի :

Կ'ըսեն թէ իրենց երիտասարդ օրերուն գրեթէ մեծ գրադէտի մը կարգ պիտի անցընէին զինքը, բայց իր գործը չզիմացաւ ժամանակի փորձութեան, որ շատ անհաւասար գրադէտ մըն էր, այնքան անվստահելի որքան բախտախաղ մը : Մէկ լաւ պատմուածք տասը գէշի դէմ : Մէկ մեծ պատմուածք հարիւր հատ շահեկանութենէ գուրկի փոխարէն, կ'ըսեն թէ տողերը կ'երկարէր դրամի փոխարէն, կարճ կապելով, շուտ գրելով, Ծլօպէռի արժէքաւոր խորհուրդները մոռնալով :

Կ'ըսեն որ միայն մարմին մը, զգայարանք մը, առանց հոգիի կենդանի մըն էր, յաճախ կոշտ ու գոեհիկ, անզգայ եւ անխելք : Թողէք որ ըսեն :

Թերեւս իրաւունք ունին, բայց ոչ եղած միջոցին իրապէս կենդանի էր եւ այդ կեանքը գոյութիւն ունի իր բոլոր գրուածքներուն մէջ, ամէնէն մեծէն մինչեւ ամէնէն անկատարին մէջ :

Պատմուածքներէն ամէնէն անարժէքը ունէր իր մէջ այդ կեանքը. կենդանի ըլլալու իրականութիւնը, ահուելի բացատրութիւն մը որ ըսել ուզածս բոլորովին չի թարգմաներ :

Ինչ որ կը գրէ՝ կը յնչէ, եւ աւելին՝ կը տառապի, խորապէս, անմխիթարելիօրէն, հակառակ իր անտարբերութեան դիմակին : Իր գրելու եղանակն էր, ի՛ր ոճը :

Միակ վեհանձն մարդը, սիրաղեղ, կենդանի եւ անդամալոյծ, որ մեռաւ յիմարանոցի մը մէջ :

Լաւ, հիմա խօսքը մէջերնիս, ինչպէ՞ս գրադէտ դարձար :

Ահաւաստիկ, ո՛հ, չեմ գիտեր, միայն Աստուած գիտէ, ան ալ բան մը չըսեր, ըստ սովորութեան :

Վ. Ս.

ՊԱՐԸ

Փ

ՇՐԵՆՈՎ, բոլոր արդեւքները եւ նուաճելով ամէն գաղափարային հակամարտութիւն, պարը հետզհետէ կը դառնայ լուսաւոր արուեստ մը, եւ իր ճառագայթումը այնքան հզօր է այս պահուն, որ մեր աչքերը կը փակուին ու չեն կրնար տեսնել իր կատարելութեան սահմանները: Եթէ մեր գիտելու կարողութիւնները այնչափ են յաճախ եւ տրամադիր խորանալու մաքի շօշափելի վիճակներու մէջ, կը մնան սակայն վարանոտ գեղեցկութեան արտասովոր երեւոյթներուն առջեւ, ու կը փնտռեն անոնց արտաքին փայլը միայն եւ պատահական խանդավառութիւնը, որ կը ստեղծուի անկէ: Մենք կ'ըմբռնենք քերթողութիւնը, նկարչութիւնն ու նուագները, կը մերժենք մօտենալ ու նաեւ հաղորդակցիլ պարին՝ որ այդ ամէնուն համադրութիւնն է, եւ կը բերէ անոնց անարտայայտ մասերը, ինչ որ բանաստեղծութիւնը վարանեցաւ ըսելու, ինչ որ լուծուին է երաժշտութեան եւ պատկերներուն անբարբառ գոյները:

Մեր իմացականութեան անապատին մէջ, մեզի համար անակնկալներ պէտք են միշտ: Հարկ է որ արեւը գիշերները ծագի, եւ ցերեկը ապրինք տարտամ լոյսնալոյսին մէջ: Քանի որ կը տառապինք ինքնատուութեան յազթանակին համար, պէտք է որ փոխենք նոյնիսկ արուեստի կլիման, եւ նոր երկինք մը խոստանանք մեր մտքի տիեզերքին: Պարն է որ կ'ընծայէ առաջին այս յուզումը եւ կ'ըլլայ այն գերբնական յղացումը՝ որ միշտ հողի կը վերածէ մարդկային մարմինը: Արագ՝ լոյսին չափ, եւ ձայնին ու մտածումին նման ինքնաբուր, ան փայլակներու պէս կուտայ մեր ենթագիտակից կեանքին բոլոր ցոլքերը, եւ միակն է որ իբր կչոռոյթ կը ներկայացնէ մեր հողին անտեսանելի շարժումները, անոր մթութիւնն ու աստղերը եւ գիշերային խաղաղութիւնը:

Մենք միշտ կ'ապրինք ձեւերու աշխարհի մը մէջ, որ կը բխի մեզմէ բայց անըմբռնելի կը մնայ, եւ որուն կը ձգտինք միանալ արուեստի միջոցներով: Մարդն իսկ ձեւերու ամբողջութիւն մըն է, ծփուն եւ մշտահոս ձեւերու, որոնք իր անհատականութեան հայելին կը կազմեն եւ զայն իր կեանքին մէջ կը կրկնեն ամէն պահ: Ինծի կը թուի թէ մենք կը կրենք ներքին պար մը մեր մէջ, որ դժագրութիւնն է ապահովաբար մեր բոլոր կիրքերուն, զազափարնե՝ բուն եւ զգացական ժայթքումներուն, եւ կը մարմնաւորէ անոնց աննիւթական ճարտարապետութիւնը եւ խորհրդաւոր քանդակները: Թերեւս պար մըն է նաեւ հոգին, իր անմեկնելի դալարումնե՝ բով եւ մոզական հոսումներով, իր մեծ դաշնակութեամբ, սաւառնումներով եւ գլխապտոյտ անկումներով, այդ թարմ եւ թրթռացող հոգին՝ որ բխած է մեր մէջ, ինչպէս գիշերուան խորէն հանդիսաւոր ցայտաղբիւր մը:

Ան որ պիտի պարէ, պիտի համարձակի անձնաւորել այս ներքին ձեւերը եւ անոնց մշտափոփոխ նկարչութիւնը, լուսաւորելով մեր էութիւնը բեմին վրայ եւ բերելով անոր ամբողջական տեսարանները, իբր երազային իրականութիւն, իբր քնարերգութիւն եւ մեղեգի: Ան պիտի տայ մեր մէջ պատրաստուած մեհենական կեանքը եւ անկէ ծնող զոհագործութեան ոգին, խունկի եւ լոյսի այն ժամերը՝ ուր մեր հոգին կը ծնրադրէ երկիւղածօրէն, ու նաեւ անոր հեթանոս աղօթքը, որով կը հեծեծէ իր մեղքերուն եւ արցունքներուն աղբիւրին առջեւ: Պարը մեզ կը լեցնէ ներողութեամբ, անդորրութեամբ եւ վերազարձող յիշատակներով: Ոչինչ այնքան մեզ կը խռովէ, որքան պարը որ կ'ողեկոչէ մեր անցեալը, իր տրտում խաղաղութեամբ եւ մեռած գեղեցկութիւնով, ճիշդ այնպէս ինչպէս զայն թողուցինք օր մը հեռաւոր արահետներու վրայ կամ լռին ծառուղիներու խորը, եւ այս ողեկոչումը այնքան տարօրինակ է երբեմն որ պարին մէջ մեր ապագան կը տեսնենք անցեալին հետ նոյնացած:

Այս արուեստն է որ մեզ կը տանի տակաւին մերկութեան հրաշքներուն, որոնք համազօր են կարծես հերոսութեան, քանի որ կ'իրագործեն աշխարհի մեծագոյն խիզախութիւնը, այո՞նքն նետել քօղերը եւ մերկանալ գիտնալ: Այդտեղ մարմինը կը հասնի ստեղծագործութեան լրումին, որովհետեւ խորհուրդներ կ'արտայայտէ մտքին կամ սրտին փոխարէն, բայց կը յաջողի գերազանցել զանոնք, ու իր նիւթականութենէն փրկուելու համար կ'ըլլայ բացարձակապէս հոլանի եւ իր այդ անշօշափելի մերկութիւնովը կը բարձրանայ առասպելային յաղթանակներու: Իսկապէս գիւցագնական է այն պարուհին, որ իր

մարմինը կը խլէ շղարչներէն եւ զայն կը յանձնէ երաժշտական ծը-
փանքներու, եւ որուն միտը այդ բոպէին՝ ամբողջ զազափար եւ զգայ-
նութիւն է միայն: Մենք կը սիրահարինք այն հոգիին՝ որ այդ կնոջ
մերկութիւնն իսկ է, եւ կը հոսի անոր վարսերուն հետ, կը փայլատա-
կէ աչքերուն խորը ու կ'երկարի մինչեւ իր մատներուն ծայրերը:

Եթէ պարը կ'ընծայէ մեզի այն շքեղութիւնները զորս մեր ետին
թողուցինք, կը խոստանայ նաեւ մեր վաղուան կեանքը եւ մեզ կը փո-
խադրէ անոր անհաւատալի տեսիլներուն մէջ: Ան մեկնում մըն է դէ-
պի ճակատագիրը, դէպի հրաժեշտի ճամբան, որ մեզ պիտի բաժնէ
մեր էութենէն եւ պիտի տանի անստոյգ իրականութեան: Մայրամու-
տի ժամ մըն է ան, ուր պիտի նստինք այն նաւը որ կը սպասէ մեզի
եւ պիտի երթանք անձանօթ ափունք մը, մինչ երեկոն պիտի մարի
եւ պիտի լսենք միայն ալիքներուն յաւիտենական մրմունջը: Ան մեկ-
նում մըն է նաեւ դէպի մահը, որ մեզ կը դնէ գերեզմանային աշ-
խարհի մը մէջ եւ լոյսերով կ'ողողէ զայն, ու մենք զայն կը դիտենք
երկինքի մը նման: Մենք ողջ ենք կատարելապէս այդ պահուն, բայց
կը հանգչինք դազաղի մը մէջ, ուրկէ ներկայ կ'ըլլանք մեր իսկ յու-
ղարկաւորութեան, մինչ ձայներ, աղօթքներ, մեռելական նուագ-
ներ կը բարձրանան մեր շուրջը, արցունքներ կը հոսին մեր բացակայ
գոյութեան վրայ, եւ մենք զաղտնաբար կը լսենք զանոնք դազաղին
խորէն:

Ան որ պիտի պարէ, պիտի ներկայացնէ սէրը եւ մահը, այն տիե-
զերական կիրքերը՝ որ կը ծագին անոնցմէ: Ոչ մէկ քրմուհի այնքան
բարձր է իր երազին մէջ, որքան այն կինը որ կը մեռնի պարելով:
Ան պիտի փշրէ մարմարին վրայ իր գոհարներն ու մանեակը եւ պիտի
պարէ մահուան համար, յանձնուելով տակաւ դաշնակաւոր նաւարե-
կութեան մը, եւ անձնատուր երաժշտութեան՝ որ զինքը համբոյրով
մը սպաննեց: Այդ պարուհին պիտի մեռնի լուսնային շղարչի մը մէջ,
զալարելով բազուկները եւ փշրելով իրանը, կանչելով կեանքը իր
նուաղուն վայելքներուն հետ, սիրոյ գիշերը կամ բաժանումի առա-
ւօտը, ու ծովը որ զինքը պիտի պահէ իր մեզմ թեւերուն մէջ: Ան պի-
տի սրբէ տակաւին խելայեղ, ծամերուն լոյսը թափելով ծոծրակին
վրայ, եւ պիտի գրկէ վերջապէս Բանաստեղծութիւնը՝ որ իր մահա-
մերձ մարմինը կը գրկէ: Յետոյ պիտի իյնայ, ձեռքերը միացուցած
սրտին վրայ ու դեռ դողահար իր անսահման սարսուռէն, եւ իր աս-
տեղային ձեւը պիտի փախչի տակաւ ու պիտի լուծուի միջոցին մէջ:

Հարկ է որ գրականութիւնը նմանի պարին եւ ըլլայ անոր պէս
ձփուն բայց իրական, խուսափուէ բայց անկեղծելի, եւ այսպէս ար-

տայայտէ մեր իմացականութեան բոլոր գրգիռները: Մեր բառերը պէտք է հագնին անոր կշռոյթը եւ գիտնան թռչտիլ ու ցոլցլալ, եւ այս կերպով միայն պատկերացնել մեր մտքի կացութիւններուն եւ զգացողութեանց անվերջնալի փոփոխութիւնները: Գրագէտը հարկադրուած է ստեղծել ամբողջովին պարագնաց արձակ մը եւ քերթողութիւն մը, եւ ոճ մը՝ որ կարենայ ժայթքիլ ու սլանալ ամէն յուզումի եւ մտածումի հետ, նետել անոնց շրջագիծը եւ անհետանալ իսկոյն:

Պարը կուսութիւնն է արուեստին եւ անոր մեծագոյն անկեղծութիւնը, որով կը մերկացնէ ամէն գաղտնիք՝ զոր խօսքերն ու նկարները կը մերժեն քօղագերծել, բայց կը պահէ նաեւ ամէն սրբութիւն: Ան միշտ իմաստութիւն է եւ հոգեկան աշխատանք, ու կը նուիրագործէ գեղագիտութեան գերակշռութիւնը նիւթին վրայ:

Եթէ համարձակինք աւելի խիզախ նայիլ իրեն, ան կը բերէ նոյնիսկ գերմարդկային խորհուրդներ եւ կ'առաջնորդէ մեր թեւաւոր էութիւնը, ու մենք կը լսենք այլեւս անբաւութեան ճայնը եւ կը զգանք անհունին առջեւ աստուածային առանձնութիւնը:

Ե . Ս .



Ն Ի Ք Ո Ս Ք Ա Ջ Ա Ն Ծ Ա Ք Ի

Ա

ՐԴԻ Համաշխարհային գրականութեան տիրական ղէմքերէն մէկն է Նիքոս Քաղանծաքի :

Միջազգային համբաւի տիրացաւ, իր մահէն քանի մը տարի առաջ միայն, հակառակ յիսուն տարիներու վրայ տարածուող իր հրակայ գրական վաստակին :

Ճակատագիրը բոլոր անոնց, որոնք պզտիկ ժողովուրդի մը կը պատկանին :

Կասկած չկայ որ տարբեր պիտի ըլլար ան, եթէ բազմամիլիոն ժողովուրդի մը մէջ ծնած ըլլար : Այստեղ խօսքը չի վերաբերիր, ի հարկէ, գործին բուն արժէքին մասին : Աւելի ճիշտը, էականը այդ արժէքն է : Մնացածը ժամանակի խնդիր է :

Անկտրոնչելի է արուեստի գործը, ուր ալ ծաղկած ըլլայ ան, որքան ալ ծածկուած մնայ, մոռացութեան նկուղներուն մէջ թէ քիչերու կողմէ խօսուած անմատչելի լեզուի մը պատուարներուն ետին :

Լաւազոյն օրինակը մեր հանճարեղ Նարեկացին է :

Քաղանծաքի պարագային մէջ դեր ունի նաեւ ուրիշ ազգակ մը, որ յատուկ է մեր ժամանակներուն : Քաղանծաքի բանաստեղծ է ամէն բանէ առաջ, ու թերեւս, ամէն բանէ վեր :

Քառասուն տարի իբր այդ ճանչցուած էր : Ու այն ալ, շատ նեղ շրջանակի մը մէջ : Իր կեանքին վերջին շրջանին միայն ան եկաւ վէպին եւ իրարու ետեւէ արտագրեց մէկը միւսէն ինքնատիպ եւ զգայացունց գործեր :

Անոնցմէ մէկը՝ «Յիսուս վերստին խաչուած», վերածուեցաւ շարժանկարի : Այդ կը բաւէր արդէն, որ մէկ օրէն միւսը, աշխարհ յանկարծ ճանչնար յոյն մեծ գրողը :

Նոյնն է պարագան «Տոքթ. Ժիվակոյ»ի հեղինակ՝ Պորիս Փաթերնաքի համար : Ան ալ բանաստեղծ էր ամէն բանէ առաջ, բարց իր վէպով հասաւ միջազգային հռչակի : Ստացաւ Նոպելեան մրցանակը :

Այդ նոյն տարիներուն շատ խօսուեցաւ Քաղանծաքիի մասին, իբրեւ Նոպելեան Վաւանական մրցանակաւոր: Բայց հակառակ շատերու սպասումին՝ Փրանսացի Ալպէր Քամիւն չահեցաւ դափնին: Ու դարձեալ, հակառակ այն անխառն հիացումին, զոր կը վայելէր այս վերջինը, շատ մը Փրանսացի ականաւոր դէմքեր գտնուեցան, որոնք յայտարարեցին թէ Քամիւն դեռ կրնար սպասել: Քառասուն եւ չորս տարեկան էր ան, մինչ Քաղանծաքի եօթանասունը անց եւ ծանր հիւանդ մտնաւանդ: Գտնուեցան նոյնիսկ դրական թերթեր, որոնք յայտարարեցին թէ յոյն գրողը արժանաւորագոյն թեկնածուն էր: «Քայիէ տը Սիւտ»ը աւելի առաջ երթալով՝ գրեց բացէ ի բաց. «Նոպելեան կաճառը շատ բան կորսնցուց իր պարզեւը Քաղանծաքիին չտալով, Քաղանծաքի՝ ոչի՛նչ»: (*)

Այս մոռացումին կամ զանցառումին մէջ շատ մը պարագաներ բացասական դեր խաղացին, որոնք որեւէ կապ չունին Գրականութեան հետ: Ա՛յնքան աւելի ցաւալի այս մոռացումը, որ ժամանակ չեղաւ զայն սրբազրելու: Քանի մը ամիս չանցած, տասը տարի պայքարելէ ետք անողոք եւ անբուժելի հիւանդութեան մը դէմ, Քաղանծաքի իր աչքերը կը փակէր, իր սիրելի հայրենիքէն հեռու, կէս մը աքսորական, Նիսի մօտիկ, փոքրիկ նաւահանգիստի մը մէկ համեստ տանը մէջ, 1957ին:

Այս ամառ, Սէր-ձոն Փերս, անցեալ տարուան մրցանակաւորը, ինծի պատմեց հետեւեալը, իմ մէկ հարցումիս իբր պատասխան.

«Սթոքհոլմի կաճառի անդամներէն շատեր խորապէս կը ցաւին, որ զանազան պատճառներով, չեն կրցած պսակել քանի մը իտալացի մեծարժէք գրողներ: Անոնցմէ երեքը մանաւանդ, աւելցուց Սէն-ձոն Փերս, խոր զղջումի առարկայ են, Լեոն Տոլստոյ, Փօլ Վալերի եւ Նիքոս Քաղանծաքի:»

Մեր մեծանուն բարեկամը ըսաւ նաեւ, չարաճճի ծիծաղով մը, «որ Նոպելեան կաճառը կը զղջար նաեւ, այս անգամ, պարզեւատրած ըլլալուն համար ուրիշ մէկ քանիներ...»:

Այս վերջիններուն անունները չուզեց տալ, հասկնալի պատճառներով:

Վերադառնալով Քաղանծաքիին, ըսենք որ ամէնէն եղբրականը, ու նաեւ ամէնէն հիանալին ա՛յն է, որ ան գրեց իր գործերէն քանի մը լաւագոյնները, երբ իր մարմինը արդէն կը գալարուէր մահուան ճիրաններուն մէջ: Իր կեանքի վերջին տասը տարիները եղան ամեհի ու դիւցազնական պայքար մը՝ մահուան եւ իր ըսելիքները չաւար-

*) Այսպէս ըսողները չէին կրնար գիտնալ թէ Քամիւն ալ կը սպասէր ԱՆ, որ պիտի զգտնուէր Քաղանծաքիին:

տած՝ անդուսպ, անյագուրդ, դեռ կեանքի ծարաւի, անօրինակ արուեստագէտի մը միջեւ :

Եւ այս միակ գիծը չէ, որ կը միացնէ զինք ուրիշ մեծ արուեստագէտի մը, չարչարակոծ եւ խռովայոյց մեծ նկարիչին՝ Էլ Կրեֆոյի: Անոնք երկուքն ալ կուզան երկրէ մը, ուր մարդիկ մշտապէս մենամարտած են Տիտան-ցուլին հետ գիրկընդխառն...: Ամեհի աստուածներու զիցաբանական կղզին, ու նաեւ, նոր ժամանակներու մէջ նոյնքան առասպելական զիւցազնամարտերու թատերաբեմ՝ խրոխտ Կրետէն:

Քաղանծաքիի մտերիմները կը վկայեն թէ իր հիւանդութեան վերջին տասը տարիներուն, ան տասը անգամ գրե՛թէ մեռած ու ոտքի կանգնած է կրկին, կամքի անօրինակ թափով մը:

— «Տա՛ւը տարի եւս, տա՛ւը տարի եւս, որպէսզի կարենամ աւարտել ըսելիքներս, կը բացազանչէր ամէն անգամ, իր մօտ փութացող բժիշկներուն: Եւ անոնք բոլորը, մինչեւ այսօր ալ դեռ կը զարմանան թէ ի՛նչպէս կրցաւ ապրիլ այդ մարդը, ամբողջ տասը տարի, այդ անողոք եւ աններող հիւանդութեան ենթակայ: «Կապոյտ հիւանդութիւն» ունի եղեր Քաղանծաքի, արեան խլիրդ:

Իր նկարագրած զիւցազուներուն անօրինակ մետաղէն էր ձուլուած հաւանաբար այս հուժկու Կրետացին, Քալիքթան Միշելի կամ Ալեքսի Զորպայի մետաղէն:

Իր մահուան սնարին փութացած է, իր վրայ ամէնէն շատ հիացող եւ համաշխարհային անուն ունեցող մարդասէր բժիշկը՝ Ալպեր Շըւայցեր:

— «Մի՛ վախնաք, պիտի յաղթեմ... ա՛յս անգամ ալ պիտի յաղթեմ, ժպտած է Քաղանծաքի, մի՛ վախնաք, չէ՞ք գիտեր որ անմահ են բանաստեղծները...»:

Ու աւելի մեղմ, հազիւ լսելի ձայնով մը աւելցուցեր է.

— ... Կամ ալ՝ գրեթէ անմահ...

Ասոնք եղած են իր վերջին բառերը:

Իրաւունք ունէր, ի հարկէ, Քաղանծաքի:

Անմահ են բանաստեղծները: Իրական բանաստեղծները: Շատ հաւանաբար անոնցմէ մէկն ալ ի՛նք: Աւա՛ղ, չենք ճանչնար անոր քերթողական վաստակը: Մինչեւ այսօր ոչինչ թարգմանուած է անկէ Փրանսերէնի: Իր գլուխ-գործոցը նկատուած՝ «Ողիսակալն»ը անցեալ տարի թարգմանուեցաւ անգլիերէնի, Ամերիկայի մէջ: Զայն չեմ տեսած, դոնէ մօտաւոր դադափար մը կազմելու համար: Գրադատական յօդուած մը տեսայ, միշտ անգլիերէն վերոյիշեալ թարգմանութեան առթիւ:

Անգլիացի քննադատը կը հաւաստիացնէ մեզի թէ Քաղանծաքի, եթէ երբեք մի' միայն «Ուղիսահան»ը դրած ըլլար, արժանի էր մեծա-
դոյններու կարգին դասուելու :

Դիւրաւ կը հաւատանք :

Այն ինչ որ կարդացած ենք իրմէ, — տասնեակ մը հատոր ար-
ձակ — լայնօրէն կը բաւէ համոզուելու համար, որ կը գտնուինք բա-
ցառիկ խառնուածքով արուեստագէտի մը դիմաց : Շատ մեծ գրա-
դէտի մը դիմաց : Այդ մեծութիւնը կուզայ նաեւ անկեղծութենէ մը
որ անմիջապէս ձեզ կը գերէ : Կը գրաւէ ձեզ ամբողջովին : Քաղան-
ծաքի իւրաքանչիւր գործը խորապէս ապրուած է, ներքին պայքարէ
մը ծնած : Անոնցմէ ոմանք գրուած են իր արիւնով : Մանաւանդ վէ-
պերը : Անոնցմէ իւրաքանչիւրը ներքին բղբառում մըն է : Ուրկէ՞ մտա-
ծումներու եւ զգացումներու այս ուժգնութիւնը, կիրքը : Բայց մարդ-
կային այնպիսի ճշմարտութեամբ մը, որ անմիջապէս կը նոյնանաք
հոն գործող անձերուն հետ ու կ'ընտելանաք նկարագրուած միջավայ-
րին, իրբեւ թէ հոն ապրած ըլլայիք :

Յաճախ կը հասնի այնպիսի գեղեցկութիւններու, մարդկայնա-
կան այնպիսի խորութեանց, որ դուք ձեզի կը հարցնէք թէ արդեօք
կարդացած էք անկէ առաջ աւելի հմայիչ պատմութիւն մը :

Հրաշալի խառնուրդ մը Միքընսի եւ Տոսթոյեւսքիի : Առաջինին
պատմելու հմայքը, երկրորդին անչափելի խորութիւնը :

Երկու տարի առաջ այդ վէպերէն հմայուած՝ առաջարկեցի Լիւք-
Անտրէ Մարսէլին, որ կարդար դանոնք : Տասնըհինգ օր միասին էինք
եւ հայ բանաստեղծութիւն կը հոլովէինք օրն ի բուն : Կ'ուզէի գիտ-
նալ թէ արդեօք յոյն գրողէն ստացած այդ խոր տպաւորութիւնս ար-
դիւնք չէ՞ր իմ հայ ըլլալուս, անոր վէպերուն նիւթը աւելի մօտ ըլ-
լալով արեւելքցիի մը հոգիին : Երկու օր չէր անցած երբ ստացայ իր
պատասխանը, փոխ տուած երկու հատորներուս մասին. «Ալեքսի
Չորպա» եւ «Մահ կամ ազատութիւն» :

— Երկու հրաշալի գիշերներ անցուցի, ըսաւ Լիւք, քնաթաթախ,
բայց յայտնապէս երջանիկ : Ամէն մէկ վէպին ընթերցումը տեւեց
մէկ գիշեր, իրիկունքնէ մինչեւ արշալոյս : Թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին
համար պատահեցաւ նոյնը. երբ սկսայ՝ չկրցայ գոցել. ու երկու գի-
շեր, իրարու վրայ, փոխն ի փոխ լացի ու խնդացի : Քսան տարիէ ի
վեր այդպիսի բան չէր պատահած ինծի :

Ահա՛ ուրիշ կարծիք մը .

«Ո՛չ մէկ գրող զիս տպաւորած է աւելի խորունկ կերպով» :

Քաղանծաքի մասին այս դնահատանքը կը ստանայ բացառիկ
արժէք, երբ ըսեմ թէ Ալպէր Շըւլայցէրն է զայն արտալայտած, մէկը

մեր ժամանակի ամէնէն խորունկ միտքերէն, մեծանուն մարդասէր բժիշկ, գրագէտ ու երաժիշտ միանգամայն :

Արդարեւ, Քաղանծաքի ընթերցողներէն ո՛չ մէկը կրնայ անտարբեր մնալ անոր որեւէ մէկ գրուածքին հանդէպ : Նոյնիսկ անո՛նց հանդէպ, որոնք չեն ներկայացներ վէպերուն ձգտուած մթնոլորտը, աւելի հանգարտ գործեր են, ճամբու նօթեր, հանդիպումներ, նկարագրութիւններ, խորհրդածութիւններ : Որովհետեւ իր ամէն մէկ երկին մէջ ներկայ է անխոնջ պրպտողը, ինքնատիպ մտածողն ու եզակի արուեստագէտը : Նոյնիսկ երբ նոր բան մը չէ ըսածը, այնպիսի գեղեցիկ ձեւով կ'ըսէ, որ ուղղակի կը հմայուիք :

Գրական հսկայ գործ մը կը ձգէ Քաղանծաքի : Ան կ'ընդգրկէ գրեթէ բոլոր գրական սեռերը, բանաստեղծութիւն, թատերգութիւն, վէպ, մենագրութիւններ, փիլիսոփայական ուսումնասիրութիւններ, արուեստին նուիրուած ինքնատիպ վերլուծումներ, ճանապարհորդական նօթեր, քաղաքակրթութեան բոլոր հին ու նոր քառուղիներուն վրայ, ճարտնէն մինչեւ Ռուսիա, Անգլիայէն մինչեւ Եդիպտոս ու արաբական անապատը, Չինաստանէն Ֆրանսա, Սպանիա, ամբողջ Պալքանները, ու բնական է, Յունաստանը, ծայրէ իծայր, կղզիէ կղզի :

Ասոնց վրայ աւելցուցէք քանի մը երկարաչունչ, մեծարժէք թարգմանութիւններ, որոնք առանձինն կրնային կեանք մը լեցնել, եւ մօտաւոր գաղափար կ'ունենաք միջազգային գրականութեան այս նոր հսկային վրայ :

Այն բոլոր հարցերը, որոնք գրուած են քսաներորդ դարու մարդուն դիմաց, որոնք կը գրադեցնեն ու խոսվեն անոր հոգին, մեր բոլոր տազնապները, իրենց ամենասուր եւ միանգամայն ամենալայն պարագաներովն ու բնոյթովը, նիւթ ծառայած են Քաղանծաքի ստեղծագործութեան :

Մարդուն եւ Աստուծոյ, հայրենիքներու եւ մարդկութեան փոխյարաբերութիւնները. ազգերու եւ անհատներու ազատութեան խրնդիրը. մարմնի եւ հոգիի երկուութեան, ստեղծագործութեան, կեանքի ու մահուան առեղծուածները. հանրային նուիրումի եւ մենակեցութեան պարագան. ու վերջապէս մարդկային ճակատագիրը, մարդկային կեանքին իմաստն ու նպատակը :

Այս մէկը միւսէն բարդ խնդիրները Քաղանծաքի մեզի կը ներկայացնէ, երկար պրպտումներէ, ուսումնասիրութիւններէ եւ խորհրդածութիւններէ ետք : Ան իւրացուցած է ի՛նչ որ մարդկութիւնը ձեռք բերած է մինչեւ այսօր : Խորապէս ուսումնասիրած է յունական, եգիպտական, եբրայական, հնդկական եւ եւրոպական միւս քաղաքակրթութիւնները : Իրեն համար ա՛լ գաղտնիք չունին ո՛չ Պլատոնն ու

Սոկրատը, ո՛չ Պլուտոսն, ո՛չ Յիսուսը, ո՛չ Մոհամմէտը եւ ոչ ալ
 Լենինը: Պերկսոնը զոց զիտէ, ինչպէս նաեւ Նիցչէն, Տոստոյեւսքին,
 Թոլսթոյը, Տանթէն, Շէյքսպիրը, Կէօթէն, Մալարմէն: Կը ճանչնայ
 բոլոր մեծ երաժիշտներն ու նկարիչները:

Կարեւորը սակայն այդ համայնազիտական հմտութիւնը չէ, այլ
 այն ինքնատիպ, բոլորովին թարմ ու նոր տեսակէտներն են, զորս ան-
 կը բերէ այս կամ այն հարցի վերլուծման ընթացքին:

Իր բոլոր եզրակացութիւնները եզակի հանգամանք մը ունին,
 միշտ ինքնարուխ:



Նիքոս Քազանձաքի ծնած է 1885ին Քաւտիա, Կրետէ կղզիին
 վրայ, ինչպէս քսաներորդ դարու յունական միւս մեծ դէմքը՝
 Վեմիզիոս:

Յաճախած է Աթէնքի համալսարանը եւ վկայուած անկէ իբր
 փաստաբան: Աթէնքէն անցած է Փարիզ եւ աշակերտած Պերկսոնի,
 հետեւած անոր փիլիսոսփայական դասընթացքներուն, Սորպոն: Այդ
 շրջանէն սկսած է գրել: Իր երկու առաջին գործերը նուիրուած են
 մէկը Պերկսոնի, միւսը՝ Նիցչէի:

Իր դուրս-գործոցը կը նկատուի, ինչպէս ըսի, «Ուշիսական»ը, ո-
 րուն առաջին փոփոխակը գրուած է 1927ին: Հրատարակուած՝ տաս-
 նըմէկ տարի ետք, 1938ին, վեցերորդ եւ վերջին ձեւին մէջ: Քազան-
 ձաքի «Ուշիսական»ը Հոմերոսի դիւցազներգութեան շարունակու-
 թիւնն է: Քազանձաքի կը ս կսի անկէ՛, ուր ձգած է Հոմերոս իր հե-
 րոսը: Գրուած է չափածոյ եւ կը բաղկանայ երեսուններեք հազար
 տողէ...:

1927ին լոյս տեսած է արձակ գիրք մը, ծաւալով փոքր, բայց շատ
 կարեւոր՝ Քազանձաքիի գրականութիւնը հասկնալու համար:
 Չգնութիւն (Ascèse) կը կոչուի ան եւ եւ իրաւամբ տեսակ մը բանա-
 լին է անոր ստեղծագործական կալուածին: Աւելի երկար պիտի ան-
 գրադառնամ այս գործին, քիչ մը յետոյ:

Քազանձաքի գրած է թատերգութիւններ, որոնցմէ միայն եր-
 կուքը կարգացած եմ: որովհետեւ միայն երկուքն են թարգմանուած
 Փրանսերէնի: Թեդէ եւ Մեխիսա: Երկուքին ալ նիւթերը առնուած են
 կրեաական դիցարանութենէն: Բոլորովին նոր քեֆնիքով եւ նոր ըմ-

բռնումներով զրուած՝ աստուածներու եւ մարդոց պայքարն է, որ կը տեսնենք հոն :

Կարեւոր միւս գործերն են.— Օձը եւ Շուշանը, հորտակուած հոգիներ, Փափս եւ Պոնուի, վերջին փորձութիւնը, Ասիզի աղփատը, Միւսայի լեռնէն՝ վեցիւսի կողմէն, Թոռա-Պարա եւ Ժայռերու պարտէզը (այս երկու վերջինները զրուած ուղղակի Քրանսերէնով) . վերջնապէս իր երեք խոշոր վէպերը՝ Ալեքսի Զորպա, Յիսուս վերստին խաչուած, Մահ կամ ազատութիւն, որոնց նոյնպէս աւելի մանրամասն պիտի անդրադառնամ :

Յետ մահու լոյս տեսաւ (1961) «Նամակ առ էլ Կրեֆօ», որ կըրնայ համարուիլ իր գրական կտակը : Քաղանձաքի միշտ ալ նկատած է իր հայրենակիցը՝ սպանացի հանճարեղ նկարիչ էլ Կրեքոն, տեսակ մը իր հոգեւոր հայրը : Եւ իր այս վերջին գործը ձօնելով անոր, կը շեշտէ այդ խոր սրտակցութիւնը : Ահա՛, Քաղանձաքիին իսկ բառերով այս վերջին գործին խորագրին բացատրութիւնը .

«Միշտ, ամբողջ կեանքիս ընթացքին, բառ մը գիտ խոսոված է, վերեւը բարը : Այս վերելքն է որ կ'ուզեմ նկարագրել այստեղ, երեւակայութիւնն ու ճշմարտութիւնը խառնելով իրարու : Նկարագրել նաեւ այն կարմիր հետքերը, գորս ձգած եմ վերելքիս ընթացքին, իմ ետեւէս :

Կ'աղաղակեմ, դարձած դէպի անոր յիշատակին, կը հաւաքեմ կեանքս, հավերժութիւն մէջ ցիրուցան... ու ոտքի, ինչպէս գինուորը իր գորավարին դիմաց, հաշիւ կուտամ էլ Կրեֆոյին . որովհետեւ ան ալ, ինձի նման, թրծուած է կրետական այդ նոյն հողէն, ու ոեւէ մէկէն՝ աւելի, պայքարած ու դեռ պայքարող ոեւէ ըմբռնարտիկէ աւելի, ա'ն կրնայ գիտ հասկնալ : Զէ՞ որ ան ալ ձգած է իր ետին, նոյն կարմիր հետքը՝ փարերուն վրայ...» :

Բացի այս գուտ ստեղծագործական գործերէն, Քաղանձաքի արդէ յունարէնի թարգմանած է Տանթէի «Աստուածային Կատակերգութիւն»ը, ամբողջական եւ ոտանաւոր : Թարգմանած է նաեւ Կէօթէի «Փառուստ»ը, նոյնպէս տաղաչափուած : Ինչպէս նաեւ Նիցչէի «Այսպէս խօսեցաւ Զարդուստրան...» , արձակ :

Քաղանձաքի իր կեանքին մեծագոյն մասը անցուցած է երկրէ երկիր շրջագայելով եւ ստեղծագործելով :

1946ին մտաւ յունական քաղաքական կեանքին մէջ : Եղաւ նախագահ ընկերակարական կուսակցութեան, ատեն մը նոյնիսկ նախարար : 1947ին հրաժարեցաւ եւ քաջուեցաւ Ֆրանսա : Ժամանակ մը աշխատեցաւ Ինքնապաշտպան գրական բաժնին մէջ : Զախակողմեան հակումներ

ունեցած է, առանց ամբողջովին յարելու համայնավարութեան: Հետաքրքրական է իր տեսակցութիւնը Մաքսիմ Կորժիի հետ: Այս հրաբխային մարդը չէր կրնար որեւէ կուսակցութեան մէջ ապրիլ, ենթարկուիլ ուրիշի մը:

Իր կեանքին վերջին տասը տարիները ան անցուց Անթիպի ծովեզերեայ իր խուցին մէջ, ահեղ մենամարտի բռնուած մահուան հետ:



Քաղանձաքիի գործերուն անցնելէ առաջ, քանի մը խօսք ալ անոնց Փրանսերէն թարգմանութեանց մասին:

Յոյն հեղինակին գրեթէ բոլոր գիրքերը Փրանսերէնի թարգմանուած են խմբակաւ մեքստով, բացի անոնցմէ, զորս Քաղանձաքի գրած է ուղղակի Փրանսերէնով, ինչպէս յիշեցինք քիչ մը առաջ: Թարգմանիչ խումբը անհրաժեշտօրէն բաղկացած է յոյնէ մը եւ Փրանսացիէ մը:

Այս ձեւով տեղի կ'ունենան հիմա բոլոր մեծարժէք թարգմանութիւնները: Քաղանձաքիիները մասնաւորապէս յաջող են, հեղինակին իսկ կարծիքով, որ քաջահմուտ էր Փրանսերէնի: Ուրիշներու թարգմանածները շատ աւելի յաջող են, քան իր Փրանսերէն գրածները: Ի՞նչ կը նշանակէ այս:

Այս կը նշանակէ մօտաւորապէս, որ երկու լեզուներուն ալ լաւատեղեակ Քաղանձաքի նուազ յաջող թարգմանիչ մըն է, քան յոյնէ մը եւ Փրանսացիէ մը բաղկացած թարգմանիչներու խումբը:

Եւ դեռ խնդիրը արձակի մասին է, որուն թարգմանութիւնը անհամեմատօրէն աւելի դիւրին է քան բանաստեղծութեան:

Եւ ըսել թէ մեր մէջէն ոմանք կը շարունակեն դեռ ստորագնահատել Լիւք-Անտրէ Մարսէլի զմայլելի թարգմանութիւնները, որոնք բոլորն ալ կատարուած են վերոյիշեալ խմբակաւ մեթոտով: Մինչեւ այսօր սգիտօրէն դեռ կը պնդեն անոնք, որ մեր մշակոյթին սիրահարած եւ զայն խորապէս ըմբռնող ու ճաշակող Փրանսացին չի կրնար ընդունելի թարգմանիչ մը ըլլալ, պարզ ա՛յն պատճառով որ անտեղեակ է հայերէնին:

Ի՞նչ է անոնց ուզածը: Ի՞նչ կը նշանակեն այս քրթմնջիւնները, որոնք կ'արձակուին ատեն ատեն, ասկէ անկէ, հեռուէն մօտէն: Ու վերջ ի վերջոյ, ինչպէս ամէն աշխատանքի, ու նաեւ թարգմանութեան մը մէջ, արդիւնքը չէ՞ կարեւորը:

Այդ զմայլելի արդիւնքը մէջտեղն է:

Իրականութեան մէջ հայկական կողմի դործը շատ դիւրին է, մեղմ է ոեւէ մէկը կրնայ ընել այդ: Ատոր համար կը բաւէ քիչ մը հայերէն եւ քիչ մըն ալ Քրանսերէն գիտնալ ու սիրել նաեւ բանաստեղծութիւնը, քանի որ ան է խնդրոյ առարկան:

Լիւբ-Անտրէ Մարսէլի թարգմանութեանց յաջողութեան գաղտնիքը պէտք է փնտռել մի'միայն Լիւբ-Անտրէ Մարսէլի մէջ: Մեծատաղանդ եւ բազմատաղանդ արուեստագէտ մըն է մեր բարեկամը, ու ի'նչ որ ըրած է մինչեւ հիմա, կը կրէ այդ լուսաշող տաղանդին կնիքը:

Քանի մը նոր փորձեր եկան անգամ մը եւս փաստելու՝ ի'նչ որ գիտէինք եւ կը յայտնէինք տասը տարիէ ի վեր:

Հիւպէր Ժուէն թարգմանութիւններ ըրաւ, այստեղ, «Անդաստան»ի մէջ իսկ, եւ այլուր: Տաղանդաւոր Քրանսացի գրագէտ մըն է այս երիտասարդը, որուն օգնեց «Անդաստան»ի խմբագրութիւնը:

Անոր թարգմանութիւնները բացառիկ ոչինչ բերին սակայն: Ինչպէս բացառիկ ոչինչ բերած էին նախորդ, հայ եւ օտար թարգմանիչներու փորձերը:

Ուրիշ տաղանդաւոր բանաստեղծ մը, Ժընեւէն, որ ունէր նաեւ երկու լեզուներն ալ գիտնալու առաւելութիւնը, մեր բարեկամը՝ վահէ Կոտէլ, այլպէս յաջողելէ յետոյ վարուժանի «Վահագն»ի թարգմանութեան մէջ, ձախողեցաւ մասամբ «Հացին Երգը»ին ամբողջական թարգմանութեան մէջ:

Վերոյիշեալներէն ո'չ մէկը կրցաւ, բնաւ հայերէն չգիտցող Լիւբ-Անտրէ Մարսէլէն աւելի լաւը ընել, չըսելու համար աւելին:

Նոյնպէս՝ «Էօրոփ»ի բացառիկ թիւի թարգմանութիւնները կը մ'նան անյաջող:

Ի՞նչպէս բացատրել այս երեւոյթը:

Պարզապէս ստեղծագործութեան «գաղտնիք»ով:

Ստեղծագործութիւն է թարգմանութիւնը, մանաւանդ երբ քերթուած մըն է թարգմանուածը: Վերստեղծում մըն է ան յաճախ: Ինչպէս նորստեղծում է քերթուածը, մի'շտ:

Ու երկու պարագաներուն ալ, վերջինին մէջ առաւել չափով, էականը տաղանդն է: Այն ներքին լոյսը, այն անսահմանելի շունչը, ա'յն համբոյրը, եթէ կ'ուզէք, զոր աստուածները կը դրոշմեն իրենց «ընտրեալներ»ու ճակատին:



Անկարելի է այստեղ ներկայացնել Քաղանձաքիի գործը ամբողջութեամբ: Նախ չունինք, ինչպէս ըսի, պէտք եղած տուեալները:

Պիտի փորձեմ տալ անոր գործին երկու կարեւոր մասերը եւ այն ալ ընդհանուր ակնարկով մը: Քազանձաքիի աշխարհը ու նաեւ, անոր վէպերը:

Իւրաքանչիւր ստեղծագործող ունի իր աշխարհը, իրեն յատուկ: Սօսքը հսկաներու մասին է, Պալգաքի մը, Տոստոյեւքիի մը մասին, օրինակ: Քաղանձաքի ունի ի՛րը: Անկէ ներս թափանցելու համար, անհրաժեշտ է անցնիլ դռնէ մը: Ինչպէս մատնանշեցի, ֆգնութիւն կը կոչուի այդ դուռը: Կը փափաքիմ որ հայ ընթերցողը մօտէն ծանօթանայ այս գործին: Ան մեծապէս պիտի օգնէ իրեն, իր ապագայ հետազօտութեանց ընթացքին: Ու ես միշտ ալ հաւատացած եմ որ գործի մը ծանօթանալու լաւագոյն եղանակը, բուն այդ գործը կարգալն է, քան անոր մասին՝ ասոր կամ անոր ըսածը:

Ուստի, բաւական երկար հատուածներ թարգմանեցի Քաղանձաքիի գործէն ու առայժմ կը գոհանամ զանոնք ներկայացնելով հայ ընթերցողին: Քաղանձաքիի մասին կը խօսինք տակաւին, այս առաջին ծանօթացումէն յետոյ միայն:

Ճ Գ Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Մթին վիհէ մը կուգանք, յանգելու համար մթին վիհի մը: Այն լուսաւոր միջոցը, որ այդ երկու վիհերը իրարմէ կը բաժնէ, կեանք կը կոչենք:

Հագիւ ծնած՝ յետադարձ գնացքը կը սկսի:

Մեկնում ու վերադարձ միաժամանակ, — ամէն վայրկեան կը մեռնիրնք:

Ուստի, շատեր յայտարարած են յաճախ, «Կեանքին նպատակը մահն է»:

Բայց նաեւ հագիւ ծնած՝ ստեղծագործելու, շարահիւսելու մեր ֆիզը կը սկսի, նիւթէն՝ կեանք ստեղծելու, — ամէն վայրկեան կը ծնիրնք:

Ուստի, շատեր յայտարարած են յաճախ, «Վաղանցուկ կեանքին նպատակը անմահութիւնն է»:

Շնչող, անցաւոր մարմիններուն մէջ, երկու հոսանքներ կը մարտնչին. առաջինը կը բարձրանայ դէպի ստեղծագործութիւն, դէպի

կեանք, դէպի անմահութիւն. երկրորդը կ'իջնէ դէպի քայքայում, դէպի նիւթ, դէպի մահ :

Այս երկու հոսանքներն ալ կը ժայթփին կենսանիւթին խորքէն իսկ :

Սկիզբները, կեանքը մեզ յանկարծակիի կը բերէ : Ապօրինի հակազդեցութիւն մը կը թուի ըլլալ ան, ամեհի, անկայուն, յախտեանկան ու մթին աղբիւրներու դիմաց : Բայց քիչ մը աւելի խորը թափանցելով, կը գգանք թէ կեանքը՝ անգուսպ, տիեզերական խոյանք մըն է նաեւ, մշտնջենական, անխորտակելի : Եթէ ո՛չ, ի՞նչպէս պիտի բացատրէինք ա՛յն գերմարդկային ոյժը, որ մեզ անկուրքներն դէպի գոյութիւն կը նետէ, որ պայքարին մէջ սիրտ կուտայ մեզի, մեզի՛, ըլլանք մենք բոյս, կենդանի կամ մարդ :

Այս երկու հակադիր հոսանքներն ալ սուրբ են : Մեր պարտականութիւնը ըմբռնել է ուստի ա՛յն տեսիլքը, որ կը պարունակէ, կը հաշտեցնէ ու կը ներդաշնակէ այս երկու հսկայ ուժերը, մշտնջենական ու անկորնչելի :

Եւ ըստ այս տեսողութեան՝ նշդել մեր մտածումներն ու գործունէութիւնը :

ՃԳՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հանդարտ, արթնամիտ, կը դիտեմ աշխարհը եւ կ'ըսեմ.— Ի՛նչ որ կը նաշակեմ, կը գգամ ու կը շօշափեմ, իմ իմացումիս, իմ մտքիս ստեղծածն է : Արեւը կը ծագի ու կը մարի գանկիս մէջ : Քունկերէս մէկուն վրայ կը ծագի ու մարը կը մտնէ՝ միւսին վրայ : Աստղերը կը փայլին ուղեղիս մէջ : Մտածումներ, մարդիկ, կենդանիներ կ'արածին՝ գլխուս մէջ : Երգեր ու տրտունջք՝ կը լեցնեն ականջներուս ու լորսպտոյտ խեցեփողը : Պահ մը կը խռովեն միջոցը :

Ուղեղս կը մարի, եւ ամէ՛ն ինչ, երկինք երկիր կ'անհետին :

— «Միայն ե՛ս գոյութիւն ունիմ», կը պռայ միտքը :

Գետնափոր շտեմարաններուս մէջ կ'աշխատին հինգ ոստայնակներս : Անոնք կը հիւսեն ու կը քանդեն ժամանակն ու միջոցը, հըրնուանքն ու ցարը, նիւթն ու հոգին :

Ամէն ինչ կը հոսի իմ շուրջս, գետի մը նման, պարելով, յորձանք տալով : Քառսը կը գռայ :

Բայց ե՛ս, իմացումը, համբերութեամբ, քաջաբար, կը բարձրա-

նամ գտնիվերէն, գլխապտոյտին անտարբեր: Չսայթափելու համար, չիյնալու համար վիհին մէջ, ցնորփին վրայ կոռւաններ կը հաստատեն, կամուրջներ կը նետեն, նամբաներ կը բանամ հոն. վի'հը կը կառուցանեն:

Յամբ, պայֆարելով միշտ, կը շարժուկիմ անոնց միջեւ: Իմ ստեղծած երեւոյթներէս կը գատեն անո'նք, որոնք գործիս կուգան. կը դասաւորեն զանոնք ըստ սովորութեան, կը բռնադատեն զանոնք, իմ գործնական աներածեշտութիւններուս ի հաշիւ:

Կարգ ու կանոն կը դնեն անիշխանութեան. դէմք մը կուտամ, ի'մ դէմքս՝ քառսին:

Չեմ գիտեր թէ դրսերեւոյթներու ետին կ'ապրի ու կը շարժի՞ր գաղտնի ոյժ մը, ինձմէ գերիվեր: Չեմ հարցըներ անգամ: Հո'գս չէ: Դրսերեւոյթները ե'ս է որ կը ստեղծեմ:

Հագար ու մէկ գոյներով կը գծագրեն հսկայ ու փայլուն վարագոյր մը, ձգուած՝ անդունդին եւ իմ միջեւ:

Մի' ըսեր — «Մ'էկդի վանէ վարագոյրը, որպէսզի կարենամ նըկարը տեսնել»:

Վարագոյրը նկարն իսկ է:

Այս իմ ունեցած իշխանապետութիւնս, մարդկային ստեղծագործութիւն մըն է, անցաւոր, բայց ի'մ գաւակս: Ամուր է ան, ոչի'նչ կայ աւելի հաստատուն: Ու միմիայն անոր սահմաններուն մէջն է որ ես կրնամ ապրիլ արդիւնաւէտ կերպով, հրնուի'լ, աշխատի'լ: Ես գործաւորն եմ վիհին, հանդիսատեսը: Ես խոհն եմ եւ գործողութիւնը: Ես օրէնքն եմ: Ինձմէ դուրս՝ ոչի'նչ:

Առանց ապարդիւն եւ անօգուտ ըմբոստանքներու, տեսնել եւ ընդունիլ մարդկային մտփին սահմանները, ու առանց կանգ առնելու՝ աշխատիլ այդ խիստ սահմաններուն մէջ.

Ահա՛ առաջին պարտականութիւնդ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Չեմ ընդունիր սահմանները, դրսերեւոյթները չեն գոհացնելու գիս, կը խեղդուի'մ...»:

Ապրիլ այդ խորունկ, արիւնոտ խռովքը, ահա՛ երկրորդ պարտականութիւնդ:

Իշխել երկրին, օդին ու ջուրին, յաղթահարել միջոցին ու ժամանակին, իմանալ թէ ըստ ո՞ր օրէնքներուն կը շղթայուին, կը յայտ-

նուրն ու կ'անհետին պատրանքները, որոնք ցուցումներն են մտքին կրակներուն: Ինչի՞ կը ծառայեն այս բոլորը:

Հգորապէս տեճչալ մէկ բան, — ըմբռնել ի՛նչ որ կը պահուըտի դրսերեւոյթներու ետին, ըմբռնել գաղտնիքը որ զիս կը ստեղծէ ու զիս կը սպաննէ, եւ թէ՛ աշխարհի տեսանելի եւ անդադրում հոլովոյթին ետին՝ կը պահուըտի անշարժ եւ անտեսանելի ներկայութիւն մը:

Եթէ միտքը անկարող է ընել այդ, եթէ իր գործը չէ՛, յուսահատութենէն ալ անդին, հերոսական ելք մը փնտտել.

Այդ փառութիւնը թող սի՛րտս ունենայ:

.

Խորունկէս ձայն մը ինծի կը հրամայէ.

— Փորէ՛, ի՞նչ կը տեսնես:

— Մարդիկ, թռչուններ, ջուր ու ֆաբեր...

— Աւելի՛ փորէ, ի՞նչ կը տեսնես:

— Մտածումներ ու երազներ, կայծակներ եւ ուրուականներ...

— Աւելի՛ փորէ, ի՞նչ կը տեսնես:

— Ուրիշ ոչի՛նչ: Համբ գիշերը, թա՛նձր՝ ինչպէս մահը... մահն

ըլլալու է:

— Աւելի՛ փորէ:

— Ա՛հ, չեմ յաջողիր խորտակել մթին պատուարը: Անոր ետին՝ աղաղակներ եւ հեծեծանքներ կը լսեմ: Թեւերու թափահարումներ՝ միւս ափին:

— Մի՛ լար, մի՛ լար, միւս ափին չե՛ն անոնք: Ճիշերն ու հեծեծանքները քու սի՛րտդ են:

Ու ես կը փայտեմ դողդոջուն, իմացումէն անդին, սրտին սրբագործուած ափին: Մինչ ոտքերէս մէկը ամուր կը սեղմէ հաստատուն հողը, միւսը, խաւարին մէջ, անդունդին վերեւ, կը խարխափէ:

Կը գգամ որ բոլոր այս երեւոյթներու ետին՝ կենսանիւթ մը կը պայֆարի:

Ես կ'ուզեմ անո՛ր միանալ:

Ու կը գգամ, որ այն կենսանիւթը, որ կը պայֆարի երեւոյթներու ետին, ա՛ն ալ իմ սրտի՛ս կ'ուզէ միանալ: Բայց մեր միջեւ կեցած է մարմինը, ու մեզ իրարմէ կը բաժնէ: Միտքը կանգնած է մեր միջեւ, ու մեզ իրարմէ կը բաժնէ:

Ի՞նչ է պարտականութիւնս:

Խորտակել՝ մարմինը, ու ձուլուի՛լ Անտեսանելիին: Թող լռե՛լ միտքը, որպէսզի լսեմ Անտեսանելիին կանչը:

Կը փայտմ անդունդին եզրին, ու կը սարսուամ: Երկու ձայներ կը պայֆարին մէջս:

Միտքը.— «Ինչո՞ւ կորսուիմք, անկարելին հետապնդելով: Հինգ զգայարաններու ամբողջին մէջն է որ ստիպուած ենք ստուգել մարդուն սահմանները»:

Բայց իմ մէջէս ուրիշ ձայն մը, — գայն կոչենք վեցերորդ զգայարանք, գայն կոչենք սի՛րտ, — կ'ըմբռստանայ ու կը ճչա՛յ:

— «Ո՛չ, ո՛չ, մի՛ ընդունիր երբեք մարդուն սահմանները: Խորտակե՛ր սահմանները: Դրժե՛ր, ի՛նչ որ աչքերը կը տեսնեն: Մեռիր եւ պոռա՛ — «Մահը գոյութիւն չունի՛...»:

Միտքը կ'ըսէ, — «Աչքս, իրատես եւ անյայտ, ամէն ինչ կը տեսնէ: Կեանքը խաղ մըն է լոկ, քատրերգութիւն մը, գոր կը խաղան մարմնիս հինգ դերակատարները: Կը դիտեմ գայն, անյագուրդ եւ անհունօրէն տխուր հետաքրքրութեամբ մը. բայց չունիմ պարզամըտութիւնը այն պարզամիտ ծաղրածուին, որ բեմ կը բարձրանայ, միջամտելու արիւնտ կատակերգութեան»:

Բայց միբարը իր տեղէն վեր կը քոչի ու կը ճչայ.— «Ե՛ս, ա՛յդ հուպիտն եմ, որ կը ցատկէ բեմին վրայ. ես կը միջամտեմ աշխարհի հոլովոյթին: Ես չե՛մ կշռեր, չե՛մ չափեր, պարագաներուն չե՛մ յարմարիր: Կը հնագանդիմ մի՛միայն իմ խորունկ ձայներուս: Կը հարցուփորձեմ, կրկի՛ն ու կրկի՛ն. ռտֆով կը զարնեմ ֆտտսին: Ո՞վ է որ մեզ կը տնկէ այս հողին վրայ, առանց մեր քոյլտուութեան. ո՞վ է որ մեզ արմատախիլ կ'ընէ այս հողէն, դա՛րձեալ առանց մեր քոյլտութեան»:

Ճղնիւմ էակ մըն եմ ես, տկար, ցեխէ ու երագէ քրծուած: Բայց կը զգամ, որ իմ մէջս կը քաւալին տիեզերական բալոր ուժերը: Կը փափաքիմ, գէթ մէկ վայրկեան, անոնք զիս խորտակելէ առաջ, աչքերս բանալ ու նայիլ անոնց՝ դէմ առ դէմ:

Ես իմ կեանքիս ուրիշ նպատակ չեմ սահմաներ: Արդարացում մը կ'ուզեմ գտնել ապրելու, ու նաեւ հանդուրժելու՝ հիւանդութեանց, անարգարութեան ու մահուան ամենօրեայ տեսարանին:

Ես այն դատապարտեալը չե՛մ, որուն զինի կը խմբընեն, պղտորելու համար անոր ուղեղը: Յստակատես, իրատես, կը յառաջանամ արահետէն, որ կը տանի մէկ վիհէն դէպի միւսը: Ու մեռնելէ առաջ, կը ջանամ իմ ամբողջ ուժերովս նշան ընել ընկերներուս: Չեմ երկարել անոնց, ու, դեռ ֆանի ուշ չէ, արտասանել բառ մը, անոնց մենտել յստակ խօսք մը. ըսել թէ ի՛նչպէս կ'երեւակայեմ ես այս երթքը, եւ թէ ո՛ր կ'ենթադրեմ որ կ'երթանք:

ԵՐՐՈՐԳ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Միտքը կը յարմարի պարագաներուն :

Ան կ'ուզէ իր բանտը — իր դանկը — լեցընել մեծ գործերով : Պատերուն վրայ հերոսական ասութիւններ փորագրել, գծել ազատարար թիւե՛ր՝ իր շղթաներուն վրայ :

Սիրտը չի՛ յարմարիր :

Ան կը լսէ որ դուրսէն, իր բանտին պատերուն վրայ բռնցքի հարուածներ կուտան : Օգիւն մէջէն սիրոյ կանչեր կը լսէ : Եւ յուսալից՝ կը պատասխանէ, իր շղթաները թափահարելով : Կայծակնային պահու մը իրեն կը թուի յանկարծ, որ իր շղթաները թեւերու վերածուած են :

Իայց շուտով գետին կ'իյնայ, կը թաւալի արիւնլուայ : Դարձեալ կորսնցուցած է իր յոյսը, կրկին անձնատուր եղած Մեծ Վախին :

Ու հիմա, ատենն է ա՛լ :

Ետիդ ձգէ՛ միտքն ու սիրտը : Յառաջացիր եւ ա՛ռ երրորդ քայլը : Ազատագրէ՛ ինքզինքդ մտքէն, որ ամէն ինչ կ'ուզէ կարգաւորել նախնական հանգստաւէտութեան մը մէջ, որ կը յուսայ իրեն ենթարկել երեւոյթները : Ազատագրէ՛ նաեւ ինքզինքդ սրտին ահէն, որ կը փափաքի եւ կը յուսայ հասնիլ զգայարանքներուն :

Յաղթահարէ՛ վերջին եւ մեծագոյն փորձութեան, — Յոյսին :

Այդ է երրորդ պարտականութիւնդ :

Կը պայքարինք, որովհետեւ ա՛յդ է մեր հաճոյքը : Կ'երգենք, երբ նոյնիսկ ոչ մէկ ականջ մեզ կ'ունկընդրէ : Կ'աչխատինք, երբ նոյնիսկ ոչ մէկ գործատէր գոյութիւն ունի, մեր օրապահիկը վճարելու համար մեզի, երբ իրիկուն ըլլայ :

Փերեզակներ չե՛նք մենք. մենք, մե՛ր իսկ գործատէրերն ենք :

.

Ո՞ւր կ'երթանք : Մի՛ հարցներ : Ե՛լ, ի՛ջի՛ր : Զկա՛յ վախճան : Արդի պահը միայն գոյութիւն ունի, դառնութեամբ լեցուն, քաղցրութեամբ նաեւ : Կ'ըմբողջինեմ զայն ամբողջութեամբ :

Բարի է կեանքը, մահը՝ բարի: Աշխարհը կլոր է ու կարծր, նըման կնոջ մը ստինքին, իմ փորձառու ափերուս մէջ: Ես ամէն բանի կը նուիրուիմ: Կը սիրեմ, կը տառապիմ, կը պայքարիմ: Աշխարհը ինծի կ'երեւի իմացումէն աւելի ընդարձակ:

Սի՞րտս, մի՞թիւն եւ ամենակարող առեղծուած մը:

Եթէ կրնաս, հոգի՛ս, կանգնէ՛ շառաչող ալիքներուն վրայ եւ արագ ափնարկով մը ընդգրկէ համայն ծովը:

Արթուն պահէ միտքերդ, չըլլայ թէ ընկղմին: Ու յանկարծ նետուէ ովկիանոսին մէջ. ու շարունակէ պայքարիլ:

Մեր մարմինը նաև մըն է, խորունկ ու կապոյտ ջուրերուն վրայ սահող:

Ի՞նչ է մեր պարտականութիւնը. ընկղմի՞լ:

Քու պարտականութիւնդ, հանդարտօրէն, առանց յոյսի, ասպետօրէն յառաջանալ է դէպի անդունդը:

Եւ ըսել — «Ոչի՛նչ գոյութիւն ունի»:

Ոչի՛նչ գոյութիւն ունի, ո՛չ կեանք, ո՛չ մահ:

Կը դիտեմ մարմինն ու հոգին, երկու սիրահար ուրուականներ, որոնք գոյութիւն չունին, եւ որ սակայն զիրար կը հետապնդեն, կը գերիզնդխառնուին, կը զուգուին ու կ'անհետին:

Եւ ես կ'ըսեմ. ահա՛ ի՛նչ որ կ'ուզէի. հիմա՛ դիտեմ: Ոչի՛նչ կը յուսամ, ո՛չ մէկ բանէ կը վախնամ: Ազատագրուած եմ, մտքէս, սըրտէս: Անոնցմէ վե՛ր եմ բարձրացած: Ազատ եմ:

Ահա՛, ի՛նչ որ կ'ուզէի. ուրիշ ո՛չ մէկ բան:

Ազատութիւնն է որ կը փնտռէի:

Ճգնութեան զիրքէն այս լայն թարգմանութիւններէն ետք, որոնք կ'ամփոփեն Քաղանծաքիի բարոյագիտական ըմբռնումները, եւ անոնց առընթեր, պէտք է թերեւս քանի մը խօսք ալ ընել կրետակաւ աշխարհայեացիի մասին:

Այս վերջին խնդիրը առանցքն իսկ է Քաղանծաքիի էթիքին, բարոյագիտութեան:

Գիտենք որ արեւմտեան քաղաքակրթութիւնը, որուն մայրը Յունաստանն է, իբրեւ մեծագոյն իտէալ ունեցած է եսին ազատագրումը: Պղատոնէն մինչեւ եւրոպական վերջին փիլիսոփաները, այդ քաղաքակրթութիւնը ջանացած է, ի դին բազմաթիւ ճիգերու, մարդուն ենթարկել իրմէ դուրս գտնուող ուժերը: Ազատագրումը մարդուն՝ քոսէն, անիշխանութենէն:

Արեւելեան քաղաքակրթութեան իտէալը, ընդհակառակն, կայացած է միացմանը մէջ անհատին՝ անտեսանելի աստուածութեան հետ: Մինչեւ որ ան, մարդը, ձուլուի, նոյնանայ Աստուծոյ հետ:

Առաջինին ներկայացուցիչներն են Սոկրատոն ու Պլատոնը, ամէնէն աւելի Ողիւստը: Մարդը, որ կը փնտոէ միշտ, առանց վախի, կը պայքարի մինչեւ վերջ, չի յուսահատիր:

Երկրորդին խորհրդապատկերը Պաւտոսն է: Անշարժ եւ անայլալ կերանութիւն, խոհ:

Հստ Գաղանձաքիի, կրետական ըմբռնումը այս երկու աշխարհայեացքներուն համադրութիւնն է: Չայն կը կոչէ Կրետական նայումով:

Ի՞նչ է այս նայումը:

Անդունդին ուղղուած է ան, առանց որ հոն նայող մարդը տարբաղադրուի: Այսինքն ո՛չ ձուլուի, ո՛չ վախնայ եւ ոչ ալ բան մը յուսայ իր տեսածէն:

Կրետացիները կը խաղան Տիտան-ցուլին հետ, այսինքն Աստուծոյ, Քաոսին, Անտեսանելի ոյժին՝ հետ:

Արեւելքը կը սպաննէ զայն, Արեւմուտքը կ'ուզէ ազատագրուիլ անկէ:

Կրետացիները ո՛չ կը սպաննեն զայն, ո՛չ ալ կ'ուզեն ազատագրուիլ անկէ, այլ կը խաղան անոր հետ:

Անոնց մարմիններն ու հոգիները շարունակական դօտեմարտի են բռնուած Տիտանին հետ: Ծնորհիւ այս վարժութեան, Կրետացիները կը պահեն իրենց մարմիններուն արագաշարժութիւնն ու ձկունութիւնը, ինչպէս նաեւ իրենց հոգեկան ոյժը:

Կրետէն ուրեմն Աստուծոյ վախը փոխեց բարձրագոյն խաղի մը: «Այս հերոսական կեցումքը, անվախ եւ անյոյս, այս հանդարտ նայումքը՝ ուղղուած Գազանին, անդունդին, ես կը կոչեմ Կրետական նայումք», կ'ըսէ Քաղանձաքի:

Ու հիմա, Քաղանձաքիի մասին միա՛յն այսքանը գիտնալէ ետք, չէ՞ք կարծեր, որ ան մեզ կը հետաքրքրէ մեծագոյն չափերով:

Հանգիտութիւններ չկա՞ն մեր ճակատագրին, մեր կեցուածքին, մեր աշխարհայեացքին եւ այս Կրետական նայումքին միջեւ:

Քանի մը տաանեակ տարիներէ ի վեր գոյութիւն ունին այս գրքուածքները, յունարէն, ու նաեւ Ֆրանսերէն, աւելի քան տասը տարիէ ի վեր:

կ'արժէ որ Սփիւռքի եւ Հայաստանի համալսարաններու ուսանողները իբրեւ քէզ գոնէ ուսումնասիրեն Քաղանծաքին: Գրականութեան եւ փիլիսոփայութեան հետեւող ուսանող մը պէտք չէ՞ր հետաքրքրուեր այս կրետական ցայուածքով: Ըսէր մեզի թէ ինչո՞ւ ան կը մօտենայ Հայկական ցայուածքին, եւ ինչո՞վ կը տարբերի անկէ: Եւ կամ թէ կա՞յ Հայկական նայուածք:

Քիչ մը յետոյ երբ խօսիմ իր վէպերուն, մանաւանդ անոնցմէ մէկուն՝ «Մահ կամ Ազատութիւն»ի մասին, պիտի տեսնենք թէ յոյն գրողը կը մշակէ գրականութիւն մը, որ մօտ է մեր աշխարհին, շատ մօտ մեր սրտին: Որովհետեւ բախտակից է մեզի:

Ու մինչեւ այսօր, բացի լրագրական տեղեկութիւններէ, ո'չ մէկ ուսումնասիրութիւն հրատարակուած է անոր մասին, ո'չ իսկ էջ մը թարգմանութիւն:

Եւ երբ կ'ըսուի թէ՛ մենք մեր պարտականութիւնը չենք կատարած ու կը շարունակենք չկատարել, մանաւանդ Սփիւռքի մէջ, երբ կ'ըսուի թէ հայ միտքը ինքնագոհ եւ ծոյլ աշակերտի մը դիրքին մէջ կը գտնուի, շատեր կը դժգոհին:

Անցնի'նք, անցնի'նք սակայն:

Աչք մըն ալ նետենք Քաղանծաքիի գրական կալուածին մէկ ուրիշ չէնքին վրայ, իր վէպերուն վրայ, եւ վերջացնենք մեր այսօրուան պտոյտը, յուսալով որ ուրիշներ կազմակերպուին ապագային, լաւագոյն պայմաններու տակ եւ լաւագոյն ձեւով:

Քաղանծաքիի կարեւոր վէպերէն երկուքը նուիրուած են Յիսուսի կեանքին: Իր սիրած նիւթերէն մէկն է:

«Յիսուս վերստին խաչուած»ը ամէնէն ծանօթն է, շարժանկարի ալ վերածուած ըլլալով, ինչպէս ըսի սկիզբը: Փոքր Ասիոյ մէջ տեղի կ'ունենայ գործողութիւնը եւ թուրքերու կողմէ տեղահան եղած գիւղի մը պատմութիւնն է: Խեղճերը օգնութիւն կը խնդրեն իրենց ազգակից եւ կրօնակից ուրիշ գիւղացիներէ, բայց կը մերժուին, շահամոլ եւ քրիստոնէական ոգիէ շատոնց հեռացած կղերին պատճառով: Գաղթականները շաբաթներով կը տառապին գիւղէն դուրս, անօթի ու ծարաւ: Չատիկ է եւ ըստ տեղական սովորութեան մը այդ տարուան կը գուգագիպի Յիսուսի չարչարանքներուն նուիրուած բիւնի մը խաղարկութիւնը, զոր Եկեղեցին կը կազմակերպէ եօթը տարին անգամ մը, դերակատարները ընտրելով գիւղին բնակիչներէն: Այս վերջինները լուրջի կ'առնեն այս անգամ իրենց դերերը, կը նոյնանան իրենց տիպարներուն: Ուրկէ՛ տուամը:

«Վերջին փորձութիւնը» ուղղակի Յիսուսի կեանքին նուիրուած է: Քաղանծաքի վիպային շունչով կը պատմէ Աստուածորդիին կեանքը: Անոր մանկութիւնը, պատանեկութիւնը, ճգնութիւնները, հիւանդութիւնը, հալածանքները (Հոռմէացիներուն համար փայտէ խաչեր կը շինէր, որոնց վրայ կը բարձրանային ըմբոստները) ու վերջապէս իր քարոզչական արկածայից կեանքը: Քաղանծաքի բաւական մօտէն կը հետեւի Աւետարանիչներուն մինչեւ Խաչելութիւն: Բայց յոյն վիպասանը խաչին վրայ չի մեռցներ Աստուածորդին: Վերջին շունչը դեռ չի հաճած՝ Զայն վար առնել կուտայ իր պահապան հրեշտակին կողմէ եւ Մարիամ Մագթաղեանացիի հետ կը հեռացնէ Գողգոթայէն: Մեղաւոր կ'ինը սակայն կը սպաննուի ճամբու ընթացքին եւ Յիսուս մինակ մնացած՝ կ'ուղղուի Աղքատ Ղազարոսի տունը, Մառիի եւ Մարթայի մօտ: Կ'ամուսնանայ երկու քոյրերէն մէկուն հետ, զաւակներ կ'ունենայ ու կ'ապրի մինչեւ խոր ծերութիւն, վարելով մարդկային խաղաղ, պարկեշտ ու պարզ կեանք մը: Քաղանծաքի ըսել կ'ուզէ, տեղ մը նոյնիսկ ըսել կուտայ խաչելութենէ վերը կած իր նոր անձնաւորութեան, թէ արդեօք Քրիստոսի վարդապետութիւնը աւելի մարդկային, աւելի իրական պիտի չըլլա՞ր, եթէ անոր հիմնադիրը ապրէր ու մեռնէր պարզ մարդու մը պէս, փոխանակ այդ միջին «խորհուրդներուն»:

«Ասիգի աղքատը», ինչպէս խորագիրը ցոյց կուտայ, Սուրբ Փրանսուայի կեանքն է, ամէնէն համեստն ու ամէնէն մարդկայինը Եկեղեցիի սուրբերուն: Այս յուզիչ եւ հրաշալի կեանքը պատմուած է Սուրբին մօտիկ ընկերոջ՝ Եղբայր Լեւոնի կողմէ:

Մարդկայնական հզօր շունչով գրուած՝ հիանալի գիրք մը՝ ա՛յս ալ, ինչպէս միւս երկուքը:

Գրական տեսակէտով իր գլուխ-գործոցը կը նկատուի Ալեքսի Զօրպան, իրաւամբ: Մարդկային կեանքին երկու տարբեր ըմբռնումներուն ուսումնասիրութիւնն է ան: Ուստի գլխաւոր հերոսները երկուք են, ինքը՝ հեղինակը եւ Ալեքսի Զօրպան: Ինք մտաւորականն է, այսինքն իր մտածումներով ապրող մարդը, իսկ Զօրպան նախնական, գործնական մարդը: Ան որ չէ վարակուած որեւէ մտաւորական հիւանդութենէ, կ'ապրի մեր երկրին կեանքը, պարզութեամբ, խորութեամբ նաեւ, ըմբռնելով մարդուն վերապահուած բոլոր հաճոյքները: Կան երկրորդական դերակատարներ ալ, բոլորն ալ տըրրուած կենդանի շունչով:

Բայց պատմութիւն գրեթէ չկայ:

Ի՞նչ հրաշալի վերլուծում սահայն, մարդկային այդ երկու տիպարներուն մասնաւորապէս :

Իրապէս պէտք է մեծ ըլլալ այսպիսի պտտիկ նիւթէ մը զլուսւորութեան մը կերտելու համար : Նոյնը չէ՞ Հիմընկվէյի «Ծովը եւ մարդը» :

Վերջին վէպին անցնելէ առաջ, կ'ուզեմ «Ալեքսի Զօրպայ»էն թարգմանել շատ կարճ հատուած մը, որ նկարագրուած ինն մըն է, որ կապ չունի վէպին հետ, բայց որ կապ ունի, անպայման, ֆազանձաքիի հրաշալի լեզուին ու ոճին հետ :

Տեսէ՛ք, որքա՛ն գեղեցիկ է դեռ ան, հակառակ անոր որ երեք անգամ հազուատ փոխած է, յունական, ֆրանսական, հայկական : Վէպին երկու հերոսները փրէէէն ճամբայ կ'ելլեն դէպի Կրետէ :

Ծո՛վ, աշնանային քաղցրութիւն, կղզիներ՛ր, արեւով ողորուած... Նուրբ անձրեւի տոգոյն քոյ մը, որ կը ծածկէր անմահ մերկութիւնը Յունաստանի :

Երջանի՛կ է մարդը, կը մտածէի, որուն տրուած է, մեռնելէ առաջ, նաւարկել եգէական ծովուն վրայ :

Բազմաթիւ են հանոյճները մեր Երկրին, — Կիները, պտուղները, մտածումները : Բայց նեղքի այս ծովը, գորովոտ աշնան մը ծոցին, իւրաքանչիւր կղզիի անունը մըմնջելով, կը մտածեմ քէ չկա՛յ ուրախութիւն, որ աւելի ապահով կերպով փոխադրէ մարդուն սիրտը՝ դրախտէն ներս :

Ոչ մէկ ուրիշ տեղ, չէ՛ք անցնիր աւելի խաղաղօրէն եւ աւելի դիւրութեամբ, իրականութենէն դէպի երազ :

Սահմանները ա՛յնքան կը պտտիկնան, ա՛յնքան կը նեղնան, որ ամէնէն խեղճ նաւուն առագաստներէն՝ ձիթեմիի նիւթեր ու ողկոյճներ կը կախուին :

Կարծէ՛ք հո՛ւ, Յունաստանի մէջ, հրաշքը անխուսափելի ծաղիկն է անհրաժեշտութեան :

Ու ահա՛ վերջապէս «Մահ կամ Ազատութիւն»ը, որ մեզ կը հետաքրքրէ ամէնէն աւելի :

Դիւցազներգական շունչով գրուած ընդարձակ վէպ մըն է, որուն նիւթը առնուած է Կրետէի ազատագրական պայքարներէն՝ սուլթաններու բռնապետութեան դէմ :

«Դիւցազներգական, կը գրէ Փրանսացի քննադատ մը Քաղանծաքիի դործին մասին, դիւցազներգական, ահա՛ բառը, որ կը բնորոշէ այս սաստիկութիւն եւ արեւ երգող հուժկու քերթողը, մեր ժամանակներու մեծագոյն գրողներուն մէջ ամէնէն միջերկրականեանը, որուն պէտք է տրուէր Նոպելեան մրցանակը եւ որ զլացուեցաւ անոր մահուան տարուան իսկ ընթացքին: Եւ ան միա՛կն է նաեւ, որուն կրնանք տալ, իր նախահայրերէն ամէնէն նշանաւորին՝ Հոմերոսի հեռաւոր յաջորդութիւնը»:

Արդարեւ Հոմերոսեան շունչն է, որ կը տիրէ, կը լեցնէ այս գիրքը ծայրէ ի ծայր: Անոր հերոսները, Քափեթան Միշէլ, հայրը՝ Քափեթան Միֆաքաս, հարիւրամեայ կաղնի մը, միւս կողողները, վետայիմները կրնայինք ըսել, ձուլուած են Հոմերոսեան հերոսներու մետաղէն, ունին անոնց մարմիններն ու հոգին:

Բայց նոր ժամանակներու վէպն է ան, նո՛ր՝ իր շունչով, մարդկայնութեամբ, նո՛ր՝ իր աշխարհայեացքով ու բեքնիքով:

Երկու կողմի կողողներն ալ, յոյն եւ թուրք, տրուած են հարազատութեամբ, նոյն ճշդութեամբ, նոյն անաչառութեամբ, ամէնէն կարեւորէն մինչեւ յետին դերակատարը: Հակառակ որ հեղինակը կողմ է, կողմ չի բռներ: Կուտայ զէպքերն ու մարդիկ, ինչպէս որ են, ինչպէս որ ի՛նք կը տեսնէ, իբրեւ մարդ եւ ոչ իբրեւ յոյն:

Պատիկ օրինակ մը տամ: Քաղանծաքի կը նկարագրէ խեղճ ու կըրակ թուրք մը, կէսհիւանդ, կէս խելագար, մուրացիկի պէս բան մը: Անոր տրուած անունը արդէն ամէն բան կ'ըսէ, էջերով նկարագրութիւն կ'արժէ... Քաֆառ էֆէնտի: Մարդ մը սակայն, խորքին մէջ բարի, հակառակ կոիւի, արիւնհեղութեան: Բարեկամ յոյներուն, հաւատարիմ Ղուրանին: Չարչարուելով այս վերջինին խիստ պատուիրանքներուն եւ կեանքի հաճոյքներուն միջեւ: Քափեթան Միշէլը կը հրաւիրէ զայն յաճախ իր պատմական, փանքակրուելեան խընջոյքներուն, իր տան ներքնայարկը, եւ որոնք կը տեսնեն յաճախ ամբողջ շաբաթ մը:

Էֆէնտին հրաւէր ստացած է դարձեալ: Ու իր ծոմապահութեան ամիսն է: Կ'ուզէ երթալ, անօթի է, ծարաւ: Խելքը միտքը հոն է, բայց կա՛յ Ղուրանը: Ծամբայ կ'ելլէ: Ու կը տեսնենք ահա՛ զայն, փողոցին մէկ մայթին վրայ, սարսուլով, ուննդերը լայն բացած, թուրքը կ'լլելով, գինով արդէն դիմացի տան մէջ հոսող գինիներէն. խորովածին բո՛յրը հապա...: Կ'ուզէ անցնիլ փողոցը, չի կրնար, ամբողջ մարմնով կը դողայ: Աչքերը կը մթագնին ու նեղ փողոցը, հըսկայ գետի մը կը վերածուի յանկարծ: Միշտ դողդալով, կը խնդրէ

անցորդներէն որ օգնեն իրեն, զինք անցընեն գետին միւս ափը, մեղքի գետին միւս ափը... :

Ու այդպէս, ահա, այդ աննշան մարդը, յանկարծ, անհունօրէն համակրելի կը դառնայ մեզի, խորապէս մարդկային: Այդ քաֆուտ էֆէնտին, այդ թո՛ւրքը:

Արուեստին հրաշքը:

Ըսի նաեւ թէ իր քեֆնիֆով արդիական էր այս վէպը: Չեմ գիտեր թէ ուրիշ վիպասաններ գործածած են այս ձեւը: Ամէն պարագայի եւ շատ հաւանաբար շարժանկարներու կը պարտինք զայն:

Փոխանակ միայն լավտերի մը, լուսարձակ մըն ալ ունի վիպասանը իր ձեռքին:

Իր լավտերով լուսաւորելէ ետք դէպքերուն եւ հոգիներուն մթին արահետները, Քաղանձաքի, յանկարծ կը ձգէ զանոնք եւ կը բարձրանայ քաղաքին մենաբարձր դիտարանին վրայ, մեզ ալ տանելով իր հետ: Ու լուսարձակը կ'ուղղէ 'հո՛ն, իր առջեւ փոռած համայնապատկերին վրայ: Ու շուրջանակի մէկ շարժումով՝ ձեր աչքերուն առջեւ կը պարզէ ի՛նչ որ կ'անցնի կը դառնայ հոն: Տրուած ժամանակի մը մէջ, ու մէկ ակնարկով, կը տեսնէք բոլոր ձեր ուզածները, վէպին մասնակցող բոլոր դերակատարները: Թէ ի՛նչ կ'ընէ անոնցմէ իւրաքանչիւրը, ո՛ւր կը գտնուի, որո՛ւ հետ, ի՛նչ կը խօսին, ի՛նչ կը մտածեն:

Կը տեսնէք թէ ի՛նչ հրաշալի գործիք է այդ լուսարձակը, երբ գործածուի տեղին ու երբ գտնուի ճարտար ձեռքերու մէջ: Քաղանձաքի կ'օգտագործէ զայն տիրականօրէն, ամէնէն վարպետ շարժանկարի բեմադրիչէն աւելի:

Բայց աւելի լաւ է որ ընթերցողը իր աչքերով տեսնէ, աւելի ճիշդը կարգայ, այդ տեսարաններէն քանի մը հատը գոնէ:

Ընտրեցի երեք տեսարան, ամէնէն զիւրամատչելիներէն: Իտումէնէի մահը, Մկրտուքիւն եւ Քափեթան Սիֆաֆաս:

Հայ ընթերցողը շատ զիւրութեամբ կրնար փոխել այս խորագիրները: Իտումէնէին զիմաց զնեւ, Հայ Վարժապետը, Մկրտուքեան մէջ փոխել յոյն Փետայիին անունը եւ զնեւ ծանօթ հայ Փետայիի մը անունը, որ գեղեցիկ թրքուհի մըն է փախուցած եւ զոր կ'աշխատի քրիստոնեայ մկրտեւ, իսկ Սիֆաֆասը փոխարինել, Ա. Բ. Գ. ի դասով, կամ աւելի լաւը, Մակար ծերունիով:

ԻՏՈՄԷՆԷԻ ՄԱՀԸ

Հեռո՛ւն, հրացանաձգութիւնը կը սաստկանար: Խուլ ձայներ լսուեցան յանկարծ: Թուրքերը կանգ առած էին Իտոմէնէի տան առջեւ եւ ուսի հարուածներ կուտային իշխանական տան հինցած դրան, զայն խորտակելու գիտաւորութեամբ:

Ատուռնէ ի վեր, Տիար Իտոմէնէն, իր գրասեղանին վրայ հասկած՝ կը գրէր Մեծ Պետութիւններուն:

«Ո՛վ աշխարհի հօրներ, ա՛յն պահուն, երբ այս տողերը կը գրեմ՝ ձեզի, Քանտիան մեռնելու վրայ է: Օղբ կը ցնցուի հրացանի պայթիւններէն, կատղած թուրքերը կը խորտակեն Քրիստոնեաներու դռները, կ'առեւանգեն կիները, կը սպաննեն էրիկ-մարդիկը, ծծկեր մանուկներու զանկերը կը ձգմեն սեմերուն վրայ:

Ձայնս կը բարձրացնեմ. գիտեմ որ մեծ բան մը չեմ, չնչին մարդ մը, կորսուած Եւրոպայի միւս ծայրին, հեռո՛ւ ձեզմէ, ո՛վ դուք աշխարհի հօրներ:

Բայց Աստուած կանգնած է մօտս, բարկաճայթ: Ան կ'երթեւեկէ ամայի սենեակիս մէջ, ուրկէ կը գրեմ ձեզի. Ան կը հակի ուսիս, կարգալու ինչ որ կը գրեմ ձեզի: Կը լռէ Ան, չրթները կը խածնէ ու կը սպասէ պատասխանին, զոր պիտի տաք ինծի:

Լաւ գիտցէք, ա՛լ ուրիշ նամակ պիտի չուղարկեմ ձեզի: Յոգնեցա՛յ պարապութեան մէջ աղաղակելէ: Եթէ չպատասխանէք ինծի, հիմա՛ պիտի դառնամ Աստուծոյ կողմը, եւ Ա՛ն...»:

Այստեղ, Տիար Իտոմէնէն յանկարծ ընդմիջեց իր նամակը: Հրացանի պայթիւններ լսած էր: Գլուխը պատուհանէն դուրս հանեց եւ տեսաւ թուրքերու խուժանը, որ կ'աշխատէր խորտակել իր փակ դուռը:

— Ի՞նչ կ'ուզէք, դարձաւ անոնց, կո՞յր էք, չէ՞ք տեսներ Մեծ Պետութիւնները, որ կեցած են հո՛ղ, աղբիւրին վերեւ...:

Աղաղակներ ու ծիծաղներ լսուեցան:
Գնդակ մը սուլեց անցաւ իր ահանջին ու այտին հպելով: Պատէն կախուած, վենետիկեան մեծ հայելի մը, փշուր փշուր եղաւ:
Տիար Իտոմէնէն ներս առաւ գլուխը:

Երբ ձեռք տուաւ ահանջին, ան արիւնտով ներկուեցաւ: Զայրացա՛ւ: Բարկութիւնը զինք յանկարծ խեղդէր կարծէք:

Անարդա՛ր էր այս աշխարհը, զգուե՛լի՛...: Մեծ Պետութիւնները անարդար էին, զգուե՛լի՛, անո՛նք ալ... բոլո՛րը, միւսնե՛րը, պտիկներն ալ, տկարներն ու դժբախտներն ալ...:

Արիւնը տարածեց իր լման ափին մէջ, ու զայն լայն բացած՝ կոխեց, իրբեւ նշան խորունկ արհամարհանքի, նամակին վրայ, զոր կ'ուզէր յղել Մեծ Պետութիւններուն:

— «Առէ՛ք, առէք ա՛յս ալ, ա՛յս ալ, եւ ա՛յս ալ... մոլտաց: Ահա՛ թէ ի՛նչպէս կը վերջացնեմ նամակս: Կրետէի արիւնը պիտի թափի ձեր գլուխներուն վրայ, եւ ձեր զաւակներուն գլուխներուն, եւ դեռ ձեր թոռներուն գլուխներուն վրայ, Անգլիա՛, Ֆրանսա՛, Իտալիա՛, Աւստրիա՛, Գերմանիա՛, Ռուսիա...»:

Խորտակուած դռնէն՝ թուրքերը խուժեցին ներս, դանակները սեղմած իրենց ափսոսանքներուն մէջ: Տախտանիաւ (իբ հաւատարիմ սպասուհին) գտան ներքին դրան սեմին, թեւերը լայն բացած, արգիլելու համար անոնց անցքը: Մէկ հարուածով զայն փռեցին դետին, կոխկըրտեցին անոր մարմինը ու ներս մտան:

Կը բարձրանային անոնք սանդուխներէն, գոռալով:

Իշխանական հին տունը իր հիմերէն կը շարժէր: Իտոմէնէ, իր դրասենեակէն լսեց անոնց պոռչտուքներն ու վայրագ գետնահարումները, աստիճաններուն վրայ:

Ոտքի ելաւ:

— «Հասած է ժամդ, մտածեց ան. Իտոմէնէ՛, ամօթով մի ձգեր զիս»:

Ապա, շուրջը նայեցաւ, իրբեւ թէ պատուով, ազատորէն մեռնելու ձեւ մը փնտռէր: Զէնք չկար պատերուն վրայ: Պէտք ալ չունէր արդէն: Սուրով չէր կոուեր ան, իր ուղեղո՛վ կը կոուէր. եւ իր սուրը գրիչ մըն էր: Որոշումը առաւ.— «Իմ տեղս հո՛ս է, մրմնջեց, բռնունցքը իջեցնելով դրասեղանին, այստեղէն պայքարեցայ, հո՛ս ալ պէտք է մեռնիմ»:

Նստաւ ու իր գրիչը ձեռք առաւ:

Թուրքերը, ոտքի մէկ հարուածով, բացին սենեակին դուռը, եւ տեսնելով Իտոմէնէն հանդարտ ծռած՝ արիւնաներկ մեծ թուղթի մը վրայ, պահ մը բերանաբաց մնացին:

— Կեավո՛ւր, պոռացին քիչ յետոյ, դրամներդ ո՞ւր կը պահես: Իտոմէնէ գլուխը բարձրացուց.

— Հո՛ս, պատասխանեց հանդարտորէն, ձակատը ցոյց տալով: Անոնցմէ մէկը սկսաւ խնդալ:

— Ի՞նչ է, գլուխդ դրամարկղ մըն է միթէ...:

— Իպրահիմ, կոտորէ՛լ զայն, առաջարկեց ուրիշ մը, նայինք ի՞նչ կայ մէջը...:

Ու նախ քան Իսոմէնէի պատասխանը, թուրքը, եաթաղանի հարուածով մը, ճեղքեց անոր գլուխը, ճակտէն մինչեւ կոկորդը. ու անոր ուղեղը դուրս թափեցաւ, թանձր ու արիւնլուայ, տարածուեցաւ արիւնոտ թուղթին էջին վրայ...:

Յետոյ, ցրուեցան անոնք տան մէջ, կողոպուտի: Տարին մեռեալին հազուատները, ծածկոցները, թիկնաթոռները, սեղանը, վերմակը ու անհետացան:

«Մահ կամ Ագատութիւն»

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

— Էմինէ՛, պէտք է լաւ մտաբերես, ինչ որ սորվեցուցած եմ քեզի մեր կրօնքին մասին: Քահանան պիտի հարցաքննէ քեզ եւ դուն պէտք է պատասխանես:

— Մի՛ վախնար, պտըտի՛կ ամուսինս, ըսաւ թրքուհին ծիծաղելով, այդ բոլոր «խորհուրդներ»ը ջուրի պէս գոց գիտեմ: Հարցուր եւ պիտի տեսնես:

Քափեթան փոլիֆսէնիուս նոյնպէս ծիծաղեցաւ:

— Ուրեմն, ես Մամուլի քահանան եմ, ըսաւ ան, եւ դո՛ւն թրքուհին, որ եկած է քրիստոնեայ մկրտուելու: Լրջացի՛ր, կեղբոնացուր միտքդ, պիտի հարցաքննեմ քեզ եւ դուն պիտի պատասխանես:

— Ես պատրաս եմ, մտիկ կ'ընեմ քեզ: Բայց թոյլ տուր որ շոյեմ քեզ, արգելք չե՞մ ըլլար:

— Ո՛րչ, շոյէ՛, ու մտիկ ըրէ ինչ որ կը հարցնեմ, կը հաւատա՞ս Աստուծոյ:

— Կը հաւատամ Աստուծոյ եւ կ'երկրպագեմ Անոր շնորհաց...:

— Աստուած մէ՞կ է:

— Օ՛ր, հո՛ղ, վախճամ թէ շուարիմ. Ան մէկ է, ե՛ւ... երեք: Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին: Հայրը ծերունի մըն է, քաջառողջ, սպիտակ մօրուքով, եւ Ան, ոտքերը դրած է ամպերու դէզի մը վրայ...: Որդին կարմիր թուշեր ունի, գեղադէմ է, վայելուչ, դեղին պեխերով, քուկիններուդ նման, ու անոր մազերը ճեղքով մը երկուքի բաժնուած են: Ֆէս չի դներ սակայն: Զեռքին գնդակ մը ունի:

— Գնդակ չէ՛, Էմինէ՛, դաւակս, աշխա՛րհն է...:

— Միեւնոյն բանն է...: Անոնց վրայ, աղաւնի մը կայ, թռչելու վրայ: Ա՛յն աղաւնիներէն, որոնք օդին մէջ խաղեր կը սարքեն:

— Աղաւնի չէ՛, Էմինէ՛, դաւակս, քանի՞ անգամ պիտի կրկնեմ քեզի: Հոգին Սո՛ւրբն է...:

— Մեր քով առոնց աղաւնի կ'ըսեն...:

— Լա՛ւ, լա՛ւ, ի՛նչ եւ իցէ, շարունակէ՛:

— Անոնք կը թուին երեք ըլլալ, բայց երեք չեն, մէկ են: Ներէ՛ ինծի, Փոլիքսէնիուս, լաւ չեմ հասկնար այս բանը...:

— Ես ի՞նչ գիտնամ, Էմինէ՛ս, ես ալ չեմ հասկնար: Բայց կարեւորութիւն չունի: Կարեւորը հաւատքն է, կը հաւատա՞ս:

— Կը հաւատա՛մ, չե՞մ կրկնած քեզի քանի քանի անգամներ:

— Ուրեմն շարունակէ, ի՞նչ է Յիսուս:

— Յիսուս Աստուծոյ Որդին է: Ըսի արդէն որ գեղեցիկ էր ան եւ վայելուչ: Երկրի վրայ իջաւ եւ զոհուեցաւ, ազատելու համար մարդիկը: Բայց ի՞նչ են ըրած այդ խեղճերը, Անոր ի՞նչ են ըրած, ի՞նչ պէս գիտնալ...: Ի՛նչ որ որոշ է, ա՛յն է թէ Ան խաչուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ եւ վերստին ցատկեց երկինք... լաւ կ'ըսե՞մ:

— Շատ լաւ, սիրելի Էմինէս, մեթրոպոլիտ մը ըլլալու չափ հասուն ես. սրունքս քիչ մը քերէ, եթէ կը հաճիս: Ուրեմն ան յարութիւն առաւ...:

— Արդէն ըսինք չէ՞, ո՞ւր է խելքդ: Յարութիւն առաւ եւ երկինք ելաւ, առանց սանդուխի, լարախաղացի մը պէս: Փոլիքսէնիո՛ւս, ուրիշ բան մըն ալ կայ, որ չեմ հասկնար:

— Ըսէ թէ ի՛նչ է, ըսէ՛, որ բացատրեմ քեզի:

— Աստուած մըն է Ան, այնպէս չէ՞: Ի՞նչպէս կ'ըլլայ այն ատեն, որ կը խաչուի եւ կը մեռնի: Պիտի ըսես որ երեք օր տեւեց միայն: Ես կ'ըսեմ թէ արդէն շատ է այդ: Ուրեմն, ամբողջ երեք օր Աստուած չկա՞ր...:

— Հա՛յրը կար, եւ Մուրբ Հոգի՛ն...

— Բայց քանի որ կ'ըսես թէ անոնք մէկ են: Ուստի խաչուեցան եւ մեռան երեքն ալ, միասնաբար: Եւ ամբողջ երեք օր երկիրը առանց Աստուծոյ մնաց: Ի՞նչ կը մտածես այս մասին

Քափեթան Փոլիքսէնիոս սկսաւ իր գլուխը քերել:

— Սատանա՛ն տանի, եթէ բան մը կը հասկնամ: Էմիլիէ՛ս, քիչ մը համբերէ՛. վաղը Մանոլի տէրտէրին կը հարցնեմ եւ քեզի կը պատասխանեմ:

Էմիլիէ անդամ մը եւս խեղդուեցաւ ծիծաղէն:

— Հարցընելիք ուրիշ բան մը ունի՞ս, Հայր Փոլիքսէնիոս...:

Քափեթանին աչքերը սակայն լեցուած էին մեղկութեամբ:

— Այս իրիկուն շատ աշխատեցայ, գլուխս կը դառնայ: Աւելի լաւ չէ՞ր ըլլար եթէ սա տէրտէրի պատմութիւնները մէկդի ձգէինք եւ երկնայինք մահճակալին վրայ: Լոյսը մարե՞մ...

— Ձե՞ս հարցըներ թէ ես ի՛նչ լուր ունիմ քեզի հաղորդելիք, ի՞նչ է, մոռցա՞ր...

— Ի՞նչպէս կ'ուզես որ չմոռնամ, ա՛յ անպիտան կին. բաց կուրծքըդ աշղպէս, լուսայորդ արշալոյս մըն է...:

«Մահ կամ Ագառուօթիւն»

ՔԱՓԵԹԱՆ ՍԻՖԱՌԱՍ

(Կռիւր սկսած է արդէն: Բոլոր երիտասարդները լեռներն են բարձրացած, թուրք խուժանին եւ կանոնաւոր զօրքին դիմաց: Հարիւրամեայ Սիֆաքասը «ձերբակալած» է իր թոռնիկը օրերէ ի վեր, տանըվեցամեայ թրասաքին, որուն խելքը միտքը կռուողներուն հետ է: Պապիկը կ'ուզէ այբուբենը սորվել այդ տարիքէն ետք: Իր պատանի ուսուցիչը օրերէ ի վեր կ'աւանդէ իր դասերը, զարմանալով թէ ի՛նչ ուշացած փափաք է իր մեծ հօր ունեցածը: Չմեռ է:)

— Գնա՛, թրասաքի, կը դառնայ պապիկը իր թոռնիկին, գնա՛ եւ լաթ մը բեր, որ օգնես ինձի:

Երբ դրան տախտակները ձիւնին տակէն մէջտեղ ելան, մասմաքուր, պապիկը ծոցեցաւ իր ներկի տուփին վրայ, կափարիչը վերցուց եւ իր վրձինը թաթխեց անոր մէջ:

— Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, մրմնջեց ան :

— Ի՞նչ կ'ուզես ընել, մեծ-հայրիկ :

— Կը տեսնես շուտով :

Վրձինը վերցուց եւ դանդաղ, ջանադիր, սկսաւ շարել գիրերը, դրան վրայ, կարմիր ներկով, իրարու ետեւէ . . . Մ . Ա . Հ . Կ . Ա . Բ . Ա . . .

— Հա՛, հասկցա՛յ, պոռաց Թրասաքի :

Մեծ հայրը ժպտեցաւ :

— Հիմա կը հասկնա՞ս գրել սորվելու իմ խենթութիւնս, յարեց ան : Ես ալ իմ միտքս ունէի : Կ'ուզեմ ամբողջ գիւղը ծածկել գրութիւններով : Պատ մը իսկ պիտի չձգեմ, պիտի բարձրանամ նոյնիսկ դանդակատան վրայ, պիտի երթամ մինչեւ մզկիթը . եւ ամէն տեղ պիտի գրեմ — Մա՛հ կամ ազատութիւն, մա՛հ կամ ազատութիւն, մեռնելէ առաջ :

Սօսելով հանդերձ, ան կը շարունակէր գրել մոզական գիրերը, վրձինի լայն հարուածներով : Մերթ ետ ետ կը քաշուէր, հիանալու համար իր աշխատանքին վրայ :

Ուրեմն կը բաւէր իրարու քով շարել քանի մը դաւազանիկներ եւ քանի մը կլոր գիծեր, որպէսզի այս բոլորը սկսին աղաղակել յանկարծ, մարդկային բերաններու նման, հագագներու նման, հոգիներու նման :

Այս գաղտնիքը կը շարունակէր զարմացնել զայն :

— Ըսէ՛, Թրասաքի, կը հարցնէր ան երբեմն, իրա՞ւ է որ այս նշանները ապրող բաներ են ու կը խօսին : Ի՞նչպէս կ'ըլլայ որ անոնք կը խօսին . . . Տէ՛ր իմ, Տէ՛ր, աճպարար մըն ես Դո՛ւն, մո՛գ մը :

Իր դուռը կ'աղաղակէ՛ր հիմա : Երկար պահ մը մնաց այդպէս, զայն դիտելով : Դուռ մը չէր ան այլեւս . ի՛նքն էր, Քափեթան Սիֆաքասը, իր սրտին երկու լայն դռնակներն էին, որ կ'աղաղակէին հիմա :

-- Լաւ գրեցի՞, Թրասաքի, հարցուց ան մտահոգ, սխալ չկա՞յ :

— Բարձրագոյն նիշը, մեծ հայրիկ, տասի վրայ տասը, պատասխանեց փոքրիկը խնդալով :

— Ուրեմն քալե՛նք, անցնի՛նք, երթանք աւելի հեռուները . . .
«Մա՛հ կամ Ազատութիւն»



Ահա՛ դործը: Ան շատ մօտ է մեզի, նիւթը կարծէք առնուած ըլլար մեր ազատագրական պայքարէն: Բաֆֆիի «Կայծերը»ն են, Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն, տեղ տեղ:

Ամբողջ դար մը սակայն կը բաժնէ հայ հեղինակները Քաղանծաքիէն:

Զանոնք կը բաժնէ նաեւ արուեստը:

Յոյն դրաղէտին վէպը ամէն մարդ կրնայ կարգալ եւ նկատել ի՛րը: Կրնա՞նք ըսել նոյնը մերիններուն համար: Ո՛չ, չենք կրնար ըսել, դժբախտաբար:

Մեր վէպը, նոյնիսկ իր ամէնէն յաջողած ձեւին մէջ, կը մնայ տեղական, մինչեւ այսօր: Մեզմէ դուրս չ'ուզեր ելլել:

Պէտք է փորձենք սակայն, այս կամ այն ձեւով: Պայման է: Եթէ կ'ուզենք մեծնալ, քալել մեր ժամանակին հետ: Եթէ կ'ուզենք արժեւորել մեր մշակոյթը:

Ու ամէն ինչ ունինք յաջողելու համար: Ո՛չ նիւթերը կը պակասին, ո՛չ ապրումը եւ ոչ ալ տաղանդները:

Տեղականէն՝ համամարդկայինին հասնելու անհրաժեշտ ճիգն է որ կը պակսի:

Բոլոր ժողովուրդներու բոլոր մեծ արուեստագէտները ցոյց կուտան մեզի այդ ճամբան:

Յոյց կուտայ նաեւ ահա՛, Քաղանծաքի:

Կրետէ ծնած այս գիւղացին, ամբողջ աշխարհը ոտքի տակ առնելէ, անոնց քաղաքակրթութիւններուն ծանօթանալէ, ուսումնասիրելէ, իւրացնելէ ետք միայն կը հասնի:

Առաջին, — տալ այդ կղզիին բնակիչներուն կեանքը ամէնէն հարողատ կերպով:

Երկրորդ, — տալ մեծագոյն արուեստով :

Ահա ճամբան, զոր ցոյց կուտան մեզի Մեծերը :

Դժուար է այլեւս մեր դարուն ինքնարոյս տաղանդներու սպասել :


Արուեստի գլուխ-գործոցներով յագեցած մեր դարուն, աւելի քան երբեք ճիշդ է այսօր պատասխանը, զոր տուած է ժամանակին Փրանսացի գրագէտը, իրեն ուղղուած հետեւեալ հարցումին .

— Ի՞նչ է հանճարը :

— Երկարատեւ համբերութիւն մը . . . :

Կ. Փ.





ԿԱՐԱՊԻՆ ԵՐԳԸ

Տակաւին նախորդ օրուան զինովութիւնը վրաս էր: Դէպքերուն տպաւորութիւնը կը յամենար մտքիս վրայ պտղած մեղանին պէս՝ ծանր ու յամառ: Բայց մանաւանդ այն տպաւորութիւնը որ դէշ թթուի մը նման կը տարրալուծէր միտքս, զիս կատարեալ քուրջի մը վերածելով: Մերթ ընդ մերթ ընդմիջումի նշաններ կ'արթննային ներսիդիս հոգեկան քայքայումիս դէմ, բայց կը մարէին անմիջապէս, ինչպէս օճառին պղպղակները օդին մէջ:

Պելճիքայէն մինչեւ Տէօնքէրքի արհաւիրքները, անցնելով հիւսիսային ծովու գերեզմաննոցէն, քսան հազարնոց զօրաբաժինի մը երկու հազարի մօտ մնացորդներ, Անգլիոյ վրայով հասած նորմանտական այս զիւղը, կը պատրաստուինք կրկին դէմ դիմաց գտնուելու թշնամիին հետ:

Գերմանները անցեր էին Ռուան քաղաքը եւ անարգել նորմանտական հարթ դաշտավայրէն պիտի անցնէին Քան: Գիւղը պարպուած էր արդէն: Զինուորները օգտուելով ամայութենէն, սկսեր էին սրճարաններու թալանը: Իրիկուան երբ մենք հասանք, քանի մը ընկերներ, ա'լ խմելիք չէր մնացած: Սկսանք շիշերուն յատակները պարպել մեր դաւաթներուն մէջ ու խմել իրարու ետեւէ խառն ի խառն խմիչքները, որոնց ազդեցութիւնը եղաւ անմիջական եւ նողկալի: Գիւղը, գերմաններուն յանձնուելէ առաջ, լքեր էր ինքզինքը, անպաշտպան ու ողբալի, մեր զինովի քմայքներուն: Փողոցէ փողոց կուրառելով իրարու հետ, երգելով կամ պոռչտալով, նոր սրճարան կը փնտռէինք, երբ հրահանգ եկաւ հաւաքուելու հարիւրապետին քով: Ըսուեցաւ որ մէկ կամ երկու ժամէն Գերմանները կրնային դալ: Գիւղին պաշտպանութիւնը յանձնուած էր մեզի: Տակաւին ամբողջութեամբ չէինք վերադիմուած:

Ա'հ, կռիւներու նախորդող այդ անսովոր անդորրը՝ որուն ընթացքին հոգիներուն մէջ անհամբերութիւնը կ'ուռնի, կ'ուռճանայ առիւծի բաշին պէս: Լուռ էինք: Մեր աչքերը անթարթ կը խուզարկէին մուծին մէջ երկարող ճամբան: Ամէն պահ կռիւը կրնար սկսիլ: Կռիւ

մը որուն ելքը ուրիշ բան չէր կրնար ըլլալ եթէ ոչ նորէն նահանջ, միշտ նահանջ, ինչպէս երեսունը՛հինգ օրէ ի վեր, Ֆրանսայի ամբողջ սահմաններուն վրայ: Թ՛չնամին գրաւեր էր արդէն Փարիզը եւ կը յառաջանար երկրին խորքերը, իր առջեւ խուճապի մատնելով հակառակորդ բանակները: Քանի մը օրէն Ֆրանսայի հաշիւն ալ փակուած պիտի ըլլար Աւստրիայէն, Չեխոսլովաքիայէն, Լեհաստանէն ետք, մինչդեռ անդին իր կողմին մէջ Մեծն Բրիտանիան սարսուռի մատնուած կը դողդողար: Գրաւուած երկիրներու ամբողջ արդիւնաբերութեան տէր՝ գերմանական նացի խաւարը պիտի սաւառնէր աշխարհի վրայ, խրոխտ, անպատկառ, ժողովուրդները ենթարկելով ստրկութեան ու յառաջապահ մարդկութեան գրաւած զիրքերը պիտի խորտակուէին մէկ անգամէն:

Այդ պահուն միտքս կուգային բանաստեղծ ընկերոջս՝ Մաքսիմ Ալեքսանդրի խօսքերը.

— Հազար տարի, հազար տարի խաւար պիտի ըլլայ:

*

Սեպտեմբերին բանակ մեկնելու օրս, դռներս դոցած վար կ'իջնէի: Սանդուխներուն վարը նստած գտայ ծերունի խորհրդաւոր Գէորգեանը՝ որ Փարիզ եկեր էր Սթրազպուրկի պարպումէն ետք:

Սորպոնին առջեւ Գէորգեան զաւազանը զարկաւ մայթին ու կանգ առաւ:

— Հէ՛յ վախ, ըսաւ, պիտի քանդուին, քարուքանդ պիտի ըլլան այս քաղաքակրթութեան ապարանքները, պիտի խորտակուի դեղեցիկ Փարիզը: Ծօ՛, ըսաւ ինծի դառնալով, խենթութիւն չընես, դո՛ւյ՛ ճեղիր, ինչո՞ւ պէտք, այս կռիւր մեր կռիւր չէ:

— Ի՞նչպէս թէ մեր կռիւր չէ, ո՞ւր որ ալ ըլլան Ֆաշական ուժերը պէտք է պարտութեան մատնենք: Ան է այսօրուան մեր գլխաւոր թշնամին:

— Զարեհ, խենթ խօսքեր մի ըսեր, ասիկա կարգադրուած բան է, տկարացած զրամատիրութիւնը ամէն տեղ դռները պիտի բանայ Հիթլէրի առջեւ: Մեր կռիւր վերջը պիտի գայ, երբ կարմիր ու սև բանակները վերջապէս իրար դարնուին:

Կարմիր բանակը... աղօտ լոյս մը պլպլաց գինով հոգիիս ստուերներուն մէջ: Վրաս տարօրինակ ուժ մը եկաւ, մխացող գինովութիւնս փրփրած հոգիիս մէջ, միտքս թէեւ չճամ, թմբած, չրթներս արձակեցին իրիկուան մէջ, կոուի երգը.

Allons enfants de la patrie,

Le jour de gloire est arrivé...

Տասը հոգի վրաս ցատկեցին, բերանս կը զոցէին իրենց ձեռքերով, բայց ես կատղած՝ կը սպրդէի անոնց թեւերուն սեղմումէն, պոռալու համար աւելի բարձր:

Վրաս յարձակողներուն ամէնէն յախուռնն էր տաննապետ Գաթօնը, որ իր հուժկու թեւերով անշարժացուցած էր զիս: Քիչ անդին հարիւրապետը նստած քարի մը վրայ, գլխահակ ու մտածկոտ, բնաւ չէր ընդմիջեր:

— Հարիւրապետ, պոռացի, երգէ՛, երգէ ինձի հետ Ալօն գ'անֆանը, գիտէ՞ք թէ ինչ է Ալօն գ'անֆանը, մոռցեր էք, լմնցեր էք:

— Գաթօն հասաւ ետեւէ, բռնեց զիս, առաւ բազուկներուն մէջ:

— Ապուշ, կը պոռար, ապուշ, թշնամին մեզ կը փնտոէ, իսկ դուն պիտի մատնես մեր ներկայութիւնը:

Գաթօն զիս քաշկռտելով առաջնորդեց մեր յարգանքը:

— Պառկէ՛, ըսաւ, պառկէ որ գինովութիւնդ անցնի:

— Ձեմ պառկիր, Գաթօն, մի պնդեր, չեմ ուզեր հնազանդիլ քեզի, դուն միշտ առաջինը եղար կամըլանեան ծակ բացողը եւ առաջինը՝ գայն ձգող փախչողը: Գաթէ՛ն...

Հուժկու ապտակ մը իջաւ երեսիս: Վախկոտ տաննապետիս տըւած էի այդ անունը եւ բոլորը հիմա Գաթօնի տեղ Գաթէն (պոռնիկ) կը յորջորջէին զինքը: Այս անգամ ամսուան մը վրէժը կը լուծէր ինձմէ: Երեսիս վրայ ապտակին տեղը կրակ առած էր ու կը վրնջէր, մինչ տաննապետը երկրորդ ապտակ մը իջեցնելով ու մէջքս թեւերուն մէջ առնելով կ'ուզէր զիս գետնաքարչ ընել, յանկարծ զգալով մէջքիս վրայ պարապնումին ուժը, տեղի տուի: Ուժերս ինկեր էին, մոլուցքս հասեր էր իր սպառումին, բայց դեռ գիտակցութեան նշոյլ մը կ'ուզէր ազատել արժանապատուութիւնս:

— Լա՛ւ, լա՛ւ, ըսի, ձգէ մէջքս, պիտի հանդարտիմ, լա՛ւ, պիտի պառկիմ:

Երբ Գաթօն թեւերը քաշեց, ինկայ յարդէ անկողնիս վրայ ու մինչդեռ ծանր քուն մը կը պողէր ուղեղիս վրայ, կը զգայի որ ուժերս կը լքէին զիս, կը լքէր նաեւ զգայնութեան վերջին հետքը, միայն մէջքիս վրայ թեւերու սեղմումին տեղը զիս կը նեղէր, տարածուելով մարմնիս ամէն ուղղութեամբը ու անցած տեղը թմրեցընելով, քնացնելով, մինչեւ որ ամբողջութեամբ զիս անձնատուր ըրաւ համապարփակ խորտակման մը աւերակային լուութեան:

*

— Շո՛ւտ, շո՛ւտ, երկու վայրկեանէն պատրաստ, կը պոռար Գաթօնի բարձրագոծ ձայնը, որ դժուարաւ կը հասնէր ուղեղիս մէջ յա-

մեցող զինովութեան շողիներէն անցնելով :

— Օն մէ լէ փոն, պոռայ նորէն, ժողվէ տոպրակդ եւ եւ երկու վայրկեանէն գիւղին հրապարակը :

Երբ տոպրակս պատրաստ էր, մէկէն մտքիս ներկայացաւ, երբորդ անգամ ըլլալով, դերի իյնալու սարսափը : Այն ատեն միայն թմրած մարմինիս մէջ միտքս պայծառացաւ ու դուրս վազեցի :

Բոլորը հաւաքուած էին արդէն հրապարակին վրայ :

— Յառա՛ջ, հրամայեց հարիւրապետը եւ զօրասիւնը շարժման մտաւ ոչ թէ դէպի յառաջ, այլ դէպի ետ :

Այդը նոր սկսած էր բացուիլ : Բնութիւնը կ'արթննար իր սովորական հանդիսաւորութեամբ : Հոս հոն հատուկտոր ճուճուց մը : Աքրորի մը երկարաձիգ կանչը ու հեռուն՝ արեւելքի հորիզոնին վրայ՝ երկինքը կը սկսէր ճերմկիլ :

Դանդաղ բայց ստոյգ կերպով զարթնող բնութիւնը որոշ բանի մը կը պատրաստուի, սկսելիք համերգի մը առաջին նօթերը տալով : Բնութիւնը կը պատրաստուէր ընդունելու յաղթական զինուորները, միևս կողմէն մէկ աչքը գոցած՝ մեկնող առանց կռիւի պարտուած զինուորներուն վրայ : Տխուր բան մը կը յածէր օդին մէջ որ պաղ էր բացուող առտուան զովութենէն : Շատերուն կզակները կը կափկափէին անքնութենէն, բայց քանի քայլերը կ'արագանային, մարմինները կը տաքնային ու նահանջը կը ստանար կատարեալ փախուստի մը երեւոյթը :

Ոչ ոք համարձակեցաւ կարգէն դուրս գալ՝ գլուխը դնելու համար վազող ծորակին տակ : Ամէն մէկը սահող շղթային մէկ օղակն էր : Դուրս գալ անկէ, նոյնիսկ վայրկեան մը, կը նշանակէր ըլլալ յետամնաց, իսկ յետամնացը գեղեցիկ որս մըն էր գերութեան, նոյնիսկ մահուան :

Կէս օրուան դէմ հասանք Նուառօ գետը : Կամուրջէն անդին առջեւին ցցուեցաւ, դիմացը՝ բլուրի մը կատարին վրայ թառած Գոնտէ քաղաքը :

Բնակչութիւնը մնացած էր եւ մանաւանդ փախստականներու թիւով խոշորցած, անգբաղ, մտահոգ, դուրս էր թափած տուներէն :

Զինուորական իշխանութիւնը անմիջապէս տէր դարձաւ կացութեան : Հրահանգները սկսան թափիլ կարկուտի պէս : Ոչ ոք փողոցներուն մէջ : Ամէն մարդ իր տունը : Հրապարակը կը պատկանէր զինուորութեան :

— Հոս է որ պիտի ըլլայ ան բանը, ըսաւ Գաթոն՝ որուն աչքերուն մէջ նորէն տարօրինակ փայլ մը երեւցաւ : Այսինքն գոհ չէր : Ըսել կ'ուզէր որ ամէն ճիգ աւելորդ էր, աւելի լաւ էր որ ձգէին ամէն

մարդ իր տունը երթայ, փոխանակ շարունակելու այս կատակերգութիւնը :

Քիչ վերջը զինուորներն ալ հեռացուցին փողոցներէն : Ոստիկանները կը հսկէին հրահանգներու կատարման :

Գաթոնը, ես եւ ուրիշ մը նշանակուեցանք թիւ մէկ հակաթանքային 255նոց թնդանօթ մը վրայ, որուն սպասարկողները հինգ նորակոչներ էին, 18էն 20 տարեկան երիտասարդներ, որոնք առաջին անգամ պիտի գործածէին իրենց զէնքը եւ արդէն անոնց մէջ տեսակ մը մտահոգութիւն կար, նոյնիսկ վախ, նայելով անոնց դէմքին դալկութեան :

Երբ բոլորը դերք առին ու զէնքերու բոյները կազմուեցան եւ ա՛լ ընելիք չմնաց, մէկէն լուսթիւնը հաստատուեցաւ չորս դին, մեր մէջ՝ ու խառնուելով սպասման մեր ներքին լարուած լարերուն, բնութիւնը իր ամբողջ պարունակութեամբ ստացաւ քարացած վիճակ մը : Բլուրին կատարին թառած քաղաքին տուները աչք գոցեցին, փողոցները ամայութեան սաւանին մէջ պլլուած լռեցին եւ լուսթիւնը լափայի պէս հոսելով տեղաւորուեցաւ մինչեւ հեռաւոր դաշտերը : Վճիտ երկնակամարը որ կը պատրաստուէր իրիկնային լեղակազոյն շղարչները ընդունելու, կափարիչի մը պէս գոցուեցաւ մեր վրան :

Վարը, ճամբաներու հանգոյցին նետուած կամուրջը նուաստի վրայ կը ներկայացնէր մեր նայուածքներուն բեմավայրը : Հոնկէ է որ մեր սպասումը կը սպասէր գայիքը : Մեր աչքերը այլեւս եղած քարացած արտայայտութիւններ՝ չէին հեռանար այդ հանգոյցէն, ներքնապէս միայն ունենալով այն անհամբերութիւնը զոր մարդ կ'ունենայ թատրոնի մէջ վարազոյրին ետեւէն զարնուած երրորդ հարուածէն ետք :

Երրորդ հարուածը տրուած էր, բայց վարազոյրը չէր բացուեր : Ու ինչպէս սպասումին երկարութենէն չդիմացող զսպուած հազերը կը սդոցեն ունկնդիրներու ուշադրութիւնը սրահին մէջ, մերթ ընդ մերթ նորակոչներէն մէկը կը լքէր իր անձկութիւնը, հարց տալու համար երեցի մը .

— Ի՞նչպէս բան է կռիւը, գիտէ՞ք, ասիկա մեր «կրակի կնունքն» է, մեր առաջին շփումն է թշնամիին հետ :

Պատասխան չստանալով, պատանին գլուխը կը ծռէր զէնքին վրայ, նայուածքը շեշտակի կրթնցուցած դիմացի կամուրջին :

Ժամերը կ'անցնէին ու տակաւին թշնամին աներեւոյթ կը մնար : Կարծես ան կ'ուզէր մաշեցնել մեր դիմադրութիւնը սպասման մէջ :

Բայց յանկարծ, իրիկուան դէմ, վարազոյրը բացուեցաւ ու կամուրջին վրայ որ գորշ գիծ մըն էր շրջապատի կանաչութեան մէջ, սեւ կէտ մը սկսաւ շարժիլ :

— Պատրա՛սա, պոռաջ նորակոչներու տեղակալը, դիտակը աչքերէն վար առնելով :

Ձափը ճշդեց եւ նոյն պահուն հրամայեց .

— Կրա՛կ :

Հինգ հակաթանքային թնդանօթները միասնաբար փախեցին իրենց փոկորդներու պարունակութիւնը եւ նոյն պահուն կամուրջին վրայ շարժուող սեւ կէտը անշարժացաւ :

Առաջին հակաթանքայինի սպասարկուները վազեցին դէպի կամուրջ : Քիչ վերջը անոնք բարձրացան քաղաք, իրենց հետ բերելով անշարժութեան դատապարտուած կառքին երեք ճամբորդները :

Երեք գերիները անյարիր, անտարբեր, մունջ, ոչ մէկ հարցումի պատասխան կ'ուզէին տալ :

Քաղաքը մէկէն արթնցած էր իր կանխակալ քունէն, դռները բացեր էին նորէն իրենց աչքերը, իսկ փողոցները ստացեր էին կենդանութիւն : Տուներէն դուրս թափեր էր հետաքրքիր բազմութիւն մը : Կիներ անէծք կը թափէին, երեխաները պիշ պիշ կը նայէին այդ բացառիկ էակներուն եւ նախատինքներ կը թափէին հոսկէ հոնկէ :

Գերիները կը շարունակէին մնալ յամառ իրենց լուռութեան մէջ, նայուածքնին կարծես սրբապ՝ բան չէին տեսներ իրենց շուրջէն : Ասիկա աւելի կը զրգոէր ոմանց բարկութիւնը, նոյնիսկ մինչեւ հարուածելու փափաք մը դնելով անոնց մկաններուն մէջ : Բայց զինուորները կը պաշտպանէին գերիները բնակչութեան սպառնալիքին դէմ :

— Յրուեցէք, պոռաջ Գաթոն, մարդ չէ՞ք տեսած, անոնք ալ մեզի պէս մարդ են :

— Մեզի պէս մա՞րդ, պատասխանեց տասնապետ Սիւլէն, որ երբեք չէր սիրեր Գաթոնի կոռուելու տրամազրուութեան պակասը, մեզի պէս մա՞րդ, կրկնեց լքթին տակէն խնդալով, ես պիտի ուզէի զանոնք աւելի մեռած տեսնել հոս քան թէ ողջ :

Յայտնի էր որ գերիները մեծ ճիւղ կը դործադրէին պարտկելու համար իրենց ալյալանքը : Վերջապէս զրգոռուած ամբոխը կրնար յանկարծ շղթայազերծուիլ : Այնպէս որ երբ ոստիկանները ստանձնեցին անոնց պաշտպանութիւնը եւ ցրուեցին ամբոխը, ապահովութեան ներքին շարժումը զոր ունեցան, պահ մը զձուեցաւ անոնց դէմքին վրայ : Ոստիկանները առին տարին զանոնք, բազմութեան պոռչտուքներուն տակ .

— Սպաննեցէ՛ք, մեզի՛ յանձնեցէք :

Այն ատեն բոլորս վերադարձանք մեր դիրքերուն, մեր զէնքերուն : Բնակիչները քաջուեցան իրենց տուները :



Նախորդ օրուան քայլը մէջտեղ հանած էր ձախ ոտքիս բլթամատին ցաւը: Եղունդը միտին մէջ բուսած, դանակի պէս կը կտրէր միտը: Մայրսին Պելճիքայէն մինչեւ Տէօնքէրք նահանջի օրերուն նոյն բանը պատահած էր: Ատկէ շատ գէշ յիշատակներ ունէի: Այրող քաղաքներու փողոցներէն, մինչդեռ ընկերներս հրկիզուող գերաններուն վրայէն ցատկելով կ'անցնէին, ես ստիպուած էի քալել կրակին վրայէն ոտքս քաշկոտելով: Երբ Անգլիա հասանք, կայանին մէջ անդլուհիներ վիրաւոր ոտքեր կը փնտռէին խնամելու համար: Հոն վերջասպէս կրցայ ազատիլ այդ ցաւին մղձաւանջէն: Հիմա չկային առնոք եւ ոչ ալ սանիտարական սպասարկութիւն: Ուստի քաշուեցայ ճամբուն եզերքը ծառի մը բունին տակ եւ սկսայ ես ինքս խնամել ոտքս:

Արեւը արդէն ծագեր էր հարթ մրգաստաններուն վրայ եւ ինձորենիններու անհատնում շարքերուն տակերէն զովութիւնը սկսած էր նահանջել: Մէկը եկաւ քովս եւ կանգնեցաւ ծառին բունն ի վեր: Գլուխս վեցուցի տեսնելու համար թէ ո՞վ էր, թէ եւ տալիատին դոյնէն յայտնի էր արդէն որ գերմանացի զինուոր մըն էր, բայց զարմանքս մեծ եղաւ երբ տեսայ թէ նախորդ իրիկուան մեր բռնած գերիներէն մէկն էր: Ան կանգնեց էր ծառին կրթնած, երազկոտ նայուածքը յառած դաշտավայրին:

Երբ գլուխս վերցուցի, ան կամաց մը մըմնջաց.

— Գեղեցիկ է Փրանսան:

— Այո՛, ըսի, գեղեցիկ է Փրանսան:

— Ա՛հ, ըրաւ, գերմաներէն գիտէ՞ք:

— Այո՛, կրկնեց, գեղեցիկ է Փրանսան, մշակոյթի երկիր, մշակութային ժողովուրդ, բայց մեզի, նոր ժամանակներու զինուորներուն վիճակուեցաւ զայն փրկել արիւնարբու բլուզողբաղներու ձեռքերէն եւ յանձնել իր բուն տիրոջը Փրանսացի ժողովուրդին:

— Որպէսզի ան դառնայ Գերմանիոյ պարտիզպանը, մրթմրթացի բլթիս տակէն:

Գերմանացին հեզնանքով մը խնդաց:

— Գիտեմ, ըսաւ, դուք դեռ թունաւորուած էք բլուզողբաղներու քարոզչութեամբ, բայց պիտի տեսնէք շուտով, պիտի համոզուիք: Գերմանիոյ հետ ձեռք ձեռքի պիտի հաստատենք ժողովուրդներուն երջանկութիւնը: Ես ալ ձեզի պէս էի առաջ: Ես սրտէթցի ուսանող եմ: Ձեխ կապիտալիստները կ'ուզէին մեզ ալ թունաւորել, բայց

Փիւրէրը ազատագրեց մեզ եւ մենք հիմա հասկցած ենք թէ ո՞ւր է ճշմարտութիւնը :

— Կը տեսնենք, ըսի, թերահաւատ ժպիտ մը ուղղելով իրեն :

Սիւտէթցի ուսանողը սկսաւ երկայն դասախօսութիւն մը, բայց արդէն բերանս պապանձած էր : Ա՛լ բառ մը չկրցաւ ելլել բերնէս, ինչպէս այն բոլորէն՝ որոնք գերմանացիին կատակէն վերջ քաշուեցան ու քէնոտ լուծիւն մը պահեցին :

Քիչ վերջը հրամանը եկաւ : Ճամբայ ելանք դէպի Տամֆոռն, բայց առանց կարգի, խոռն ի խոռն, եւ մեր ամբողջ զինամթերքով, երկրին ներսերը :

Ջարմանալի կը թուէր մեզի այս քայլը կողք կողքի թշնամիին հետ : Եւ արդէն խօսք կար որ Տամֆոռն հասնելով, մէկ երկու օրէն երբ զինադադարը կնքուի, մեզի մեր տունները պիտի ղրկէին : Պատուոյ խօսք տրուած էր : Գերմանական հնարք : Յառաջխաղացումը այնքան շանթահարիչ էր, որ գերմանները մեզմով զբաղուելու ժամանակ չունէին : Դեռ հիւսիսային Ֆրանսայի կռիւներէն յետամնաց զինուորներուն զէնքերը կոտորելով ազատ կը ձգէին զիրենք, լքուած ճամբաներուն վրայ :

Իրիկունը հասանք Տամֆոռն : Ձօրանոցին դռները բացուեցան մեր առջեւ : Ժամ մը չտեւեց որ արդէն տեղաւորուած էինք, իբրեւ թէ հոն պիտի անցնէինք մեր կեանքը եւ խումբ առ խումբ կազմակերպեցինք մեր գոյութիւնը : Պահեստի ամբարները պարպուեցան, ամէն մէկը ամբարեց հագուստեղէն, կօշիկ, ուտելիք, կարծես մարտիներու երամ մը անցած ըլլար :

Երկու օր չտեւեց զբօսաշրջիկի կեանքը : Կեր, խմէ, պտտէ, մինչդեռ գերմանացիները շարունակ կ'անցնէին առանց զարմանալու մեր ներկայութենէն, մեր զինեալ պահակներէն, առանց նուազագոյն կառելորութիւն մը ընծայելու մեզի :

Երկրորդ օրը կայծակի պէս տարածուեցաւ լուր թէ մեր բոլոր սպաները առանձնացած էին տան մը մէջ եւ միայն ատճիւտան մը կրնար կապ ունենալ անոնց եւ մեր միջեւ : Հակառակ այս երեւոյթիին որ ակնյայտնի կերպով կը պարզէր մեր գլխուն գալիքը, մեր սպաները կը շարունակէին մեզ հաւաստիացնել թէ պարզ զինուորները որեւէ արգելարանի չպիտի ենթարկուին : Բայց կասկածը մեր մտքին մէջ արթնցած էր արդէն ու այդ թակարդէն ազատելու միակ միջոցը կը հանդիսանար փախչիլը :

— Էօ՛քս, կ'ըսէր անդադար սէրժանտը, փախչինք :

— Փախչինք, ո՞ւր փախչինք : Ձորս կողմը ծով, մենք մէջտեղը փոքրիկ կղզի մը :

— Դուն չես հասկնար դեռ որ գերմանները անարգել կը յառա-

ջանան, հետեւաբար միայն ասֆալտապատ ճամբաներուն տէրն են: Կարելի է փախչել դաշտերէն, բլուրներէն ու հասնիլ Մարսիլիա, անկէ Ափրիկէ:

— Ատիկա կ'ըսես դուն մէկու մը որ իշութիւնը ունեցաւ Անգլիայէն վերադառնալո՞ւ:

— Ձե՞ս ուզեր ըմբռնել որ վաղն ալ մեզի գերի պիտի բռնեն:

— Ըմբռնելը դժուար բան մը չէ, կրնաս արդէն ինքզինքդ գերի նկատել: Եւ տարօրինակը այն է այս պատմութեան մէջ որ գերի ենք տակաւին գէնքը ձեռքերնիս: Եւ չենք իսկ ամ չնար: Ինծի համար պարզ է, ես հայ եմ: Ինծի համար փոխուած բան մը չկայ: Տակաւին ազատ մարդ ըլլալս չեմ զգացած որ գերի ըլլալս ըմբռնեմ: Քսան տարուան տարագրութիւն, որ տեսակ մը գերութիւն է ինքնին: Իսկ անկէ առաջ, մի՛ հարցնէր: Կը բաւէ որ գիտնաս թէ ինչո՞ւ համար հոս եմ: Բայց այդ բանն ալ չես գիտեր: Գիտես հաւանաբար դուն ալ «աղտոտ հայ» ըսել: Կարելի՞ է մաքուր ըլլալ, կը հարցնեմ քեզի, մաքուր ըլլալ գերութեան մէջ, կամ տարագրութեան, միեւնոյնն է: Բայց վաղը այդ ալ կը հասկնաս: Դեռ շատ բան ունիս հասկնալիք:

Եւ այդ հասկնալիքը չուշացաւ:

Մեր Տամֆոռն հասնելուն երրորդ օրն էր: Կէսօրուան դէմ, առաջին անգամ ըլլալով, գերմանացի մը ներս մտաւ զօրանոցին մեծ դռնէն: Անոր տեսքն իսկ արդէն անհաճոյ պաղութիւն մը նետեց յունիւսի տաք օդին մէջ եւ կարծես արեւին փայլը տժգունեցաւ: Արտաքինով կիրթ, բարեձեւ գերմանացի սպան իրեն կանչեց զօրանոցին պատասխանատու Փրանսացի ատճիւտանը, զոր շնորհաւորեց կարգապահութեան եւ մաքրութեան համար: Յետոյ աւելցուց.

— Երկու ժամէն պիտի գանք, բոլոր զէնքերը մէկտեղ հաւաքեցէք:

Ատճիւտանը բաւական դժուարութիւն կրեց համոզելու համար թէ հրամանը պէտք էր անմիջապէս գործադրել, եթէ ոչ կրնար դէժ հետեւանքներ ունենալ:

— Հոն՝ ուր ենք, աւելցուց տխուր ձայնով մը, եթէ չապիկնիս ալ հանել տան, պիտի հանենք:

Ո՛չ, մինչեւ հող չէր կրնար երթալ մարդը: Հաւատացուցած էին իրեն որ կռիւր լմնցած էր: Ձէնքը պիտի յանձնէր տուն երթալու համար: Խուլ, ուռճացող դիմադրութիւն մը կը ծաւալէր հիմա սիրտերուն մէջ: Եթէ գէնքերը յանձնելու ալ ըլլային, ատիկա կրնար ըլլալ միայն անգործածելի վիճակի մէջ:

Ի դուր ատճիւտանը կը յիշեցնէր գերմանացի տեղակալին հրամանը, ցուցամատի սպառնանքը միացնելով խօսքին.

— Ապրը քայմը սապրա՛ծը:

Տանապետ իմէն դիւրին չկրցաւ կլլել այս հապը: Իր խումբին.

գնդացիները յանձնեց առանց քիւլասի: Ատճիւտանը կտոր կտոր եղաւ: Անկարելի էր, էմէն քիւլասը չպիտի յանձնէր: Արդէն պէտքարանին մէջ նետած էր:

— Թող երթան առնեն, կ'ըսէր, ք...ին մէջէն:

Երկու ժամը լմննալու վրայ էր: Դեռ ատճիւտանը կը պայքարէր էմէին հետ որ վերջին պահուն համակերպեցաւ: Գնաց բերաւ գնդացիներին քիւլասը եւ տուաւ ատճիւտանին որ լայն շունչ մը քաշեց, իսկ էմէին ձախ աչքին ծայրէն արցունքի ծանր կաթիլ մը կախուած մնաց:

Երբ խոշոր բեռնատարը եկաւ աղմուկ հանելով եւ գերման զինուորներու «լօս»երու եւ «չընէլ»ներու հրմշտուքով, էմէն փախաւ, գնաց ննջարան ու պառկեցաւ: Շատեր հետեւեցան անոր օրինակին: Քիչ վերջը դժոխային աղմուկով մը բեռնատարը մեկնեցաւ: Ահաւոր լուրջութիւն մը ինկաւ զօրանոցին վրայ: Պատուհանին առջեւէն մէկը կանչեց.

— Նայեցէ՛ք:

Ամէնքս ցատկեցինք պատուհանին առջեւ:

Մեր պահակները տեղերնին տուեր էին գերմանացի պահակներու:

Միայն Գաթոնը տեղէն չչարժեցաւ: Ան պառկած էր իր մահճակալին վրայ, թեւերը գլխուն տակ դրած: Միտպաղաղ, անփայլ նայուածք մը կը պտտցնէր իր շուրջը: Կարելի չէր հասկնալ թէ դո՛հ էր թէ ընկճուած: Կարծեմ թէ աւելի անտարբեր էր: Անցած դարձածները իրեն չէին հետաքրքրեր: Կը յիշեմ որ օր մը կ'ըսէր ինձի զգուած՝ «կազմակերպուած» նահանջներէն, ինքնիրեն համոզում մը գոյացնելու համար. «Մինչեւ հիմա շահագործուած էինք Փրանսացի կապիտալիստներէն, այսուհետեւ գերմանացի կապիտալիստները պիտի շահագործեն մեզ: Այսպէս կամ այնպէս, ի՞նչ կը փոխուի մեզի համար»:

— Ձեմ կրնար նայիլ սըւոնց սաղաւարտներուն, պոռաց մէկը յանկարծ պատուհանին առջեւէն: Ջիզերս ոտքի կ'ելլեն:

— Չուքալիի կը նմանի, ըսաւ ուրիշ մը խնդալով եւ խնդացնելով շուրջինները:

— Ապուշ չեն գերմանացիները, ըսաւ մէկը, չուքալիի կը նմանին, բայց լաւ կը պաշտպանեն գլուխը, մինչեւ վիզը:

— Ըսելիք չկայ, մէջ ինկաւ ուրիշ մը, մերինները աւելի գեղապիտական են եւ աւելի համակրելի կը դարձնեն մեր զինուորները:

— Բայց լաւ կը պաշտպանեն գլուխը: Կարեւորը այս է:

— Գերմանացիքն գլխէն չեն սպաններ, աւելցոց Քրանտական սա-
ղաւարտի պաշտպանը: Գերմանացիքն պէտք է սրտէն դարնել:

Էմէն մէջ ինկաւ գլխով-ոտքով: Խեղաբարի ձեւեր ունէր: Թեւերը
պար կը բռնէին օդին մէջ:

— Ի՞նչ սիրտ, գերմանացիքն սիրտ չունի որ սիրտէն սպաննեն:
Անոր գլուխը պէտք է ճղմես, այլ գոթոխային մտածումներու մեքե
նան:

Կէս օրէն վերջը անցաւ լուռ: Ամէն մէկը ինքն իր մէջ ամփոփ-
ուած, ինքն իր ճակատագրին խորհրդածութիւններով: Ո՛վ. միտքս կը
բանէր, կը բանէր փախչելու ցանկութիւններով, խառն ի խուռն:
Թակարդ իյնալէ առաջ անասունը չզգուշանար թակարդէն: Բայց երբ
ինկաւ մէջը, ա՛լ ուրիշ բան չի մտածեր: Գուրս գալ թակարդէն: Ու
ինքզինքը կը դարնէ աջ ու ձախ, տապալտեկելով:

Այս ապօրէն արդեւաբանական անձնական անարգանքի մը անդրա-
դարձումը ունեցաւ մեր վրան: Ննջարանին ետեւը պատուհաններէն
մէկուն առջեւ կանգնած թաղուեր էր մտածումներու մէջ: Տամֆոռնը
բարձրագիւրք գիւղաքաղաք մըն է, այլ կողմէն գիտուած, վարը՝
անծայրածիր նորմանգական դաշտանկարն է՝ որուն հեռունները կը
կորսուէին անխայլ հորիզոնին տակ: Լուռթիւնը մէկէն պաշարած էր
մեզ: Քանի մը օրէ ի վեր, թէեւ խզուած աշխարհի միւս մասերէն,
ապրեր էինք, խանդավառուեր ու տրամեր օդերուն մէջէն քաղուած
լուրերով: Հիմա երկինքը իջեր էր մեր վրան, ծանր, կափարիչի մը
պէս, զօրանոցին առջեւ պահակ կեցած գերմանացիներուն սաղաւարտ-
ներուն նման:

— Վերջ ի վերջոյ, պայթեցաւ մէկէն տասնապետ էմէ, մենք
գերի չենք: Ղէնքը ձեռքերնիւ կռիւի մէջ չենք բռնուած. համաձայ-
նութեամբ քաշուեր ենք կրակէն: Ասիկա բախտաւորութիւն է:

— Ատիկա դուն գնա՛ մեծ հայրիկիդ պատմէ, ըսաւ Գաթոն հեզ-
նանքով:

— Օն է փէ օ բաք, օն է փէ օ բաք... պոռպոռց Մառսէլ, նետ-
ուելով ննջարանին ազատ միջոցին մէջ եւ սկսաւ խելագար պարել՝
«Տախտոն լա Գարմանեօր» եւ աջ թեւը վերցնելով, ինչպէս Ռուսէ տը
Լիլ Սթրազպուրկի մէջ առաջին անգամ Վա Մարսէլէզը երգեց, պոռաց
խռպոտ ձայնով մը՝ «Լէ պօշ ա լա լանթէրն...»:

Գաթոնը տեղէն ցատկեց, բռնեց Մառսէլի վիզին եւ զայն նետե-
լով անկողնին վրայ, պոռաց:

— Պառկէ՛, ձայն մի հաներ, գլուխնիւ կը ցաւցնես:

Մառսէլ երեխայի պէս հնազանդեցաւ: Շիփ չիտակ երկնցաւ ան-
կողնին վրայ ու մնաց անշարժ: Անոր դէմքը արտասովոր արտայայ-

տուութիւն մը ունէր, թուիս ու սուր դէմքը՝ որուն վրայ աչքերը դուրս պիտի թափէին կարծես : Երթունքները լիմոնի գոյն առած :

Այդ պահուն կանչուեցանք : Հարիւրապետը մեզի կը կանչէր, իր մարդերը : Երբ վարը, դաշտին մէջ մեկուսի հաւաքուեցանք անոր շուրջ, կարծես ազատութեան հով մը սկսած էր փչել : Փոխուած էինք : Կարծեցինք թէ նորէն ազատ մարդեր էինք եղած : Բայց ի զուր : Հարիւրապետը եկած էր մեզմէ հրաժեշտ առնելու եւ մեզ խրատելու որ հանդիստ մնանք, հնազանդ ըլլանք : Ֆրանսան նոր կառավարութիւն մը ունէր յանձինս մարաջախտ Բէթէնի : Խաղաղութիւնը պիտի չուշանար :

— Բայց Անգլիա՞ն... մեր զինակի՞ցը... հարցուց էմէ :

— Ետտով անոր հաշիւն ալ կրնայ մաքրուիլ :

Ան գլուխէն հարուած մը ստացածի պէս եղաւ եւ յանկարծ ըմբոստացաւ :

— Ո՛չ, ըսաւ, հարիւրապետ, Անգլիան մինչեւ յաղթանակ զէնքը վար չ'առնէր :

Ձէինք կրնար հաւատալ որ մեր հարիւրապետը դիտումնաւոր կերպով հնազանդութիւն կը քարոզէր : Պարտութեան հարուածը խորտակած էր անոր ներքին զսպանակները եւ անոր ծանր յոգնութիւնը դանդաղօրէն կը փոխանցուէր մեր մէջ :

— Այո՛, ըսաւ հարիւրապետը, կոտորուած ձայնով մը, խօսքը ուղղելով էմէին, իրաւունք ունիս, բայց ատիկա երկար տարիներու հարց է : Պէտք է ապրիլ, այս կարելորդ, եւ սպասել :

Ընդհանուր տրտմութիւն մը սկսած էր յածիլ ճանճի մը պէս մեր գլուխներուն շուրջ : Բայց այդ ապրելու բնազդն իսկ յանկարծ արթնցաւ մէջս : Պէտք չէր ենթարկուիլ, դեռ բան մը կար ընելիք : Փախչիլ...

— Հարիւրապետ, ըսի, անձկազին ձայնով, բայց դեռ կրնանք բան մը ընել. փախչիլ, ազատիլ այս թակարդէն :

— Ո՛ւր կ'ուզէք փախչիլ :

— Գերմանացիները իրենց զրահապատ բանակներով միայն մեծ խճուղիներուն տէրն են : Մեզի կը մնան դաշտերն, լեռնային ճամբաները, կարելի է փախչիլ մինչեւ հարաւ, մինչեւ Մարտիլիա :

Հարիւրապետը քծիծաղ մը ունեցաւ .

— Թերեւս արդէն այս պահուն իսկ անոնք իջած են Միջերկրականի եզերքները :

Այս անգամ հարուածը սահմուկեցուցիչ եղաւ : Անկարելի էր : 42 օրուան մէջ ահագին Ֆրանսան մէկ ծայրէն միւսը... Անհաւատալի կը թուէր մեզի, բայց նուազ չէր ընկճեր մեր հոգիները, անհաւատալի

Թուելով հանդերձ, հաւանական ալ կրնար ըլլալ, քանի որ քսան օր չէր տեւեր հեծելանիւով քուռ տը Ծրանսի մրցում մը:

Հարիւրապետը մեկնեցաւ: Գերմանացի զինուոր մը կ'ընկերանար իրեն, զէնքը ուսին: Դարձանք զօրանոց: Այդ իրիկուն մեր կերակուրն անգամ համ չունէր եւ մեր կծկուած կողորդները անատակ էին ընդունելու նոյնիսկ համադամ կերակուրներ:

Գիշերը քունն ալ չմօտեցաւ մեր աչքերուն: Մերթ ընդ մերթ մէկը հարց կուտար իր դրացիին.

— Կը քնանա՞ս:

— Ո՛չ, կը պատասխանէր միւսը:

Ու լռութիւնը նորէն կը գոցէր ձայնէն բացուած ճեղքը միջոցին մէջ:

Բայց հազիւ անքնութեան պատճառած յոգնութենէն մեր աչքերը գոցուեր էին լուսաբացի անուշ պահուն, երբ յանկարծ զահրումարի պէս պայթեցան գերմաներէն գոռգոռոցներով բռուերը.

— Լո՛ւ, առփշտէիքն, Լո՛ւ, ա՛յ, ըշմե՛լ, ըշմե՛լ...

Անկողիններուն մէջ մէկ հատ վարանոզ չկար: Սարսափը ուրականի պէս սրբեց, մաքրեց: Հինգ վայրկեան վերջ բոլորն ալ բակն էին: Անոնք որոնք քանի մը օր առաջ թալանի տուած էին զօրանոցին մթերանոցները, ծանր բեռերով եկած էին եւ չէին համակերպիր տակաւին բաժնուիլ անոնցմէ:

Ժամը 6ին գերիներու շարանը շարժեցաւ տեղէն, սկսաւ դուրս գալ զօրանոցին մեծ դուռնէն ու երկարիլ լայն ճանապարհն ի վար, շրջապատուած ամէն հինգ մէթրի վրայ գերման պահակներով որոնք զէնքերը ձեռքերնին ունէին՝ ամէն պահի քաջելու պատրաստ: Բարեբախտաբար երկար չէր ճամբան եւ անոր ծայրը կայարան մը չէր: 8-10 քիլոմէթր անդին, Քուլթէոն գիւղը: Ճամբան աջին վրայ արդէն իսկ քաշուեր էին փշաթելերը, կազմելով ընդարձակ ճամբար մը որ մէկ օրուան մէջ պիտի ընդունէր 10.000 դերիներ:

2. Ո.



Պ. ԹԵՍՏ

(« Monsieur Teste »)

(Հատուած)

Ամբողջութեամբ ենթարկուէ՛ լաւագոյն վայրկեանիդ, մեծագոյն յիշատակիդ :

Ա՛յն է որ պէտք է ճանչնալ որպէս ժամանակին թագաւոր :

Մեծագոյն յիշատակը,

Վիճակը՝ ուր զարձեալ քեզ պէտք է առաջնորդէ ամէն վարդապետութեան :

Ա՛յն է որ ինքզինքդ արհամարհել կուտայ, ինչպէս նաեւ արգարօրէն նախընտրել :

Ամէն ինչ անոր համեմատ, որ քու զարգացումիդ մէջ չափ մը կը դնէ, աստիճաններ :

Եւ եթէ այդ պէտք է պարտիլ քեզմէ դուրս ուրիշի մը — ուրացիր եւ գիտցիր զայն :

Կեդրոն ձեռնհասութեան, արհամարհանքի, անբծութեան :

Այն ինչ որ պիտի ուզէի ըլլալ, ատոր համար կը զոհուիմ ներքնապէս :

*

Գաղափարը, սկզբունքը, վայլակը, առաջին վիճակին առաջին վայրկեանը, ոտտումը, շարունակութենէն շեղումը... : Պատրաստութիւններն ու գործադրութիւնները ուրիշներուն (կը ձգեմ) : Հո՛ր նե-

տէ ուռկանը: Ահաւաստիկ ծովուն տեղը ուր պիտի գտնէք: Մնաք բարով:

... Ամէն ինչ յտակ նիւթերէ վերակառուցանելու հին ըզձա՛նքը (ահա՛ ձեզի պարբերական յուշարարը), միմիայն որոշ տարրերէ, միմիայն հպումներէ եւ դժագրուած շրջանակներէ, միմիայն տիրապետուած ձեւերէ, եւ ոչ մէկ տարտամութիւն:



Մտածութիւններ իր աճման (ասսանտան) եւ սերման (տեսանտան) վրայ:

Մէկին այս տարօրինակ արձագանգները:

Ի՞նչ, սա միակտուր ԵՍը իրմէ դուրս մասեր կը գտնէ...

... Դիտելու սա ձեւը որ ամբողջովին կը պարունակէ զիս, կը դուշակէ, որոշ ժպիտի մը մէջ կը պատրաստէ մեկին մտածումս, — բանիմ կեցուածքը՝ ընդմէջ բերնիս ձախ անկեան եւ թարթիչներու ճնշումներուն եւ աչքիս շարժիչներուն գալարումներուն — եսին էական արարքը, այս սահմանումը, այս եզակի պայմանը — գոյութիւնունի սա միւս երեսին վրայ, ռեւէ մահացածի երեսին վրայ, այս մէկուն վրայ արդէն, տակաւին այն միւսին վրայ — զանազան տարիքներու ժամանակաշրջաններու — է՛հ, զիտեմ — այդ նախատիպերը նոյն բաները չեն զգացած, բոլորովին տարբեր են իրենց փորձերն ալ, գիտութիւններն ալ... բայց — ի՞նչ փոյթ — իրար մէջ չեն սխալիր — զիրար կը գուշակեն:

Մտթեմաթիւքական սքանչելի կապակցութիւնը մարդոց — Մարդոց սքանչելի ուսողական կապակցութիւն — ի՞նչ ըսել այս յարաբերութիւններու եւ համապատասխանատուութիւններու անտառին մասին: (Մենք հոովմայեցիներուն ունեցած բռներուն կէսն իսկ չունինք այդ մասին խօսելու համար): Ի՞նչ խառնուրդներ եւ ի՞նչ ճապաղումներ:

Անսահմանօրէն կը զգամ կարենալը, կամենալը, որովհետեւ անսահմանօրէն կը զգամ անձեւը, եւ զիպուածը որ զանոնք կը լուցնէ, կը հանդուրժէ եւ կը ձգտի վերստին տիրանալ իր ճակատագրական ազատութեան, իր անայլայլ դէմքին, իր հաւասարաբախտ մակարդակին:

ՄԻԱՍԻՆ

Այլ ոք, ծաղրանկարս, նախատիպս, երկուքն ալ:

Ես ալ ճիշտ լուսթեան մէջ է որ կը զոհեմ ուրիշները, որ կ'այրիւմ' քթին տակ — հողոյս:

Եւ ե՛ս, որ կը բզքտեմ, եւ իր իսկ միշտ վերա-ծամուած էանիւթով կը սնուցանեմ, միակ սնունդը՝ որպէսզի աճի՛ր:

*

Այլ ոք որ կը սիրեմ տկար. զօրաւոր՝ կը պաշտեմ եւ կը խմեմ. — կը նախընտրեմ քեզ՝ խելացի եւ կրաւորական... բայց եթէ, սակաւութիւնը, եւ մինչեւ որ, թերեւս — ուրիշ մը նոյնը քուի — ճշդը-րիտ պատասխան մը...

Մինչ այդ, ի՛նչ փոյթ մնացածը:

*

Ինչո՞վ կը գատորոշուի սա յետմիջօրէն, սա կեղծ լոյսը, այսօրը, սա ծանօթ միջազէպերը, սա թուղթերն, սա որեւէ ամբողջը ուրիշ ամբողջէ մը, յեռանդէ (ավան-հիէո) մը: Զգայարանքները բաւական նուրբ չեն տեսնելու համար որ փոփոխութիւնները տեղի ունեցած են: Գիտեմ որ նոյն օրը չէ, բայց միայն այդքան:

Բաւական նուրբ չեն զգայարանքներս քակելու համար սա ա՛յն-քան նուրբ կամ ա՛յնքան խորունկ երկը որ անցեալն է. բաւական նուրբ չեն, որպէսզի կարենամ գատորոշել սա վայրն ու սա պատը որ իրարու յար եւ նման չեն, զուցէ, այն ինչին որ էին առջի ր:

ԵԹԷ ԵՍԸ ԿԱՐԵՆԱՐ ԽՕՍԻԼ

Ի՛նչ նախատինք սա գրուատիքը: — Կը համարձակին զիս գովե՛ր: Միթէ ամէն պատկումէ անդին չե՞մ: Ահա՛ թէ ինչ պիտի ըսէր Ես մը, եթէ ինքն իսկ համարձակէր: —

Եւ եթէ եսը կարենար խօսիլ (Յանկերդ):

Փ. Վալերի
Թարգմ Յ. Մարտունի

*

Ն Ո Ի Ի Ր Ո Ի Մ

Յնձա՛, ցնձա՛, Հայոց Աշխարհ,
Այսօր խորհուրդն է Յարութեան.
Թող գան Որդիք Արարատի,
Թող դողանջէ Էջմիածին...

Այստեղ, երկինքը վկայ է,
Այստեղ կայ մի Ազգ սրբագան,
Որ խաչեցաւ, որ քաղեցաւ
Եւ որ հիմա

Տօնն է տօնում իր յարութեան:

Այստեղ, վկայ է Արարատ,

Ձկայ մի փար,

Ձկայ մի քումբ, մի քիզ գետին,

Որ սուրբ արեան ու արցունքի

Վտակներով չէ ոռոգուած.

Որ իր ցեղի եղունգներով

Ձէ փանդակուած.

Ձկայ մի շէն ու մի կոթող,

Որ իր որդոց կամքի երգով

Մարտիրոսական օրհասով

Ձէ պանծացուած...

Այստեղ ամէն փար խաչփար է,
Ամէն մի քուղք՝ մի մագաղաթ.

Ամէն մի լեռ մի տանար է,

Գերեզմաններն այստեղ մի մի

Լուսարձակներ են իդէպի...

Դարերն այստեղ

Պատկառանքով են խոկացել

Ու անցել.

Գետերն իրեց ալիքներին

Տղմուտների,

Անմահ դիցերգն են գրուցել

Ու յացել...

Հեռո՛ւ Հայոց
 Ողբը խաբւած անմահութեան
 Եւ կորուսեալ դրախտների :
 Հայի համար չկայ եդէ՛մ,
 Որ իբ կեանքի մեծ երկունքով,
 Սրտի վերքով
 Զէ սրբացւած :
 Զկայ երկինք ու յաւերժ կեանք,
 Որից մարդու
 Քրտինքի հոտ չի բուրվառում :

Սարդարաբատ

Քո չորացւած մահիւնների
 Ամէն մի ծիլն ու ծղօտը
 Նա անաշխատ դրախտի հետ
 Զի փոխելու .
 Այնտեղ առաջին ոտք դրած ,
 Ոգիացած ու ինքնատոյգ
 Ամէն բարդի
 Աստեղագարդ երկինքներին
 Նւիրական մի աշխարհի
 Գեղահրաշ մի մարդկութեան
 Գալիք փառքն է սրբասացում :

Յնծա՛, ցնծա՛, Հայոց Աշխարհ,
 Այսօր խորհուրդն է Յարութեան,
 Թող գան Որդիք Արարատի,
 Թող դողանջէ էջմիածին .
 Բա՛րճր, բա՛րճր թող դողանջէ,
 Թող Սփիւռքն արթնանայ .
 Թող արթնանայ Սփիւռքն համայն —
 Այսօր խորհուրդն է Յարութեան,
 Այսօր Հաւաքն է Հայութեան...

ՂՕՂԱ ՆՁՆԵՐ

Ո՛հ, ողջո՛յն, ողջո՛յն,
 Իմ անմահ անցեալ,
 Անցեալ իմ անձի,
 Համայն գոյութեան:
 Յիշատակ յաւերժ
 Դաշտ ու գետերի,
 Հին ու հեռու ւրանների,
 Լուռ, ամօթխած
 Տուն ու ծառի...

Եւ դո՛ւ, երկիր,
 Ո՛վ բնութիւն —
 Հագար ու մի խորշ ու խոռոչ,
 Ծով ու ծմակ,
 Լեռ ու լագուր,
 Ասէ՛ք, ո՞վ է
 Ձեզնով շնչում
 Ու հատաչում...

Ո՞վ է սիրել ու երագել,
 Յոյզն ու յոյսը
 Կտակելով գալիքներին.
 Ո՞վ է, ո՞վ է աշուղ դարձել՝
 Անշէջ յուշի, խոր կարօտի
 Խաղ է կանչում ու ձայն տալիս
 Հեռաւորին:
 Խաղ է կանչում, տաղ է երգում
 Ամէն, ամէն սիրտ ու հոգի՝
 Պատարագել ի տես երկնի,
 Ի տես, ի լուր հեռաւորի՝
 Կարօտն այս սուրբ
 Այս ափսոսանքն անկատմելի...

Աշխարհ, ի՛մ աշխարհ,
 Քո երգն է իմ մէջ.
 Աշխարհ, ի՛մ աշխարհ,
 Քո վերքն է իմ մէջ, —
 Քո երգն է իմ մէջ,
 Քո վերքն է իմ մէջ,
 Քո վերքն է իմ մէջ —

ԿԱՐՕՏ

Կրակէն ծնած թռչուն մ'էր ան . յոյսն ապրելու
Քանի մ'օր եւս տաք շունչիդ մէջ, վերջին գարուն,
Հըրատոչոր ո՛վ դուն, տենչանքը վարդերուն,
Որոնց արիւնը քափանցած էր դարերու,

Եւ սիրտերու անդռհանքին՝ որ անոնց հեւք
Կու տար սաստիկ, երագայիւն վերջին գարուն,
Կրակէն ծընած թռչուն մ'եղի՛ր մահուրնէս ետք,
Եւ լայն քեւերդ ծիածանէ՛ ծաղիկներուն :

Իսկ եթէ նեւ մ'անցնի սիրտէդ, թո՛ղ շիթ առ շիթ
Գերեզմանիս վըրայ ծաղկի վա՛րդն արիւնիդ,
Հասնի մինչեւ շրթումքներուս ցուրտ կարօտին .

Միայն ձիւները դեռ հիւսուին բիրեղալոյս,
Եւ դառնահամ չըլլայ երբեք ազն աչքերուս,
Վաղցրամաննչ բաժակիդ ցօղ, գարո՛ւն վերջին . . .

Ա . Ե .

ԲԵՐԿՐԻԿ-ԻՆ

Օր մը ինծի տո՛ւր կեանքէդ, լոյս ու ծաղիկ օրերէդ,
 Քու աչքերէդ դիտեմ բիւր տեսիլքներն աշխարհի .
 Ու քափանցել փորձեմ դեռ խորհուրդներուն արփաւտ՝
 Որոնց գաղտնիքն հասկցայ ծեր հոգիովս անձկալի :

Օր մը միայն, որպէսզի քաղցրը ձայնովըդ կանչեմ
 Սքտէս վազուց բաժնւած հին կարօտներըս դարձեալ,
 Քու ձեռքերովըդ բարի սիրոյ ծառին ոստերէն
 Քաղեմ ոսկի պտուղներ, դեռ կարենամ արբենայ :

Քու ոտքերովըդ անցնիմ նոր նամբայէ մը սպիտակ,
 Որ զիս տանի լուսեղէն հանգրուանէ հանգրուան,
 Ու շրթներովդ համբուրեմ ծիրանի վարդն իրիկուան :

Ականջներովդ ունկնդրեմ աստեղավառ երկնի տակ,
 Երբ երագով ստեղծուած առաջին մարդն էր անմեղ,
 Տիեզերքին անհունէն հասնող ձայները բիրեղ :

*

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

Ժպտուն, անվեհեր՝ խրոխտ ինքս ինձի դէմ՝
 Մարդերը համբելու քաղաք վերադարձայ,
 Ու հեշտանքով ըսի ես ինձի՝
 Կորովդ չարերուն ժանիքներովը սրբէ՛... .

Յոգնած, խստասիրտ՝ հպարտ ինքս ինձի դէմ՝
 Ճըրադս վառելու տուն վերադարձայ,
 Ու հաւատքով ըսի ես ինձի՝
 Բարիներդ վերագտած՝ անձկօրէն սիրէ՛... .

Ծիծաղը դէմքին՝ լարուած ինքս ինձի դէմ՝
 Գգուանքն իր փղձկելու Անոր վերադարձայ,
 Ու հեղնանքով ըսի ես ինձի՝
 Առօրեային բարիքը հերոսաբար կըրէ՛... .

Նկուն, յուսաբեկ՝ պարտուած ինքս ինձի դէմ՝
 Մեղքերս ապրելու վերադարձայ ես,
 Ու զրկանքով ըսի ես ինձի՝
 Ժայթքումն արիւնիդ արբանքով դիտէ՛ :

*

Վ. ԵՐԱՆԳԵԱՆ

ՀՐԱԻԵՐ

Բաց են փեղկերը հողույս
 Թեւերն ինչպէս՝ կարօտակէզ իմ մօրըս
 Պանդուխտ գաւկին տուն դարձող,
 Ըմբոշխնելու քե՛զ անպարփակ տիեզերք:

Փեղկերուն դէմ հողույ կոյս
 Բիւր աղջիկներ՝ թըխածամ եւ ոսկեվարս,
 Սէրերով բոց ու կարմիր՝
 Քեզ ինձ կ'ուզեն — բարեգուլթ տե՛նչ — իբըր հարս :

Բաց է մեհեանը հողույս,
 Տառապանքն ուր՝ իբըր զարթօնք, իբը՛ր յոյս,
 Ձիս կը խնկէ... Էութիւն... .

Ու կ'ուզէ քեզ իբր սէր վերջին իմ կեանքին :

Գմբէթին մէջն իմ հողույն
 Կը զօղանջեն՝ նըլիրական հաւատքով՝
 Տենչ, կիրք, կարօտ եւ անհուն,
 Որ իմս ըլլաս դո՛ւն տիեզերք անվրդով :

Ն Ի Ի Ե Ո Ր Ք

Ժխորը գտել է վզիս երակը
Մարդը կոտորակոզ մառախուղի մէջ
Հին կեանքը
Նոր ժանիփնեքով
Կեկորդս է սեղմում

Ես մի տարի է հայելու չեմ նայել
Քաբելոնեան աշտարակի գագաթին
Հինգերորդ պողոտայի վրայ
Ես կանգնել եմ
Միս-մեռակ
Պաղատագին
Ու կեանքի, երկաթի ու ծուխի շաղախից
Խմորագնդեր եմ սարքում

Իմ համայն էութիւնը ծորել է

Ես վեցամսեայ մի սաղմ եմ
Հէնց իմ արգանդում
Որի սպունգն է պորտը
Եսիս ծալփերում կորել է:

*

Հ Ի Ն Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ը

Քաղաքը, որ այցելեցիմք այն երեկոյ —
էամօրէն եւ իրական մի անապատ.

Եւ կամարը միակ յարկի
հոր լագուրն էր եթերի:

Աստուածներ պաղած կեանքերով,
Եւ հնութեան ու խոնջութեան յատուկ քալածութեամբ
համագումար...

Պղատունեան ցուրտ ու պաղ հեշտանքներ
չհամբուրող շրթներով,
Բայց տարփօրէն պապակած...

Հայեացքներ սառած եւ անհազարդ...

Առհաւական երազանք,
անբջանք ու խոկում եւ տեսիլքներ...

Կանխակալուած մտայնութիւն կամակոր ու պողպատէ
Եւ մթութեան երկրպագու ճակատներ...

Հրաշքներ անիրական ու կեղծ
պննազարդուած երկիւղներով անեղծ...

Մեւ լումաներ, գրքացների փէշերին ցանուցիք,
Եւ սպասող աղերսողների կռիւ մի ամբողջ...

Ու ստուերների կատաղի ոխ...

Զարքերի մութ գոյութեան աղէտ...

Դիւահարներ փրփրող ու գագազած...

Եւ մորթատուղ մարդիկ, անսահմանօրէն հլու,
կոշտացած ձեռքերին նիւղեր ձիթեմու...

Յաշտուղ հաւատացեալների բազմանդամ մի հօտ
բռնաբարուած օրէնքներով...

Մթնոլորտը քնդացնող անիմաստ աղմուկ...

Կատաղօրէն քափահարուող բազուկներ...

Եւ անսկիզբ ու անվախեան մի շուրջպար
մոլեռանդ քափով,
անսահման գոհասեղանի հարթութեան վրայ...

Այսպէս տեսնմ գերեզմանատունն այն,
համօրէն եւ իրական մի անապատ.
Եւ կամարը միակ դամբանի
մուք լազուարթն էր եթերի:



Կ Ո Ջ Ո Ւ Ն Ք

Երբ հրաւերն էր կոչունքի՝ չեկար . չեկա՞ն քեզի պէս ,
Անոնք՝ որոնց համար ես գուրգուրանքով մը անհուն ,
Պատրաստեցի սեղաններ իմ հոգիիս տունէն ներս ,
Եւ յուսացի աղընդէտ , սպասեցի ձեր գալուն :

Չեկար , չեկա՞ն քեզի պէս , անոնք՝ որոնց համար հոն ,
Ազնուագոյնն իղձերուս , ապրումներուս բերի ես .
Սպասեցիք հոն ի գուր մինչեւ իջաւ երեկոն ,
Ոտնաձայներն ընտանի՝ մինչեւ մեռան վերջապէս :

Չեկար , չեկա՞ն քեզի պէս . եւ այն ատեն անհաշիւ՝
Ես կանչեցի , առի ներս ուղեւորներ անծանօթ ,
Ուղեւորներ՝ արբեցան որոնք մինչե՛ւ առաւօտ .

Ու մեկնեցա՞ն երջանիկ , առանց որ մէկն անոնցմէ
Դառնար ետ՝ հարց տար թէ ո՞վ , այս խենթն ո՞վ էր վերջապէս ,

Այնքան բարի , մարդասէր , լուարթախօհ ,

Երբ հրաւերն էր կոչունքի , չեկար , չեկա՞ն քեզի պէս . . . :

* * *



ԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Տբթ. Ֆ. Ռ. Մարթին աշխարհահռչակ գեղազէտ մըն էր որուն մեծարժէք հեղինակութեան մէջ շահեկան տեսութիւններ ու ծանօթութիւններ կան նաեւ հայկական արուեստի մասին: Կ'արժէ որ թարգմանաբար հոս ներկայացուի հայկական արուեստի մասին իր տողերը, որոնց կը կցեմ հարկ եղած ծանօթութիւնները:

Իր գորգարուեստի կոթողային գործին մէջ՝ ան հատուած մը ունի հետեւեալ խորագրով. «Կապերտներ Կեդրոնական Փոքր Ասիայէն, Վերին Միջագետքէն եւ Հայաստանէն», ուր կ'ըսէ.

«Մարդօ Փօլօ առաջին Եւրոպացին է որ կը յիշէ Փոքր-Ասիական գորգեր՝ իր գործին երկրորդ գլխուն մէջ, ուր ինք կը ճամբորդէր ԺԳ. դարուն երբ սելջուզ Սուլթանները իրենց ուժին զազաթնակէտը հասած էին (1):

«Արաբ հեղինակներ Արեւելեան Փոքր Ասիոյ ճարտարարուեստներուն մասին շատ բան չունին ըսելիք, ոչ ալ հիւսիսային Միջագետքի եւ Հայաստանի վերաբերմամբ (2): Մուզաստասի կ'ըսէ թէ

(*) A History of Oriental Rugs Before 1800 : Հրատարակուած 1908ին, ցկարագարդ, որ աչիւր ծառայած է Արմենակ Սազրգեանի Հայկական գորգերու մասին փոքր ուսումնասիրութեան:

(1) Մարթօ Փօլօի Ուղեգրութիւնը (որուն այս մասը քարգմանած էմ «Բագմավէպ» 1930, էջ 315-17) Տր. Մարթիւնի ըմբռնածին պէս չէ: Մ. Փօլօ Թուրքմանիա ըսելով կ'ըմբռնէ Գոնիա-Կեսարիա-Սեբաստիա եւ այս վայրերուն գորգերն է որ կը գովէ: Փօլօ հայերը կը յիշէ իբր Գլխաւոր գորգագործներ:

(2) Գուցէ Տր. Մարթիւնի, այդ օրերուն, անծանօթ մնացած է, սակայն մեզի այսօր ծանօթ են հոյս վկայութիւններ արաբական հին

Ամիգ (Տիրապէքիր) նշանաւոր էր իր բուրդէ արտադրութեանց համար, որոնք գլխաւորաբար կ'արտածուէին: Տապիլ (Դուին) Արաքս գետին մօտ, Հայաստանի մահմետական մայրաքաղաքին բրդեղէնները ներկուած գիրմըգով (Որդան կարմիր) շատ յարգի էին: Հայաստան նշանաւոր էր իր դօտիններուն, ծածկոցներուն, կապերտներուն, դորգերուն, սփռոցներուն, բարձերուն եւ վարագոյրներուն համար, եւ սակայն ամենէն աւելի հեռուները եւ լայնօրէն համբաւեալ էր իր մանրչակագոյն գիրմիգ դոյնին համար, որ Արաբացիք Հայկական գոյն կը կոչէին որ ծիրանագոյնին չափ թանկազին նկատուած էր: Կ'արտածուէր մինչեւ Հնդկաստան եւ Պարսիկները կը դանդաթէին թէ այս գոյնը այնքան սուղ էր որ գործածել չէին կրնար: Նոյն ատեն շատ փափուկ ըլլալուն միայն մետաքս եւ բուրդ ներկելու կարելի էր գործածել, իսկ բամպակի եւ ուրիշ նիւթերու համար ո՛չ: Կ'արտադրուէր միջատէ մը որ Հայաստանի կաղնիի տերեւներուն վրայ կ'աճէր (3): Անոր կարմիր-մանրչակագոյնը պէտք էր որ գրեթէ ծիրանագոյնի փոխուէր, որ բոլոր հայկական գորգերուն վրայ կը գտնենք, սակայն ընդհանրապէս փոքր գծամասերու մէջ: Պարսկաստանի մէջ կը տեսնենք այս գոյնը շատ հազուադէպօրէն: Քանի մը գորգերէն, որ հոս հրատարակուած են, մին (գործին մէջ նկար 18 Փոքր Ասիական գորգերու) ունի, եւ մենք կը հանդիպինք միայն Հայաստանի արեւմտեան կողմէն եղող գորգերուն վրայ: Այս յատկանշական գոյնը մեծ դեր մը կը խաղայ գարդարելու համար արեւելեան արաբագարդը (արապէսֆ) որ կը զարգարէ 1201 թ. հայկական գրչագիր մը: Այնտեղ կը գտնենք գոյններու նոյն խառնուրդը, որոնց կը հանդիպինք Հայաստանէն մնացած հնագոյն գորգերու մէջ, որ նոյնպէս մեզի կը հայթայթէ ամենակարեւոր ապացոյցը անոնց ուր շինուած ըլլալուն (4):

մատենագրական աղբիւրներէ Հայաստանի արուեստ-արհեստներու մասին:

(3) Որդան Կարմիրը գուտ Հայկական արտադրութիւն մըն էր, որ սակայն յարգելի հեղինակին կարծածին պէս «կաղնիի տերեւներու» վրայ չէր որ կը գոյանար Հայաստանի մէջ, այլ գետնատարած խոտի տերեւներու վրայ: Որդան Կարմիրի մասին գրած եմ երկար ԲԱԶԱՄՎԷՊի 1931-1932 թիւերուն մէջ (1932ին գրոյնով արտատպուած): 60 տեսակ միջատակարմիրներ կան, ոմանք Հայաստանէն դուրս աշխարհամասերու մէջ արդարեւ կաղնիի տերեւներու վրայ կ'աճին, սակայն անոնց կարմիրը երբեք հաւասար չէ Որդանին:

(4) Այս գրչագիրն է որուն մասին Ա(րմենակ) Ս(ագրգեան) կը

«Այս աշխարհամասէն մնացած գրականութեան մասին ծանօթութեան պէս հազուադիւր է նաեւ նոյն շրջանէն մնացած իրերը, գուցէ Հայաստանի բարձր լեռները չեն հետադատուած, սակայն կը խորհիմ որ շատ քիչ բան մնացած է հոն: Վերին Միջագետք եւ Հայաստան շատ երջանիկ պատմութիւն մը չունին աւերուած ըլլալով քրդական վայրի ցեղերէ:

Անոնք միայն իրենց փափաքածը կը պահեն կամ ինչ բանի որ պէտք ունին: Գուցէ իրենց ընտանեկան հարստութեանց մէջ կարելի ըլլայ գտնել կտորներ իրապէս հետաքրքրական: Սակայն քիւրտ մը կը նախընտրէ մեռնիլ կամ սովամահ ըլլալ նախ քան երկար ատեն իր ընտանեաց մէջ պահուած իր մը վաճառելը: Թէեւ գորգերու հետ ուղղակի առնչութիւն մը չունի բայց ես կը խորհիմ որ այս իրերէն քանի մը հատի նկարը հրատարակելը պարզապէս հետաքրքրական է. ես գանոնք վերջերս գտայ: Ասոնք միշտ կընան օժանդակել բացատրելու համար կարգ մը շահեկան մանրամասնութիւններ, եւ կընան լուսաբանել խաւարը որ կը տիրէ այս շատ հետաքրքրական շրջանին վրայ:»

«Հնագոյն իրը Սասանեան ոճով մեծ պնակ մըն է, դեղին անագապղինձէ ցցաքանդակ գործ մը: Երկար ատեն գործածուած է, քանի որ ուռուցիկ մասերը ցցաքանդակին՝ մաշած են: Զարգերը կը բաղկանան կեղերոնին շուրջ համակեղրոն շրջանակներէ, մէջտեղը գրաւուած է չորս գոյգ սիրամարդերով եւ չորս ծաղկամաններով: Յետոյ կուգայ փոքր շրջանակ մը ձուկերու, ապա կամարներով լայն շրջանակ

գրէր. «Այս հատորը՝ 1896ի ջարդերէն յետոյ՝ եկեղեցիները եւ դպրոցները վերաշինելու նպատակաւ Սեբաստիայի եւ Թօգատի մէջ ծախու դրուած ձեռագիրներու հաւաքածոյի վը մաս կը կազմէ: Պետրոս Եպիսկոպոս հրամայած էր այս վաճառուը եւ երիտասարդ Հայ վաճառական մը, Տ. Իննուոնեան (պէտք է ըլլայ Իննուոնեան) անոնց մեծագոյն մասը գնուած էր. իսկ անոնցմէ հնագոյնը եւ ամենակարեւորը ծախուած էր Մ. Մարթէնի (սլսալ, ո՛չ հնագոյնը եւ ո՛չ ալ ամենակարեւորն էր: Յ. Բ.), որ իր գրքին մէկ ծանօթութեան մէջ, գայն ապագային հրատարակելու դիտաւորութիւնն ունեցալը կը յայտնէ:» (ՇԱՆՏ. Կ. Պոլիս, 1919, էջ 417): Արդեօք ողբացեալ Սագրգեան սխալ ըմբռներ է Մարթէնի ըսածը, քանի որ նման բան մը չգտանք այս գործին մէջ: Գրչագիրը գրուած էր 1201ին Դարանաղեաց եւ Եկեղեցաց Աւագ վանքին մէջ: Զեռագիրները որոնք Պետրոս Եպիսկոպոսէն գնուած էին Փարիզ Իննուոնեան եղբայրներէ, հետգիտէ ծախուեցան, որոնցմէ վերջին հինգ հատը ինքս գնեցի 1930ին:

մը, որոնց իւրաքանչիւր երկրորդը անկիրենաւորուած է յաջորդ կոր կամարով :»

«Այս շրջանակներէն դուրս կայ ուրիշ մը, կազմուած տերեւներով, դարձեալ աւելի մեծ կոր կամարներով շրջանակ մը, սիրամարգերուն պոչը յար եւ նման են ձեւով՝ կանուխ մահմետական շրջանի սասանեան ժամանակէն յիշատակարաններու վրայ գտնուող պոչերուն : Սասանեան զեղարուեստին վիշապներուն պոչերը կերպարանափոխուած են սիրամարգերու, ինչպէս որ մենք կը գտնենք Թաֆ ի Պաղատան բարձրաքանդակին վրայ կամ Կ. Պոլսոյ Կայսերական թանգարանին ցցաքանդակին մէջ եւ կամ Միւնիխի Արքայական Գրադարանին Նիտրք-Մուլսքըրի Ապէս Ուոդա (1002-1025) Աւետարանին ոսկի կափարիչին կիտուածագարդ պզտիկ տախտակին վրայ, կամ մէջը սասանեան մետաքս դիպակներուն : Զուկերը նման են Խալիֆաներու շրջանի արուեստին անագապղնձեայ իրերու վրայիններուն : Կամարները՝ մենք կը հանդիպինք Գուգէիւր Ամրայէն եւ նոյնիսկ շատ կանուխ Քուֆի գուրաններու մէջ : Կամարներու այս շարադրութիւնը երկար շարքերով, լեցուած բուսազարդերով, շատ սովորական է Վերին Միջագետքի զեղարուեստին, մասնաւորաբար գրչագիրներուն մէջ : Կամարներուն միջեւ գտնուած եռանկիւններուն մէջ կան մանր թռչուններ : Մենք այս թռչուններուն կը հանդիպինք 1000 թուականէն ետզ շայկական ձեռագիրներուն մէջ, նոյն կերպով գետեղուած : Այս պնակին բուսական զարդերը կը յիշեցնեն նաեւ Պերլինի Պէօք Շիմֆիլ թանգարանին փղոսկրէ գոհարատուփին վրայ եղածները : Անոնք աւելի ուշ են քան Սիւրիական Մէջագագա պալատին բարձրաքանդակներուն վրայի եղածները : Անոնք կը մօտենան Եգիպտոս գտնուած մանր, քանդակուած, ոսկորներուն վրայի զարդերուն : Թէեւ կը խորհիմ որ վերջինները նկատելի կերպով աւելի հին են : Ես հարկ եղածին չափրազդատական նիւթ չունիմ մանրամասնութեանց մէջ մտնելու համար իւրաքանչիւր կամարին բոյսերուն եւ ծաղիկներուն, որոնք վաթսունեւերեք հատ են (չորս հատը կը պակսին) եւ որոնցմէ ոչ մին կրկնութիւն մըն է ուրիշի մը (նոյն շարքին) : Կամարներէն շատերը լեցուած են որթատունկերով կամ փոքր ծաղկամանով մը, ոմանք ալ կենաց սուրբ ծառով : Ես մասնաղէտներուն կը թողում այս հետաքրքրական կտորներուն ուսումնասիրութիւնը, եւ վստահ եմ որ ասիկա չուտով պիտի ապացուցուի թէ անոնք շատ կանուխ ժամանակ են, դուցէ Հարուն-էլ-Ռաշիդի ատեններէն :»

«Ռուսական հաւաքածոներուն մէջ ինձի ծանօթ են նոյն դեղին անագապղնձէ քանի մը կտորներ, նոյն ձեւով զարդարուած կամարներու մէջ բոյսերով, ասոնք եւ դեռ Կովկասեան հաւաքածոներու մէջ

գտնուող ուրիշ նմոյշներով կը յուսամ ապագայ ուսումնասիրութեամբ մը բացատրել շատ մը մուլթ կէտեր վերին Միջագետքի գեղարուեստի պատմութեան մէջ, եւ ցոյց տալ կապակցութիւն հին եւ Սասանեան գեղարուեստի հետ» : (5)

«Հայաստան խալիֆաներուն ժամանակ նկատուած էր ծանօթ եւ նոյնիսկ համբաւուող կեդրոն մը հիւսուածեղէններու ճարտարարուեստին , քանի որ վկայութիւնները ցոյց կուտան մեզի թէ Եգիպտոսի մէջ կ'արտադրուէին բազմաթիւ գեղեցիկ ծիրանագոյն հիւսուածեղէններ կարասիներու համար , նման Հայաստանի մէջ շինուածներուն : Տիրապէքիր նշանաւոր էր իր բրդեղէն ապրանքներուն համար , որոնց մէջ էին հաւանաբար եւ գորգեր : Իսկ միւս կողմէ բոլոր հին աշխարհագիրները լուծեամբ կ'անցնին Ռումի (Փոքր Ասիա) վրայէն իբր գորգ եւ հիւսուածեղէն ապրանք արտադրող (Անդ , էջ 7) :»

«Մեզի ծանօթ է որ Նատիր Շահ քրիստոնեայ գործաւորներ գործածեց Մէշաղի դամբարանին կառուցման համար : Էւ զարմանալու չենք հանդիպելով հայ գորգագործներու մասնաւորաբար արեւմտեան Պարսկաստանի մէջ : 1750 թուականէն իրական Ֆերազան կոչուած գորգի մը վրայ կը գտնենք հայերէն արձանագրութիւն մը , հայ բանասէրէ մը գրուած , եւ մանր շրջանակի մը մէջ շատ լաւ հիւսուած :

Կ. Պոլսոյ եւ Փոքր Ասիոյ մէջ Հայերը շատ ճարտար նկատուած են : Միջին դարերէն սկսեալ իրենք ինքնուրոյն գեղարուեստ մը չունեցան , այլ պարզապէս իրենց տէրերուն արուեստին է՝ որ փոխ առած են եւ միայն իրենց կրօնական արուեստին մէջ պահած են քիչ մը իրենց հին գեղարուեստէն , որ ցարդ կատարուածէն շատ աւելի պետք է ուսումնասիրել , քանի որ շատ կարեւոր է թէ Պարսիկ եւ թէ Թուրք արուեստին համար (6) , ցոյց տալու համար Բիւզանդական ներշնչումը : Ես կը խորհիմ որ նոյնիսկ եկեղեցական արուեստին մէջ Հայաստանի , Բիւզանդական ազդեցութիւնը այնքան մեծ չէ որքան որ ընդհանրապէս կը կարծուի : Իբր գործաւոր Հայերը յաճախ գտնուած են Թուրքերու ծառայութեան մէջ , մասնաւորաբար իբր ոսկերիչ եւ

(5) ԺԲ հատուած :

(6) Ճիշդ չէ որ հայերը լոկ արհեստագործ եղած են : Թէ՛ Պարսիկ եւ թէ Թուրք արուեստական արտադրութեան մէջ հայերը իրենց արուեստէն եւ արհեստէն շատ խոշոր բաժին մը բերած են , գորգերու , հիւսուածեղէններու , յալսնապակիներու , ոսկերչութեան , արծաթագործութեան եւ պղնձագործութեան մէջ եւայլն , որոնց մասին հոս աւելի չեմք ծանրանար : Թրքական գեղարուեստ մը ինքնին գոյութիւն չունի : Եղածը թրքացում է լոկ :

արծաթագործ անոնք առանց ճարտարութեան չեն (7) : Անոնք թուրքերը շատ լաւ հասկցած են» : (էջ 88)

«Հիւսիսային Շուէտի մէջ, ի Մօրա, Անդէրս Զօռսի պատկանող մէկ ձեռագործը այնքան նման է գոյներով ԺԳ դարուն Հայաստան շինուած գորգերուն որ անկարելի չէ խորհել թէ Սկանտինավիացիները իրենց գոյներու եղանակաւորումը ստացած ըլլան այս (Հայկական գորգերու) ազրիւրներէն : Ասոր պատճառը այն է որ Շուէտացիներ իբր գինուոր գտնուած են Կ. Պոլիս եւ Մերձաւոր Արեւելք : Նորվեգեան Թագաւորաց Պատմութիւնը կը պարունակէ Հառալդ Հաւէնդրադի պատմութիւնը, որ 1036-1037 թուականին կը մասնակցէր Սիւրիոյ եւ Հայաստանի մէջ կատարուող պատերազմներուն նախ քան Յոյներու հետ Սիկելիա երթալը 1038 թուականին :» (էջ 143)

Տր. Մարթին օգտուելով Պօտէէ կը գրէ. «Լիզպօնա նաեւ Ամսդէրտամ, Պարսիկներ, որոնք զլիւսաւորաբար Հայ վաճառականներ էին, կը բնակէին, եւ իրենց ներածած ապրանքներուն մէջ յատկապէս գորգերը անուանի ապրանքներ էին :» (էջ 74) :

* * *

Այդքան է Տր. Մարթինի վկայութիւնը Հայոց մասնաւորաբար գորգարուեստին մասին : Բնական է 1908էն առաջ երբ ան իր այս գործը կը իմրագրէր հայ արուեստին մասին մեր զիտցածը մեծ բան մը չէր, եւ կարելի չէր որ օտար գրող մը, մանաւանդ հայերէնի անծանօթ, կարենար ասկէ աւելի բան մը ըսել :

Խիստ շահեկան է որ հեղինակը կարծես սուր հոտառութեամբ մը կանխատեսեր է կարեւորութիւնը, իր սահմանափակ տուեալներով, Հայկական արուեստին :

Թարգմ. եւ ծանօթագր.՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

*

(7) Նրբաշխատ արհեստաւորներ եղած են հայերը, որոնցմէ Սավաֆեան Պարսիկ ոսկերչութիւնը եւ հիւսուածագործութիւնը մեծապէս օգտուած է արուեստով եւ արհեստով : Ոսկերիչ Սիմոն, օրինակի համար որ ԺԶ դարուն արքունի ոսկերիչ էր Պարսկաստան եւն. : Իսկ քրքիական ոսկերչութիւնը, դիպագործութիւնը Կ. Պոլիս եւ գաւառները ԲՈԼՆՈՐՈՎԻՆ հայոց եւ մասամբ յոյներու ձեռքն էր, թէ՛ արուեստով եւ թէ՛ արհեստով, անուրանալիօրէն :

ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՐԵՐՈՒ ՄԷՁԷՆ

Բ.

Ը մտնենք Երեւանի Պետական Պատմութեան Թանգարանին կամարակապ սիւնագարդ շէնքէն ներս: Տնօրէնն է Փրոֆ. Կարօ Ղաֆազարեան որուն բեղուն գործունէութեան շնամեակը տօնուեցաւ Երեւանի մէջ մէկ քանի տարի առաջ: Ան մասնակցած է Հնագիտական բազմաթիւ արշաւանքներու, ղեկավարած է Դուինի եւ այլ պեղումներ: Ունի արժէքաւոր բազմաթիւ հրատարակած աշխատութիւններ:

Երեւանի Պատմ. Թանգարանը հիմնուած է 1921ին: Ունի Հնագիտական, նախապատմական, դրամագիտական, միջնադարեան ճարտարապետութեան եւ քանդակագործութեան, ազգագրութեան, հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան բաժիններ:

Թանգարան մը որ 35 կամ 40 տարուան կեանք մը ունի, ինչպիսին է Երեւանի Թանգարանը, իր պարունակած դանձերուն արժէքովը եւ քանակովը, խնամուած կազմակերպութեամբը եւ ցուցադրութեամբը, այցելուին, ըլլա՛յ ան օտար կամ հայ, կրնայ միայն դնահատանքին եւ հիացումին արժանանալ:

Հոս կան հայրենի հողին վրայ Հնագոյն ժամանակներէ, հազարամեակներ առաջ ապրած բնիկներու՝ պեղումներով յայտնաբերուած առարկաները: Յուցադրուած են Շէնգաւիթի, Սեւանայ լճի, Կարմիր Բլուրի, Դուինի եւ Անիի պեղումներէն հազուադիւս իրեղէններ: Իրարու յաջորդող Հնագոյն դարաշրջաններու Անտաշ քարի, Նոր քարի Դարի, Պղինձի, Պրոնզի դարերէն, արհեստագիտութեան յաջորդական զարգացումը վկայող ռազմական, տնտեսական, երկրագործական գործիքներ, խեցեղէններ, զարդեղէններ, արուեստի գործեր եւայլն:

Պրոնզէ դարը հարուստ է մասնաւորապէս Սեւանայ լիւին պեղումներով յայտնաբերուած հարուստ հունձքովը որ Ք. Ա. 2000-1200 ամեակներու շրջանի պատմութիւնը կուզայ լուսաւորել: 1956ին Դիտական Թանգարանին Հնագիտական արշաւախումբը կատարեց պեղումներ Լճաչնի մօտ, ուր քաշուած ջուրերուն տակ երեւան եկան բազմաթիւ դամբաններ, քաղաքի մը աւերակները, որոնք ըստ Արգիշտի Թագաւորին թողած արձանագրութեան՝ կը կարծուի թէ Դեղունի քաղաքի աւերակներն են:

Երեք տարուայ ընթացքին պեղուած են 70 դամբանաթումբեր տարբեր ժամանակներէ, որոնք տուած են շատ հարուստ իրեղէններ, զէնքեր, կենցաղային առարկաներ, զարդեղէններ, խեցեղէններ, բազմաթիւ կաւէ ամաններ: Այդ դամբաններէն երկուքը 13-12րդ դարերէն, կը պատկանէին ցեղապետներու: Մէկուն դանկին մօտ գտնուեցան քառանիւ սալ մը որուն անիւները շինուած էին հաստ դերաններով, պրոնզէ մարտակառքի նմուշ մը, որ կը ներկայացնէ եր-

կանիւ կառք մը, որուն վրայ նստած են երկու սաղաւարտակիր զինուորայիններ, կառքին լծուած են երկու ձիեր, լուծին վրայ 4 թռչուններ: Որոնցէ սուր մը քանդակագարդ պատեանով, եռաժանի մը՝ իշխանութեան խորհրդանիշ եւ այլ առարկաներ: Միւս դամբանաբլուրին մէջ ցեղապետը թաղուած է իր կնոջ, երախային եւ ինը ծառաներու հետ, հոն կային քառանիւ եւ երկանիւ սալալիններ որոնցմէ մէկը ունէր կամարածեւ ծածկ մը, նաեւ սուրբեր, բազմաթիւ ուլունքներ, յուռութքներ, կոճակներ, ծակոտկէն բոժոժներ, եւայլն: (10)

Լճաչէնի այս առարկաները ցուցադրուած՝ այցելուին առջեւ, ցոյց կուտան Հայաստանի բնիկներուն մշակոյթի զարգացման յաջորդական շրջանները եւ անոնց դրացի երկիրներու հետ ունեցած յարաբերութիւնները:

Կարմիր Բլուրի պեղումներով յայտնաբերուեցան Քրիստոսէ առաջ Տրք-Ղբ դարերու Ուրարտական թագաւորներու շինարարութիւնները, անոնց քաղաքակրթութեան թողած բազմաթիւ իրեղէնները: 1936ին պատահաբար գտնուած Ուրարտական սեպագիր գրութիւն մը քարի մը վրայ, եկաւ յայտնելու Կարմիր Բլուրի աւերակներուն զաղտնիքը: Յայտնուեցան Արգիշտիի որդի Ռուսա թագաւորին կողմէ կառուցուած վիթիարի պալատի մը մնացորդները եւ Թէյշէբաին քաղաքին աւերակները, որ ուրարտական աստուծուն անունով էր կոչուած: Պեղուած 96 սենեակներուն մէջ գտնուեցան կարասներ, պրոնզէ թասեր որոնց վրայ կան թագաւորներու սեպագիր արձանագրութիւններ, Թէյշէպա աստուծուն արձանիկը, Արգիշտիի եւ Սարգուրիի պրոնզէ վահանները, Արգիշտիի պրոնզէ սաղաւարտը, եւ բազմաթիւ թանկարժէք իրեղէններ որոնք կը պատկերացնեն Հայաստանի հնագոյն քաղաքակրթութիւնը: (11)

Պատմական շրջանէն ցուցադրուած են Սահմանափայտի՝ Արտաշէս Առաջինի եւ իր հօր Զարեհի արամերէն արձանագրութեամբ, որոնց մասին յիշատակութիւններ ունի Խորենացի: Կան դրամներ Տիգրան Բ. Էն եւ Արտաւազդ Բ. Էն:

Արշակունի թագաւորներու կառուցած՝ Գառնիի տաճարին (Ա. դար) վերակազմուած մաքէթը ըստ Փրոֆ. Բունեաթեանի:

1937էն ի վեր պեղումներով յայտնաբերուած են միջնադարեան Հայաստանի հուշակաւոր քաղաք Դուինի նիւթական մշակոյթի թանկազին մեծաքանակ իրեղէնները որոնք եկան նոր լուսարանութիւն-

(10) Հ. Մնացականեան, Յեղապետի Դամբանաբլուրը, քիւ 7, A. O. Mnatsakanian, Bronze Age Culture on Lake Sevan coast in Armenia. (XXV Inter. Congress of Orientalists. Papers by the USSR Delegation), Moscow 1960.

(11) Բ. Բ. Պիոտրովսկի, Կարմիր Բլուր, Աշխատանքների արդիւնքներ, Երեւան, 1950, ուսերէն:

B. B. Piotrovsky, Ourartou, L'Orient ancien illustré, n° 8, Paris 1954.

P. Piotrovsky und K. Ohanessian, Die Ausgrabungen in Arin-Berd und Karmir-Blur (Die Urartuischen Festungen Erebum und Teisibaini). XXV. Inter. Orientalisten Kongress. Moskau, 1960.

ներ բերել անոր դարաւոր պատմութեան վրայ: Սրահ մը յատկացուած է այլազան եւ հարուստ իրեղէններուն՝ երկաթէ, պղինձէ, արծաթէ, ոսկիէ առարկաներ, խեցեղէն ամաններ, կաւանօթներ ջնարկապատ, յախճապակիէ թասեր մեծ մասամբ 9-11րդ դարերէն: Վերակազմուած է 4րդ դարու կաթողիկէ եկեղեցին, սինազարդ կաթողիկոսարանը յարակից շէնքերով. կան բեկորներ, քարակոփութեան գեղեցիկ նմուշ այգեկուծքի տեսարան մը, եւայլն (12):

(12) Դուին ֆաղաբը հողի քանձը խաւերու տակ ծածկուած եւ անյայտացած էր: 1937էն ի վեր տեղի ունեցող պեղումներու ընթացքին երեսու հանուեցան բլուրին վրայ կառուցուած միջնաբերդը, ֆաղաբին կեդրոնական բաղը եւ զանազան մասեր: Պարզուեցաւ որ Ք. Ա. 3րդ հազարամեակին բնակավայր էր եղած: Գտնուեցան բազմաթիւ իրեղէններ այդ դարաշրջաններէն:

Քրիստոսի առաջին դարուն կը վերածուի ամբողջ Արշակունի բազաւորներու օրով: 4րդ դարուն, հոսորով կոտակ, Դուինը կը դարձնէ գահանիստ ֆաղաբ, ամբողջին մէջ կառուցանելով արքայական պալատներ:

5րդ դարուն, Մարգպաններու շրջանին, Դուին Հայաստանի հըռչակաւոր մայրաքաղաք, ֆաղաբական, տնտեսական եւ մշակութային կեդրոն է: Տեղի կ'ունենան մեծ շինարարութիւններ:

Արաբական տիրապետութեան շրջանին ֆայթայման կ'ենթարկուի քշնամիին ծանր լուծին տակ: 893ի մեծ երկրաշարժին կը կործանի: Բայց շուտով կը բարգաւաճի 9-11րդ դարերուն: Այս շրջանէն յայտնաբերուած են մեծ թիւով բազմատեսակ առարկաներ որոնք ցոյց կուտան արեւստներու եւ առուտուրի մէջ վերելքը: 1236 թուին, քրքական ցեղերու արշաւանքով, հիմնայատակ կը կործանի:

Պեղումներով երեսն եկած են Կաթողիկէ եկեղեցիին աւերակները, Կաթողիկոսական Պալատը, Միանա եկեղեցին եւ պալատական շէնքեր, ասոնց հետ միասին հազարաւոր առարկաներ, շէնքերը զարդարող ֆանդակներու, կիպսէ ձուլածոյ որմնագարդերու բեկորներ, որոնք հայ ֆարտարապետութեան պատմութեան, ժողովուրդին արեւստներուն, կենցաղին, սովորութիւններուն մասին կուտան հարուստ. նոր ծանօթութիւններ: (Կարօ Ղափաղարեան, *Դուին քաղաքը եւ նրա պեղումները* 1, *Երեւան*, 1952):

Կ'ամփոփենք Փրոֆ. Ղափաղարեանի ֆարտարապետական յուշարձաններուն նուիրած եզրակացութիւնը:

Կաթողիկէ եկեղեցին սկզբնական շրջանին եղած է եռաբէ բազիլիկ, հեթանոսական տաճար: Քրիստոնէութեան մուտքին դարձեր է եկեղեցի եւ ստացեր արեւելեան արսիւր: 5րդ դարուն աւելցուցեր են արեւ. կողմի աւանդաւորները եւ արտաքին սինագարդ սրահը: 485էն յետոյ, վաեան Մամիկոնեան նորոգեր է եկեղեցին, աւանց փոփոխութիւն մտցնելու յատկազօծին մէջ: 697-619ին, Սմբատ Բագրատունի, հիմնովին կը ձեւափոխէ տաճարը, արսիստներ եւ գրմբէթ մը աւելցնելով: Վերջնականապէս կը կործանի 898 թուի երկրաշարժին:

Ուրիշ սրահի մը մէջ կը տեսնենք հայկական քրիստոնէական հնա-
դոյն կոթողներ, ճարտարապետական յուշարձաններու լուսանկար-
ներ: Հիանալի մանրակրկիտ աշխատանք մըն է Զուարթնոց եկեղե-
ցիին վերակազմուած մաքէթը, Արեւշատեանի կողմէ: Տեսանք գեղե-
ցիկ խաչքարեր, որոնցմէ Մ'Սիքար Գօշի նրբակերտ խաչքարը բա-
ցառիկօրէն գեղեցիկ է, ԺԳ. դարէն:

Մշոյ Առաքելոց վանքին փայտէ դուռը, ԺԲ. դարէն:

Սեւանայ վանքին դուռը, 1436:

Տաթևի վանքին դուռը, 1614:

Կիւրիկէ եւ Սմբատ քաղաքներու բարձրաքանդակին ձուլածոյ
պատճէնը, Սանահին վանքէն, եւայլն:

Վերջապէս սրահ մը յատկացուած է նշանաւոր մայրաքաղաք
Անիին: Այցելուըն կը տեսնէ հոն Անի քաղաքին մեծ մաքէթը իր եկե-
ղեցիներով, աշտարակաւոր պարիսպներով, պալատներով, իջեւան-
ներով: Պեղումներու միջոցին գտնուած հնութիւններ, զարդաքան-
դակ բեկորներ, պրոնդէ ջահ մը, իշխանագունի մը Վազուստը, եւն.:

Ինչպէս ըսինք, Թանգարանը ունի ազգագրական բաժին մը ուր կը
պահուին հայ ժողովուրդին 16րդ-17րդ դարերուն, անոր ազատագր-
ման հետ կապ ունեցող փաստաթուղթեր, հրովարտակներ: Հայկա-
կան դիւղերու, տուներու մանրանկարներ, ասեղնագործուած զա-
նազան գեղեցիկ հագուստեղէններ, զարդեղէններ, զլխանոցներ, կեն-
ցադային առարկաներ եւայլն:


*

Միանաւ Բագրիկ տանարը կառուցուած է 554-555 թուականնե-
րուն, Ներսէս Բագրեւանդացի կաթողիկոսի կողմէ, Յեգտրուգոթի
գերեզմանին վրայ իբր վկայարան: Կործանած է նմանապէս 693ի
Երկրաշարժին:

Կաթողիկոսի պալատը կառուցուած է 461 կամ 485 թուականէն
յետոյ եւ աւարտած է 490 թուականէն առաջ, Յովհան Մանդակունի
կաթողիկոսի օրով: Կեդրոնական դահլիճը հաւանաբար եռանաւ շէմֆ
է եղած եւ ունեցած է փայտէ ծածկոյթ: Վնասուած է 893ի Երկրա-
շարժին. որոշ ձեւափոխութիւններէ վերջ օգտագործուած ըլլայ թե-
րեւ իբրեւ մզկիթ:

Միջնաբերդին վերի շերտի պալատները կառուցուած են 893ի
Երկրաշարժէն յետոյ: Մեծ շէմֆը ունեցած է հարուստ ներքին գար-
դարանք կիսակն ձուլածոյ գեղեցիկ որմնագարդերով: Ունեցած է
բազմիւք, տաք ջուրի խողովակներով եւ յատակէն տաքուած, նաեւ
մէկ քանի արեւստանոցներ, կաւնօթ քրժելու հնոց:

Գուռնի մասին կարեւոր տեղեկութիւններ կուտան հայ մատենա-
գիրներէն շատեր. Փ. Բիւզանդ, Մ. հորեւացի, Ղ. Փարպեցի, Սե-
բէոս, Ղ. Նրեց, Յ. Գրասխանակերտցի, Թ. Արծրունի, Կ. Գանձակե-
ցի, Վարդան վարդապետ, Ս. Օրբելեան եւ ուրիշներ:



*

Պետական թանգարանին կից կը գտնուի Հայաստանի Պետական Պատկերասրահը, որ կազմակերպուած է 1921ին: Մինչեւ այդ թուականը ոչ մէկ հաւաքածոյ գոյութիւն ունեցած է: 1921ին Երեւանի մէջ կազմակերպուած հայ նկարիչներու առաջին ցուցահանդէսը հիմը կը դնէ Պատկերասրահին: Կարգը մը նկարիչներ եւ քանդակագործներ կը ձեռնարկեն հայ ժողովրդ. արուեստի վերածնման գործին, ապա Լենինկրատի, Էրմիթաժի եւ Տրետեակովեան պատկերասրահներու հաւաքածոներէն ինչպէս նաեւ թանգարանային ֆոնտին դնումներուն շնորհիւ, կը ստեղծուին նաեւ ուսանկան եւ եւրոպական նկարներու բաժինները: 1924ին թանգարանին կը յանձնուին Մոսկուայի Լազարեան ձեմարանին հաւաքածոն եւ հեղհեղէ ձեռք կը բերուին 19րդ եւ 20րդ դարերու հայ նկարիչներու գործերը: Կարեւոր աղբիւրներ են եղած նաեւ նուէրները: Էտկար Շահին 200 օֆորտներ նուիրած է: Փ. Թերլէմէզեան եւ Ֆէթվաձեան, նուիրած են իրենց գործերուն մեծ մասը, Նզիշէ Թաղէոսեանի այրին իր ամուսնին գործերը, Տիկին Յ. Գիւրջեան իր ամուսնոյն կարեւոր քանդակներուն հաւաքածոն:

Մրահ մը յատկացուած է հայ աշխարհահռչակ նկարիչ Այվազովսքիի նկարներուն: Գայով սովետահայ նկարիչներու գործերուն, անոնք ձեռք կը բերուին ՍՍՍԻ Կուլտուրայի նախարարութեան կողմէ:

Հայ նկարչութեան նոր շրջանը կը սկսի 19րդ դարու սկիզբը: Յիշենք հոն ներկայացուած նկարիչներէն Յակոբ Յովնաթանեանի, Ստ. Ներսէսեանի, Սուքիասեանի դիմանկարները, որոնց մէջ կ'արտացոլայ նկարուած անձերուն հոգեկան աշխարհը:

19րդ դարու վերջերը կը զարգանայ հայրենի բնութեան սէրը, կը ներկայացուին նաեւ պատմական նրբեր, այս շարժումին ներկայացուցիչներն են Վ. Սուրէնեան, Գ. Բաշինջաղեան, Յ. Շամչիեան, Մախոթեան, Նազարեան, Արծաթբանեան եւայլն, որոնց գործերը ցուցադրուած կը գտնենք հոս:

Ապա նկարիչներ որոնք ունեցած են մասամբ նախայեղափոխական, մասամբ սովետական շրջանին ստեղծագործութիւններ, ինչպէս Փանոս Թերլէմէզեան, Ս. Աղաջանեան, Ս. Առաքելեան, Մ. Սարեան, Հ. Կոջոեան, Գ. Գիւրջեան, ինչպէս նաեւ հայրենական մեծ պատերազմի նկարներով ծանօթ՝ Նալբանդեան, Բէքարեան, Չարդարեան եւ ուրիշներ:



*

Երեւանի Ստալինեան պողոտայի բարձունքին վրայ կանգնած է Պետական Մատենադարանը, Ձեռագրատունը, պազարտէ սրբատաշ քարերով, գեղակերտ եւ հայրենաշունչ, վսեմ եւ իմաստախոճ:

Կը բարձրանանք անոր բարձրագլի սանդուխներէն դէպի լոյսի եւ մաքի ոլորտները: Հողեկան քաղցր վերացում մը, առօրեայ կեանքէն անջատում մը անուշ գինովութեան մը նման կը փոխանցուի մեր զգայարանքներուն: Օտար քաղաքներու մէջ ապրած հայու մը համար, որ զրկուած է իր հայրենի հարստութիւններէն եւ որ շատ յաճախ կ'անդիտանայ դանոնք, ցեղային հպարտութեան, խնդութեան, բերկրանքի ի՛նչ փառապանծ վկայութիւն մըն է մարդկային մտածումի այս հոյակապ տաճարը, նուիրուած Մեսրոպ Մաշտոցի յիշատակին, ուր հաւաքուած եւ խնամքով պահուած են հինգերորդ դարէն իսկ մեզի հասած, հայ ժողովուրդի զարգացման եւ վերելքին վկայ՝ գրչագրական այս գանձերը:

Մագաղաթէ եւ թղթէ այս հազարաւոր ձեռագիրները կը պարունակեն Վին եւ Միջին դարերու հայ պատմիչներու, բանաստեղծներու, փիլիսոփաներու, մաթեմաթիկոսներու, աստղագէտներու, նկարիչներու ստեղծագործութիւնները, յոյն բազմաթիւ փիլիսոփաներու գործերուն թարգմանութիւնները, օտար զանազան լեզուներով աշխատութիւններ, որոնցմէ մէկ քանին միայն հայերէն լեզուով գոյութիւն ունին, բնագիրը կորսուած ըլլալուն:

Արեւելագէտներու զանազան խումբեր հետզհետէ կուզան միանալ մեզի եւ աչքէ կ'անցընենք մանրանկարչական բաժինը, որ մասնաւորապէս կը հետաքրքրէ մեզ :

Բաւականանանք յիշելով Տրդ դարէն Աւետարանի պատահիկներ, հնագոյն հայերէն քուակիր ձեռագիրը Լագարեան կոչուած, 887 թրււին գրուած, մագաղաթի վրայ : Ամենաինն քուակիր ձեռագիրը, Պատմա-փիլիսոփայական ժողովածու, 927 թուին :

Բիւզանդագէտները անհամբեր են տեսնելու Էջմիածնայ փղոսկրէ Աւետարանը, հայկական հնագոյն փղոսկրեայ արուեստի հազուագիւտ նմոյշ մը : Պ. Ֆոլպախ, մասնագէտ փղոսկրեայ արուեստի գործերու, մասնաւոր հետաքրքրութեամբ կը դիտէ անոր կազմը : Մեծ կանխագուշակութիւնով մեր դէմն է գրուած եւ ոչ ոք իրաւունք ունի դարձնելու անոր թերթերը : Յրդ դարու գործ կը համարուի Աւետարանին փղոսկրէ կազմը . ետեւի չորս թերթերը Յրդ կամ 7րդ դարու գործեր են : Անոնք մաս կը կազմեն Յրդ դարուն Հայաստանի մէջ փայլուն զարգացման հասած արուեստի հոսանքին, որ գերծ չէր սուրիական ազդեցութենէն : Մնացեալ թերթերը նկարազարդուած են Տաթեւի մանրանկարչական դպրոցին ծաղկողներուն կողմէ (13) :

Յիշենք նաեւ մանրանկարչական ուրիշ դպրոցներէ՝ Մուղնի, Հաղբատ, Խիզան, բազմաթիւ նմոյշներ, Ծերուն Ծաղկողի եւ կիլիկեան բարձր արուեստի ներկայացուցիչներ՝ Թորոս Ռոսլինի եւ Սարգիս Պիծակի մանրանկարները, նաեւ հայ գաղութներու մէջ՝ ինչպէս Խրիմ, Լվով, Պարսկաստան, Պոլիս գրուած ձեռագիրներ :

Գրչութեան արուեստի բացառիկ նմոյշ մըն է Մատենադարանին հսկայ եւ փոքր ձեռագիրները : Առաջինը՝ մագաղաթէ ճառքնախիթ մըն է բաղկացած 607 թերթերէ, որուն համար պէտք եղած է 700 մորթ : Կը կշռէ 34 քիւ, մեծութիւնն է 70-55 : Ընդօրինակուած է Մուշի մէջ հարուստ Հայու մը յանձնարարութեամբ՝ Վարդան Կարնեցիի կողմէ, երեք տարուայ ընթացքին : Այս գիրքին յիշատակարանէն կը տեսնուին անոր գոյքերը : Հայերը մեծ գումարներ վճարելով կը գնեն գիրքը : Եօթը դար վանքին մէջ պահուելէ վերջ Մուշի հայերը զայն կը փոխադրեն Եկեղեցւոյ իրերուն հետ, երկու մասի բաժնելով : Երկու տարի յետոյ, կէսը կը հասնի Մատենադարան, միւս մասը կը մնայ հողին տակ երկար : 1921ին կը բերուի Երեւան : Անոր 17 թերթերը փրցուած կը պահուին Վենետիկի մէջ :

Փոքր Տօնացոյցը կը կշռէ 19 կրամ, մագաղաթէ 104 թերթերէ

(13) Ստրչիկովսկի, Էջմիածնի Աւետարանը, 1892, Վիեննա, քարգ. Հ. Պիլգրիկեան :

Miniatures arméniennes, Textes et notes de Lydia A. Dournovo. Préface de S. Der Nersessian, 1960, Paris (Ed. Cercle d'Art).
Ս. Բարխուդարեան, Էջմիածնի Աւետարանի գրչութեան վայրը, Թանրեք Մատենադարանի, քիւ 4, Երեւան 1958 :

բաղկացած, խոշորացույցով միայն կարելի է կարդալ: Գրի առնուած է 1424ին, Սրբմբ Կաֆա քաղաքին մէջ, գեղագիր Օգոստի կողմէ: 1873ին գտնուեցաւ Երեւանի մէջ, հեղեղները զայն քշած էին քարերու տակ: Լուսանցքներուն վրայ կան բազմաթիւ նկարներ եւ զարդագիրեր (14):



1920ի օրէնքով, էջմիածնի Մատենադարանը եւ Չեռադրատունը կը պետականացուին: Էջմիածնայ ձեռագիրները ժամանակ մը Մոսկուայի հայկական եկեղեցիին մէջ պահուելէ վերջ կը բերուին Երեւան եւ կը միացուին Երեւանի Մատենադարանին, ուր 1915ին վանէն, Կոուչէն, Աղթամարէն եւ այլ վայրերէ բերուած էին 1545 ձեռագիրներ, Թաւրիզէն 83, եւ ուրիշներ՝ Մատենադարանին միջոցաւ ձեռք բերուած, ընդամէնը 1730 ձեռագիր: Ասոնց կը միանան նաեւ Լազարեան ձեմարանէն 219, Գէորգեան ձեմարանէն 56, եւ ուրիշ մեծ եւ փոքր հաւաքածոներ:


Այժմ Մատենադարանին մէջ կը պահուին 9690 հայերէն, 675 օտար լեզուներով ձեռագիրներ, 1838 պատառիկներ, չուրջ 3000 պահպանակ-պատառիկ, 155 հայերէն հմայիլ (15):

Երեւանի Պետական Մատենադարանը աշխարհի հնագոյն եւ հարուստ ձեռագրատուններէն մէկը կը նկատուի: Կը կարծուի որ ճրգ դարու պատմիչ Ղազար Փարպեցիի օրով էջմիածնի մէջ գոյութիւն

(14) Հաւաքուած «Սով. Հայաստան»ի գննագան քիւերէն:

(15) Լ. Խաչիկեան, «Մատենադարանը անցեալում եւ Սով. իշխանութեան տարիներում», Բանբեր քիւ 4, էջ 7, Երեւան 1958:

Ա. Գ. Աբրահամեան, Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երեւան 1559:



ունէին գրապահոցներ: Միւս մեր հռչակաւոր վանքերն ալ՝ Հաղբատ, Նորավան, Սանահին, Տաթեւ եւ ուրիշներ հաւանաբար ունէին գրապահոցներ: Վերջերս, Հաղբատի անմատչելի «Ծակ Այր» կոչուած քարայրին մէջ գտնուեցան 10-14րդ դարերու պատկանող ձեռագիրներու մնացորդներ, բազմաթիւ թերթիկներու միաձոյլ քարացած թերթեր, հնագոյն երաժշտութեան խաղեր, գունաւոր մանրանկարներ կրող թերթեր:

Մատենադարանին այս նոր շէնքին մէջ մեծ հոգածութեամբ հաւաքուած եւ պահպանուած են մեր նախնեաց գրչագրական այս թանկազին ժառանգութիւնները: Ձեռագիրներու վերանորոգման համար կան յատուկ քիմիական լուսանկարչական արհեստանոցներ, ուր մասնագէտներ մեծ ձեռնհասութեամբ ու նուիրումով լծուած են անրնթեռնելի եւ քարացած գրչագիրները վերակենդանացնելու, կորուստէ փրկելու դժուարին եւ փափուկ աշխատանքներուն:

Անուանի դիտնականներու եւ երիտասարդ աշխատակիցներու կողմէ հսկայական աշխատանք կը կատարուի Մատենադարանին պարունակած նիւթերուն ուսումնասիրման եւ հրատարակման համար: Ծրագրուած է տպագրել Մայր Յուլիանի մը, նաեւ միկրոֆիլմի միջոցաւ ձեռագիրներու պատճէնը հանել:

Մատենադարանին տնօրէնն է Լեւոն Սաչիկեան:

*

Գառնիի ամրոցը կը գտնուի Երեւանի հարաւ արեւելեան կողմը, 28 քմ. հեռու: Նոյն ճամբուն վրայ, Գառնիէն 10 քմ. հեռու են Գեղարդի վիմափոր տաճարները, որոնք չպիտի կրնանք տեսնել ժամանակը կարճ ըլլալուն, ճանապարհն ալ կ'պրոտ չէ: Սակայն Փրոֆ. Պիտտրովսկի խնդրանքս չի մերժեր. ժամը 4ին արեւելագէտներու խումբը ճամբայ կ'ելլէ պանդոկէն, յարգելի հնագէտին եւ քանի մը ճարտարապետներու ընկերակցութեամբ:

Երեւանը մեր ետեւն ենք ձգած: Կը նշմարենք հողէ տանիքով տընակներ, որոնք սեմին հնաւանդ կենցաղով գիւղացիներ զբաղած են իրենց առօրեայ աշխատանքներով: Կ'անցնինք ծխախոտի դաշտեր, հետաքրքրութեամբ կը դիտենք հայրենի հողին տուֆէ հարուստ քարաժայռերը, ուր գործաւորները կը տաշեն վաղուան կառուցուելիք շէնքերուն քառանկիւն խորանարդները: Լայնատարած մերկ գորշագոյն դաշտերը եւ սարերը տիրութիւն մը կը փոխանցեն մեզի. սակայն ուրակութեամբ կը լսենք որ այս հողերուն վրայ ծրագրուած է բնակելի շէնքեր շինել, մաս մը տարածութիւններ կանանչ պուրակներու վերածել, չոր քարուտ հողերու յատուկ ցած թուփեր ասեցնելով:

Մեր օթօբարը կանգ կ'առնէ ամայի վայր մը: Ծաղիկներ տնկուած են սանդուխի մը առջեւը, բոլորտիքը: Բարձրաւանդակին վրայ, սեւ Կրանիթէ լայնանիստ յուշարձան-կամար մը կը բարձրանայ, որուն

կիսաբոլորակ բացուածքին մէջէն, վեհաշուք տեսարան մը կը պարզուի մեր աչքին: Ամայի դաշտերու տարածութիւններէն անդին, մանրիչակագոյն մշուշի մը մէջ, իրական Արարատն է կանդնած մեր դէմը, անմատչելի եւ սիրելի, լռակեաց սֆինքսի մը նման:

Կրանիթէ կամարին կիսաբոլորակ աղեղին վրայ կը կարգանք սիրուած բանաստեղծի մը Արարատին ձօնած անմահ ոտանաւորին սողերը:

Աշխարհ անցիր Արարատի նման փոքրակ գագաթ չկայ,
Որպէս անհաս փառքի փառքայ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Բազմաթիւ քաղաքներու մէջ չքեղ ու հոյակապ յուշարձաններ ենք տեսած եւ հիացած: Բայց Չարենցի յիշատակին նուիրուած այս աղբիւրը, Հայրենի հողին այս անծայրածիր դաշտերուն վրայ, դէմ յանդիման յաւերժական Արարատին, անպատում խորհուրդի մը վեհութիւնը եւ քաղցրութիւնը ունէր:

Կը շարունակենք մեր ճամբան պատմական անցքերով հարուստ, իր վայրի բնութեան հմայքովը կախարդիչ, դէպի Գառնիի աւերակները, ուր կան Հին Հայաստանի նշանաւոր ամրոցներէն մէկը, եւ հելլենիստական ճարտարապետութեան եւ արուեստի նմոյշ՝ հեթանոսական տաճար մը:

Պիտի ուզէի վերակոչել հոս յիշողութեանս մէջ անջնջելի մնացած այն վայրի գրաւիչ համայնապատկերը որ կը կազմէին այս հնութիւնները եւ շրջապատի բնութիւնը ներդաշնակօրէն ձուլուած իրարու: Ազատ գետին անդնդախոր ձորին դազաթը 500 մեթր բարձրութեան՝ եռանկիւն հրուանդանի մը տափարակ հարթութեանը վրայ կառչած էր Հայոց Արշակունի թագաւորներուն այս անտիկ բերդը, պաշտպանուած չորս կողմերէն ուղղաձիգ ապառաժներով եւ աշտարակաւոր պարիսպներով: Քիչ մը հեռուն հեթանոսական տաճարին քարակոյտերը եւ ուրիշ շէնքերու հետքեր, դիմացը, ձորին միւս կողմը, գորշագոյն լեռներու շղթաները, տպաւորիչ իրենց ամայի եւ լերկ տարածութիւններով:

Գառնին արդէն ծանօթ էր պատմութեան իր բերդովը եւ հեթանոսական տաճարովը: 1949ի պեղումները եկան ցոյց տալ թէ խոր անցեալին բնակելի էր եղած ան, պեղուած բազմաթիւ դամբաններու նիւթերը կը վկայեն որ բնակիչները ունեցած էին հմտութիւն բազմաթիւ արհեստներու մէջ, հեռաւոր եւ դժբացի երկիրներու հետ յարաբերութիւններ: Յայտնաբերուեցան ամրոցին պարիսպին մնացորդները 14 հոր աշտարակներով: Պարիսպը կառուցուած էր սրբատաշ պազալտէ քարերով, երբեմն 5-6 թոն ծանրութեամբ, յղկուած մեծ արուեստով, իրար միացած առանց շաղախի: Աւելի հաստատուն դարձնելու համար երկաթէ ագոյցներ ամրացուած էին քարերու փորուածքին մէջ, արճիճով:

Գտնուեցան պալատական շէնքերու մնացորդներ, պալատական բաղնիքը չորս բաժանումներով: Հանդերձարանին յատակը պատած էր 15 գոյն մանր քարերու խճանկարով մը: Կեդրոնը, քառակուսի

չըջանակի մը մէջ, Ուլիխանոսը եւ Ծովը ներկայացուած էր կնոջ կիսանդրիներով, չուրջը աստուածներ, առասպելական մարդկային կերպարանքներ, ձուկեր եւայլն:

Բազմաթիւ անդամներ աւերուած էր Արշակունի թագաւորներու այս անտիկ բերդը, կառուցուած Ք. Ա. 3րդ դարուն: Տրդատ Ա. կ'ամրացնէ զայն նոր շինութիւններով, երբ հռոմէական զորքերը կ'աւերեն բերդը 59ին (Ք. Ե.): Արաբական արշաւանքներու աւերումներէն յետոյ, 10րդ դարուն, Աշոտ Երկաթ կը վերակառուցանէ զայն ու կը դարձնէ արքայական զօրակայան: 13րդ դարուն կը դառնայ Զաքարեաններու կարեւոր մէկ ամրութիւնը: Կը կործանի վերջնականապէս 7րդ դարուն ուժեղ երկրաշարժի մը հետեւանքով:

Ամրոցին մէջ պահպանուած են ինչպէս ըսինք հեթանոսական տաճարին վրատակները, կառուցուած Տրդատ Ա.ի կողմէ Ա. դարուն, իր քրոջ Սոսրովադուխտի յիշատակին:

Հելլենիստական արուեստի նմոյշ մըն է այս տաճարը, բարձրացած երկու աստիճանի վրայ, շրջապատուած չորս կողմէն հաստ, բարձր սիւներով, յոնիական խոյակներով: Շէնքին ճակատին քարէ աստիճանները կ'առաջնորդեն դէպի մուտքը, որ կը բացուի մէկ հասիկ սրահին մէջ: Սիւներու խոյակները, անոնց վրայ հանդիսած արշիթրավը, քիւր, դրանը բացուածքը եւ սիւնաշարի ձեղունը, շատ նուրբ եւ չքեղորէն քանդակուած են նրբահատիկ պողպտի վրայ: Պահպանուած են զրեթէ բոլոր կտորները իրենց քանդակներով՝ ականթի տերեւներ, ճիւղաւոր բոյսեր, վարդեակներ, սուլածի գլուխներ որոնք մասնադէտներուն հիացումին արժանացան:

Դ. րդ դարուն, երբ քրիստոնէութիւնը պաշտօնական կրօնը հռչակուեցաւ Հայաստանի մէջ, այս տաճարը պահպանուեցաւ իբրեւ արքայական ամառանոցային տուն, հովանոց: Կանգուն մնաց չուրջ 1600 տարի եւ կործանեցաւ 1679ի երկրաշարժին (16):

(16) Մ. Խորենացի, Պատմ. Հայոց, Գիրք Բ. գլ. Գ., էջ 247-248: Թիֆլիս, 1910:

Ակադ. Յակոբ Մանանդեան, «Գառնիի Յունարէն արձանագրութիւնը եւ Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը», Երեւան, 1948:

Ն. Բունիաթեան, «Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում», Երեւան, 1933:

Բ. Ն. Առաքելեան, «Հին Հայաստանի նիւթական մշակոյթի հիմնական գիծերը», տեղեկագիր, Թ. 7-8, 1960 Երեւան:

(17) Ըստ աւանդութեան, հիմնուած է քրիստոնէութեան տարածման ժամանակ, 4րդ դարուն: Կը կարծուի որ հեթանոսական շրջանին՝ գոյութիւն ունեցած է հոս աղօթատեղի մը որ շուրի պաշտամունքին հետ էր կապուած:



Վերջին ակնարկ մը կը նետենք Ազատ գետի գեղատեսիլ հովիտին, գայն եղերող Սոսորովի պատմական անտառին եւ կ'ուզուինք Գեղարդի վիճափոր տաճարները :

Գառնի դերդէն երեք-չորս քլմ. հեռաւորութեան վրայ, մեր աջին կը նշմարենք հեռաւոր եւ կղզիացած բլուրի մը վրայ, հայկական եկեղեցիի մը ուրուագիծը : Հաւուց Թառի Ամենափրկիչ վանքն է ան, հոն ուր թռչունները կը թառին : Նշանաւոր հայ փիլիսոփայ եւ բանաստեղծ Գրիգոր Պահլաւունի 11րդ դարուն կառուցել տուած է գայն եւ հոն պահել տուած այն հին սրբութիւնը որ կոչուած է վանքին անունով՝ Հաւուց Թառի Ամենափրկիչը :

Ներկայ տանարները կառուցուած են 13րդ դարուն : Գեղարդայ վանքը կը բաղկանայ գլխաւոր եկեղեցիէ մը, ըստ արձանագրութեան՝ շինուած է 1215 թուին, Զաֆարէ եւ Իվանէ Զաֆարեաններու կողմէ : Խաչածեւ է, ունի չորս աւանդատուներ : Գմբէթը կը հանգչի ութը կամարներու վրայ : Երկու դուռներէն՝ հարաւայինը շատ գեղեցիկ նուրի եւ խաղողի ֆանդակներ ունի :

Արեւմտեան կողմը կայ Գաւիթը կամ Ժամատունը, քառակուսի սրահ մը, կառուցուած 1268ին Պոօշ Խաղրակեան իշխանին կողմէ : Զորս գեղեցիկ սիւներու եւ կամարներու վրայ կ'իջնէ քարէ ստալակտիտ առաստաղը, որուն գագաթէն անցք մը ձգուած է սրահը լուսաւորելու համար :

Այս երկու բացօթեայ շէնքերէն գատ, միւս եկեղեցիները փորուած են ամբողջովին ժայռերուն մէջ եւ դուրսէն անտեսանելի են : Գաւիթին հիւս. պատին վրայ բացուած դուռ մը կը տանի վիճափոր առաջին տաճարը, որ շինուած է Պոօշ իշխանին կողմէ 1283ին : Ունի խաչածեւ յատակագիծ, գմբէթը կը յենու իրար խաչածեւով կամարներու վրայ որոնք կը հանգչին 8 սիւներու վրայ : Գմբէթը ստալակտիտ գարդարանքներ ունի, լոյսը կուգայ բացուածքէ : Եկեղեցին ունի գետնափոր աղբիւր մը :

Երկրորդ վիճափոր եկեղեցին որ Ս. Աստուածածին անուանուած է, շինուած է նաեւ Պոօշ իշխանին կողմէ, հաւանաբար իրենց տոհմական դամբարանն է եղած : Ունի գաւիթ մը, որուն մուտքին դիմաց, խորշի մը կամարներուն վրայ՝ կայ բարձրաքանդակ մը երկու շրթայուած առիւծներով, վերելք եզան գլուխ մը, ներքեւը քեւատարած արծիւ մը՝ գառնուկ մը քանկերուն մէջ : Ս. Աստուածածին եկեղեցիին խաչածեւ գմբէթը կը յենու 4 կամարներու վրայ, բաժնուած է 12 մասերու, գեղեցիկ կամարներով, բուսական եւ երկրաչափական նուան ֆանդակներով :

Վերջալոյսի վերջին ցուքերը կ'իջնեն համատարած սարերու եւ դաշտերու նարնջոտակ տարածութիւններուն վրայ: Մեր օթօքարը գլխաւոր ճամբէն դէպի աջ շեղում մը կ'ընէ: Բարձրագիւր յուշարձանի մը գագաթին՝ էգ առիւծ մը թառած կը խորհրդանշէ զինանշանը Պոռչեան նախարարական ընտանիքին, որ կառուցանել տուած է այս գետնափոր եկեղեցիները 13րդ դարուն:

Նեղ, օձապտոյտ դարձուած քներով ճամբայ մը կ'իջնէ թուփերով, կանանչ ծառերով հարուստ ձորի մը մէջ, ուր կը հոսին առուակներ: Լեռնալանջերու ծայրերուն մէջ կորսուած կը նշմարենք Գեղարդի բացօթեայ եկեղեցիին գմբէթը:

Հակառակ խտաշունչ լեռնաժայռերու եւ ապառաժներու ամառայութեանը վրայ իջնող երեկոյեան թախճութեան, երգի, պարի, նուազի ուրախ մթնոլորտ մը կը տիրէ եկեղեցիին շրջակայքը: Մեր դարաւոր աւանդութիւնները կը շարունակուին հոս այս տօնական օրերուն, կրօնական զգացումներու, աշխարհիկ զուարճութիւններու ուրբա զուարթ արտայայտութիւններով:


Կը մտնենք գլխաւոր եկեղեցիին դաւիթէն ներս ուր իրարու կը յաջորդեն ապառաժներու մէջ կորսուած, կուրուած եկեղեցիները: Անոնց քանդակազարդ գմբէթներուն գագաթէն աղօտ լոյս մը կ'իջ-



1288ին, Պոռչի որդին Պապակ իշխանը, իր հօր տաճարներուն վրայ, այդ խոշոր ժայռին վերնամասին մէջ փորել կուտայ երրորդ ընդարձակ ժամատուն-տապանատուն մը, իրեն եւ իր կնոջ Ռուգաֆանի համար: Մեծ գաւիթին կից, վիմափոր միջանցքի մը մէջէն դուռ մը կը բացուի դէպի տապանատունը: Բոլորովին ժայռին մէջ փորուած չորս հաստ քարէ սիւներուն վրայ իջնող կամարները կը պահեն գմբէթը, ուրկէ բացուածք մը կը լուսաւորէ եկեղեցին:

1679ի Երեսնի մեծ երկրաշարժին, մասամբ քանդուած, ենթարկուած է աւերածութիւններու եւ բազմաթիւ անգամներ նորոգուած: Եղած է մշակութային կեդրոն, հոն գրուած եւ ընդօրինակուած են բազմաթիւ ձեռագիրներ: Միջիցք-ար Այրիվանեցիին հոն է գրած իր «Ճառքնտիր»ը, Միջիցք-ար Յօրինող քանդակած է իր գեղեցիկ խաչֆարը: Շուրջը բազմաթիւ վիմափոր նգնարաններ, բազմաթիւ խաչֆարեր, պատերուն վրայ փորուած կան անհամար խաչեր: Վանքին կառոյցը չորս կողմէն շրջապատուած է եղեր բարձր ու հաստատուն պարիսպներով:

Պատվարի եկեղեցույ աւերակները (450-550)



նէ թախծախորհուրդ, որ անիրական եւ աննիւթական աշխարհի մը պատրանքը կը ստեղծէ մեր շուրջը: Անուշ յուզումով մը կը յիշեմ թէ անկիւն մը արձանագրութիւն մը գոյութիւն ունի. «Զվարդապտ Գալձակ յիշեցէք»: Անունը այս հրաշալիքները կերտող համեստ մէկ արհեստաւորին: Միեւնոյն ատեն դիւցազնավէպերու հիասքանչ պատմութիւններ կը թուին ինձ այս բոլորը եւ զմայլանքով, հպարտութեամբ կը լեցուի հոգիս:

Այո, դիւցազուններ պէտք է եղած ըլլային մեր պապերը: Հալածանքներ, աւերումներ, բարբարոսական ամէն տեսակ վայրագութիւններ չեն կրցած խորտակել անոնց շանթակուռ կամքը, պայքարի խիզախ ոգին, ստեղծագործութեան եռանդը: Անոնք կուրծք տալով անպատում դժուարութիւններու եւ վտանգներու, այս անմատչելի կիրճերու ապառաժներուն մէջ քանդակած են իրենց խոովայոյզ կեանքին վերիվայրումները: Թշնամիներուն նայուածքներէն հեռու՝ վիմափոր այս կամարներուն ներքեւ, ջանացած են անչէջ պահել իրենց խոր հաւատքը, գրականութեան եւ արուեստի սէրը եւ մեղի կտակած են ու յաւերժացուցած այնպիսի զմայլելի, նրբարուեստ գործեր, որոնք այսօր աշխարհահռչակ Վնագէտներուն եւ ճարտարապետներուն հիացումին կ'արժանանան (17):

Ա. Խ.



(17) Գարեգին Արքեպ. Յովսէփեան, Խաղրակյանք կամ Պռոշյանք Հայոց Պատմութեան մէջ, մասն առաջին, էջ 86, վաղարշապատ, 1928: Նոյն, մասն երկրորդ, էջ 48, Երուսաղէմ:

Յարութիւնեան եւ Սափարեան, Հին Հայկական Ճարտարապետութիւն, Մոսկուա 1959 (ռուսերէն):



Մ ԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ, ԳԱՆՁԱՏՈՒՆԵՐԸ ԵՒ ԱԻԱՆԴԱՏՈՒՆԵՐԸ

Միջնադարեան Հայաստանի թանգարանների, գանձատների եւ աւանդատների մասին ոչինչ չեն գրել արդի պատմաբաններն ու բանասէրները :

Միայն եկեղեցական աւանդատների ձեւերի մասին որոշ տեղեկութիւններ ենք գտնում ճարտարապետական ուսումնասիրութիւնների մէջ (Թորամանեան), բայց այստեղ մեր խօսքը վերաբերում է ոչ թէ կառուցուածքի ձեւերին, այլ թանգարանների, գանձատների աւանդատների բովանդակութեանը, այն բանին, թէ նրանք ինչի՞ են հառայել եւ ի՞նչ նշանակութիւն են ունեցել միջնադարում :

Հասկնալի է, որ հին եւ հնազոյն Հայաստանը եւս ունեցել է եթէ ոչ թանգարաններ, որոնց գոյութեան մասին առայժմ ոչինչ չգիտենք, գէթ գանձատներ, որոնց վերաբերեալ բազմաթիւ վկայութիւններ կան հին մատենագրութեան էջերում, բայց մեր նպատակն այստեղ նրանց ողջ պատմութիւնը չարագրելը է, որ դեռեւս խիստ վաղաժամ է : Մեր նպատակն է համառօտակի բնորոշել Հայաստանի թանգարանները, գանձատներն ու եկեղեցական աւանդատները միջին դարերում, կապուած թանգարանային բնոյթի առարկաների պահպանութեան հետ :

Ա. — ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեր պրպտումները հին մատենագրութեան էջերում պարզեցին, որ միջնադարեան Հայաստանը, գոնէ Մրգ դարում, ինչպէս նաեւ

Բազրատունեաց թաղաւորութեան ժամանակ՝ 10-11րդ դարերում, ունեցել է արքունի եւ եկեղեցական թանգարաններ:

Արբունի թաւաքարանի գոյութեան մասին կարեւոր տեղեկութիւն է հաղորդում 10րդ դարի պատմիչ Յովհաննէս Դրասխանակերտցին, երբ խօսում է Նախճաւան քաղաքի վէճի մասին, որ Բազրատունեաց թաղաւորութեան օրով ծագել էր Սիւնեաց եւ Արծրունեաց նախարարութիւնների միջեւ:

Դրասխանակերտցին գրում է, որ Արծրունի Գագիկ իշխանը Մմբատ Բազրատունուց խնդրում է Նախճաւան քաղաքը յանձնել իրեն, պատճառաբանելով, որ հնում իրենց նախարարութեանն է պատկանել, իսկ մինչ այդ Մմբատն այդ քաղաքը տուել էր Սիւնեաց իշխաններին:

Մմբատը չի համաձայնուում իր պարզեւր ետ վերցնել եւ քաղաքը յանձնել Արծրունիներին:

Գագիկը, դժկամակելով այդ վերաբերմունքից, մեծամեծ նուէրներով («բազում նուէրս ընծայից եւ պատարագաց պատրաստեալ») դնում է Ատրպատականի արաբ ոստիկան Յուսուֆի մօտ, բողոքում է Բազրատունեաց վարմունքի դէմ եւ խնդրում, որ Վասպուրականն անկախ թաղաւորութիւն ճանաչուի՝ արաբական խալիֆայութեան ենթակայ, եւ ինքը դուրս գայ Բազրատունեաց ենթարկութիւնից:

Յուսուֆը, որ ամէն կերպ աշխատում էր հայ նախարարների ուժերը ջլատել եւ նրանց միասնութիւնը քանդել, Գագիկին թագ է տալիս խալիֆայութեան անունից եւ Վասպուրականը ճանաչում է իբրեւ առանձին թաղաւորութիւն:

Այդ դէպքից յետոյ Դրասխանակերտցին, իբրեւ հայոց կաթողիկոս, Մմբադ Բազրատունու եւ մի խումբ նախարարների կողմից ուղարկւում է Յուսուֆի մօտ՝ խնդրելու, որ իշխաններին Հայոց թաղաւորութիւնից չբաժանի եւ նրանց միջեւ խռովութիւն չառաջացնի:

Դրասխանակերտցին պատմում է, որ ինքը Յուսուֆի մօտ է դնացել արքունի թանգարաններից վերցրած բազմաթիւ նուէրներով եւ այլ առարկաներով: Նա գրում է. «... Ես տարադէմ գնացի ի Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացող՝ ընծայիւք եւ պատարադօք բազմօք յարքունի թանգարանաց երեւելի ոսկեճամուկ զգեստուք եւ ի նկարակերտ կանանց ոստայնակութեանց բազում բազմականս կազմեալ, եւ բազում ձիս ու ջորիս ի զարդս եւ ի դէնս յարդարեալ, այլ եւ դանձս ոսկւոյ եւ արծաթոյ: Ոչ միայն դալստսիկ այլ ի տանէ սրբարանաց մերոց ըստ ձեռին բաւականի ընդ իս առեալ տանէի նմա...»: (*)

(1) Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ պատմութիւն հայոց: Թիֆլիս, 1912 թ. էջ 110:

Ուշագրաւ է, որ բացի արքունի թանգարանների մեծարժէք առարկաներից՝ ոսկեճամուկ զգեստներից, նկարակերտ բանուածքներից, զէնք ու զարդարանքներից, ոսկու եւ արծաթի դանձերից, որոնք բազմաթիւ ձիւրի ու ջորիների վրայ էին բարձուած, Դրասխանակերտցին իր հետ տանում է նաեւ եկեղեցիներից վերցրած շատ առարկաներ՝ արար ոստիկանին կաշառելու համար, որպէսզի Արծրունեաց թագը ետ վերցնի, հայ նախարարներին իրար դէմ չլարի եւ նրանց մէջ խաղաղութիւն վերահաստատի:

Սակայն տեղի է ունենում հակառակը:

Նուսուֆ ոստիկանն սկզբում Դրասխանակերտցուն ընդունում է արքունական պատիւներով եւ խոստանում է ամէն ինչ անել, բայց նուէրներն ստանալուց յետոյ միտքը փոխում է: Նրան բանտ են նետում եւ չարչարանքների ենթարկում:

Գագիկ Արծրունին էլ իր հերթին վախենալով, որ Նուսուֆը կարող է ընդունել Դրասխանակերտցու առաջարկը եւ իր թագը ետ վերցրնել, ինքն էլ երկրորդ անգամ գնում է Նուսուֆի մօտ դարձեալ մեծամեծ ընծաներով, որոնց մասին պատմադիրն ասում է. «Ի լիակատար թանգարանաց իմն նմա ընծայարեբալ»: (2)

Դժբախտաբար, Դրասխանակերտցին չի պարզաբանում, թէ Գագիկ Արծրունու ընծաները, որ մի ամբողջ թանգարան են իրենցից ներկայացրել, ի՞նչ առարկաներից են կազմուած եղել, բայց Դրասխանակերտցու՝ իր տարած առարկաների համաօտ նկարագրից պարզում է, որ Բագրատունեաց արքունի թանգարանում եղել են թանկարժէք առարկաների հարուստ հաւաքածուներ՝ զարդեր, զէնքեր, ոսկեթել բանուածքներ եւ նկարակերտ գործուածքներ, այսինքն՝ այնպիսի առարկաներ, որոնք, բացի նիւթական մեծ արժէքից, ունեցել են նաեւ արուեստի եւ ճարտարութեան համար կարեւոր նշանակութիւն:

Այլ վկայութեան կարեւորութիւններից մէկն էլ այն է, որ թանգարան բառը մէջ է բերուած յոգնակի թուով, հետեւապէս պէտք է ենթադրենք, որ թանգարանների թիւը մէկից աւելի է եղել: Մեր ասածին իբրեւ ապացոյց կարող է ծառայել այն, որ Արծրունեաց նախարարութիւնն էլ է ունեցել իր թանգարանը:

Պարզ է, որ արքունի թանգարանը մատչելի է եղել միայն պալատում մուտք ունեցող մարդկանց համար: Հաւանաբար թանգարանը տարբերուել է պալատական այն դահլիճներից, որոնք զարդարուած են եղել հիւրերի ընդունելութեան: Թանգարանային սրահը կամ

(2) Նոյնը, էջ 212:

սրահները պալատում առանձին են եղել եւ բարձրապատիւ հիւրերի համար բացուել են յատուկ կարգադրութեամբ, զարմացնելու համար արուեստի եւ ճարտարութեան գլուխ գործոցներով :

Եկեղեցական քանդարանային մի ժողովածուի մասին ուշադրաւ տեղեկութիւն է պահպանուել 10րդ դարի մատենագիր Ուխտանէս Եպիսկոպոսի Հայոց պատմութեան մէջ, որ վերաբերում է 7րդ դարի առաջին տասնամեակներում Դուինի կաթողիկոսարանում պահպանուող թանգարանային առարկաներին եւ հիմք է տալիս ենթադրելու, որ կաթողիկոսարանում գոյութիւն է ունեցել յատուկ թանգարան եւ թանգարանապետի պաշտօն :

Մովսէս կաթողիկոս Եղարզեցու (574—604) մահուանից յետոյ, մինչեւ նրա յաջորդ Աբրահամ Աղբաթանեցու կաթողիկոս դառնալը 607 թուականին, երեք տարուց աւելի, կաթողիկոսի տեղապահ է եղել հին մատենագրութեան քաջ յայտնի, հմուտ յունագէտ, դաւանաբանական խնդիրների մեծ գիտակ Վրթանէս քերթողը (*), որի ստացած կրթութեան եւ ունեցած բարեմասնութիւնների վերաբերեալ Ուխտանէս պատմիչը հետեւեալն է գրում . «Վրթանէսս այս վարդապետ եղեալ Հայոց՝ սնեալ եւ ուսեալ ի տան կաթողիկոսարանին, այր հեզ եւ իմաստուն, հոգեւոր եւ հանճարեղ, երկիւղած եւ ուղղափառ հաւատոյ հիմն, լի գիտութեամբ եւ ամենայն շնորհօք զարգարեալ, սնեալ սրբութեամբ առ սուրբ աթոռոյն սրբոյն Գրիգորի, տնկեալ ի տան տեան եւ ծաղկեալ ի գաւիթս աստուծոյ», եւայլն (**):

Ուխտանէսը, Վրթանէսի կաթողիկոսական աթոռի տեղապահութեան պաշտօնից բացի, յիշատակում է նրա մի ուրիշ պաշտօնը եւս, որ մեզ համար առանձին կարեւորութիւն ունի : Վրթանէս Քերթողին նա անւանում է նաեւ աւանդապահ, այն էլ երկու տարբեր տեղերում : Այսպէս՝ «Ինքն էր տեղապահ եւ աւանդապահ (***), եւ Վրթանէս վարդապետ, որ էր տեղապահ աթոռոյ սրբոյն Գրիգորի, այլեւս աւանդապահ ի մահուանէ Մովսիսի մինչեւ յԱբրահամ, որ յաջորդեալ գաթոն» : (****)

Հասկանալի է, որ աւանդապահը կաթողիկոսական տան աւանդ-

(*) Ակադեմիկոս Մանուկ Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին (սկզբից մինչեւ 10րդ դար), Երեւան, 1944, էջ 363 :

(**) Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, 1871, էջմիածին, հատուած երկրորդ, էջ 59 :

(***) Նոյնը, էջ 65 :

(****) Նոյնը, էջ 62 :

ների պահողն է, բայց հետաքրքիր է, թէ ինչ աւանդներ է նա պահել:

Ուխտանէս պատմիչը գրում է, որ Վրթանէս Քերթովը գրաւոր ցուցակով նորընտիր կաթողիկոսին է ներկայացնում իր պահած աւանդները, որ Մովսէս կաթողիկոսը մեռնելուց առաջ նրան էր վստահել: Այդ աւանդի մէջ Ուխտանէսը նախ յիշատակում է «Կրկական ու կենսակիր» մասունքով մի խաչ, այնուհետեւ առաքեալների մասունքներ, որ բերուած են եղել Հռոմից: Յիշատակում է նաեւ կաթողիկոսական թանկարժէք աթոռն ու գաւազանը, եկեղեցական սպաս՝ սկիհներ, վարագոյրներ, խնկամաններ, բուրվառներ, քշոցներ, ակնեղէններով զարդարուած եւ ոսկով ու մարգարիտներով պատած կաթողիկոսական վակաս, մեծարժէք զգեստներ, հանդերձանք, բեհեղեայ եւ դիպակեայ բանուածքներ, ծիրանիններ, Տրդատ թագաւորի արքայական հանդիսաւոր զգեստը, որ, ինչպէս վկայում է Ուխտանէսը, յետագայում ինքն էլ է տեսել: Աւանդների շարքում Ուխտանէսը յիշատակում է նաեւ բազմաթիւ եկեղեցական ու վարդապետական գրքեր եւ, որ գլխաւորն է, մարմնաւոր, այսինքն՝ աշխարհիկ առարկաներ, որոնք կապ չունեն եկեղեցու հետ: Նա գրում է. «Ապա այնուհետեւ բերեալ գաւանդն որ ինչ նմայն էր հաւատացեալ ի Մովսիսէ հայոց կաթողիկոսէ ի ժամ մահուան իւրոյ, նախ զկրկական եւ կենսակիր աստուծոյ նշանն, եւ ապա զնշխարս սուրբ առաքելոցն՝ զոր բերեալ էր սրբոյն Գրիգորի ի Հռոմայ՝ գտուեալն նմա ի բարեպաշտէն Կոստանդինոսէ, եւ յետ այնորիկ զաթոռն եւ զգաւազանն, որ պատուով պահեալ էր եւ պաշտեալ, եւ զայլ ամենայն զսպաս սրբութեան՝ զսկիհս եւ զգեստս սրբոյն սեղանոյն, եւ զվարագոյրս, զխնկանոցս, եւ զգրուրվառս, եւ զքշոցս, եւ զվակաս կաթողիկոսին մետաքսեայ, կազմեալ յականց եւ յոսկոյս եւ ի մարգարտէ, եւ զայլ զգնելիսն եւ զարկանելիս քահանայից եւ սարկաւազաց, զբեհեղս եւ զծիրանիս, որպէս մարգարէն եւ թիւ արկեալ կարգէ, զեզրածիրանիս եւ միջնածիրանին, եւ որ առաջին եւ զինի այսոցիկ ասի, եւ զայլ եւս պայծառ պատմուծանս պէսպէս զարդուց, դիպակաց եւ կերպասուց, եւ ծիրանեաց դունակ գունակ, եւ երփն երփն, եւ երանդ երանդ՝ ծաղկազարդ գունօք գործեալ գեղեցկապէս: Նաեւ զբարեպաշտին մերոյ թագաւորին Տրդատայ պատուական զգեստն, զոր տուեալ ի տուն տեառն ի սպաս սրբութեան, զոր մեր տեսեալ աչօք մերովք:

Եւ ապա յետայնորիկ բերեալ բազում զբեան զանազան եւ ազգի ազգի, եկեղեցական եւ վարդապետական եւ այլ, եւ մարմնաւոր իրք զոյրիւ չափ բերեալ զրով առաջի կացուցանէր, եւ օրհնեալ լինէր ի հայրապետէն: Եւ բազում երախտիս եւ շնորհակալութիւնս րնկալ

յամենեցունց» : (*)

Դժբախտաբար, պատմիչը «մարմնաւոր իրք»ի վրայ առանձին ուշադրութիւն չի դարձրել եւ չի թուարկել, բայց հասկնալի է, որ դրանք աշխարհիկ ընոյթի այնպիսի առարկաներ են եղել, որոնք պաղատարապէս չեն կապուել եկեղեցու հետ եւ միայն իբրեւ արուեստի գործեր կամ պատմական անցեալի հետ կապուող առարկաներ, որոնք նիւթականօրէն մեծարժէք են եղել, ընկել են կաթողիկոսական տան թանգարանի մէջ :

Մարմնաւոր իրերը, ինչպէս եւ շատ այլ առարկաներ (Տրդատ թագաւորի զգեստը եւ այլն), եկեղեցական գործածութեան առարկաներ չէին կարող լինել :

Նոյնիսկ եկեղեցական իրերը, որոնք կաթողիկոսարանում պահուել են յատուկ ցուցակով, ասորեայ գործածութեան առարկաները չէին կարող լինել, որովհետեւ նրանք ոչ թէ եկեղեցում, այլ կաթողիկոսական տանն են պահուել : Անկասկած այդ եկեղեցական իրերը եւ թանկարժէք են եղել, բարձր արուեստով պատրաստուած, որոնք պահուել են յատուկ խնամքով՝ գործածութեան մէջ չդնելու համար :

Ուխտանէս պատմիչի «գրով առաջի կացուցանէք» բառերը վկայում են այն մասին, որ հնում աւանդները գրաւոր ցուցակով յանձնել են աւանդապահին եւ ցուցակով էլ նրանցից ստացել :

Վրթանէս քերթողն իր մօտ պահուող աւանդները կաթողիկոսին ներկայացրել է գոյքացուցակի համաձայն, առանց որեւէ պակասի եւ թերութեան կամ, ինչպէս պատմիչն է ասում, «ոչինչ թերի եւ թեթեւ թողեալ» :

Ուխտանէսը կարեւոր չի համարել գրել, թէ ինչպէս է կոչուել կաթողիկոսարանի աւանդներ պահելու տեղը՝ թանգարան, թէ մի ուրիշ անունով :

Սակայն, ինչպէս էլ նա կոչուէր, վերեւում բերուած առարկաների ցանկից երեւում է, որ այդ առարկաների հաւաքածուն թանգարանային ընոյթ է ունեցել եւ լիապէս համապատասխանել է այնպիսի եկեղեցական թանգարանների, ինչպիսիք են էջմիածնի վանքի այժմ գոյութիւն ունեցող թանգարանը եւ շատ ուրիշներ :

Եկեղեցական թանգարանի գոյութեան հարցի վրայ որոշ լոյս է սփռում Յովհաննէս Դրասխանակերտցին մի հետաքրքիր վկայութեամբ, որ վերաբերում է Զուարթնոցի կառուցմանը :

Նա գրում է, որ Ներսէս Տայեցին Զուարթնոցի կառուցման ժա-

(*) Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, հատուած Երկրորդ, էջ 66 :

մանակ շէնքի չորս հաստահեղոյս սիւների տակ թաղում է Գրիգոր Լուսաւորչի ոսկրերը, բայց գլուխը չի թաղում, այլ դնում է մի գզրոցի մէջ եւ տեղաւորում զանձարանում, որպէսզի փափաքողները տեսնեն եւ ախտակիրները՝ բժշկուեն: (*)

Նշանակում է, այդ զանձարան կոչուածը մի տեղ էր, որտեղ դրուած առարկաները, այդ թւում նաեւ Գրիգոր Լուսաւորչի գանկը, ամէն մարդ կարող էր տեսնել եւ բժշկուել հեթանոսական մարմնաւոր ախտից:

Գրիգոր Լուսաւորչի ոսկրերը Զուարթնոցում թաղելը թէեւ Զրդ գարում յօրինուած ականգութիւն է (**), բայց մեզ համար այստեղ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում, որովհետեւ պարզաբանում է կաթողիկոսարանի զանձարանի բնոյթը եւ այն, որ այդ զանձարանը միանգամայն տարբեր է «զանձա ծածկութիւն» զաղտնի զանձարանից, որ գոյութիւն է ունեցել Գուհիի կաթողիկոսարանում, արաքնեբլի տիրապետութեան ժամանակ: (***)

Եթէ արքունական թանգարանը պալատի ներսում ծառայում էր մեծապատիւ հիւրերի հետաքրքրութեանն ու ժամանցին, որտեղ նըրանք ծանօթանում էին արուեստի լաւագոյն նմուշներին, Կաթողիկոսի տան զանձարանը, ինչպէս նաեւ եկեղեցական բոլոր թանգարանային բնոյթի հաստատութիւնները, առաւելապէս հետապնդում էին դործնական նպատակներ: Այստեղ հաւաքուած առարկաներից շատերն իրենց մասունքներով ծառայում էին կրօնական պրոպագանդային: Այդ իսկ առումով, եկեղեցական թանգարանները բաց են եղել ուխտաւորների առաջ, հետեւապէս նրանք աւելի մատչելի են եղել ժողովրդին, քան պալատներին կից արքունական կամ իշխանական թանգարանները, չնայած այն բանին, որ արքունական թանգարանները կոչուել են թանգարան, իսկ եկեղեցականները, ինչպէս տեսանք Դրասխանակերտցու վկայութիւնից, թանգարան անունը չեն կրել, այլ կոչուել են Գանձարան, որ ըստ էութեան նոյն իմաստն ունի եւ հաւանաբար հնում այդ անունները յաճախ փոխարինել են միմեանց:

(*) Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, էջ 84:

(**) Կ. Ղափաղարեան, Զուարթնոց, «Պատմա-բանասիրական հանդէս», 1959 թ. համար 4 (7), էջ 179:

(***) Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց: Բ. տպ. ՍՊԲ, 1887, էջ 169-170:

Բ. — ԱԻԱՆԴԱՏՆԵՐԸ

Նոյն դերն են կատարել նաև եկեղեցական ավանդատները հայերի քրիստոնէութիւն ընդունելու գրեթէ սկզբից մինչև 11րդ դարը ներառեալ, այն իմաստով, որ նրանց մէջ եւս պահուել են եկեղեցական եւ աշխարհիկ բնոյթի թանկարժէք եւ բարձրարուեստ առարկաներ՝ սրբոց մասունքներ, իշխանական եւ արքայական նուէրներ, մագաղաթեայ ձեռագիր գրքեր, պաշտամունքի այլ առարկաներ եւ հնից մնացած պատմական յիշատակարաններ :

Հայաստանի հեթանոսական տաճարներն ունեցել են թանկարժէք պատմական յիշատակարաններ, մանաւանդ գլխաւոր աստուածներին նուիրուած մեհեաններում, որոնք քրիստոնէութիւն ընդունելու ժամանակ բռնադրուեցին եւ ոչնչացուեցին, իսկ նոր հիմնադրուող քրիստոնէութիւնը 4րդ դարում պարզ կրօն էր՝ առանց պաճուճանքի, եւ դեռեւս չունէր եկեղեցական հարուստ սպաս, զգեստ, զարդարանք եւայլն :

Սակայն 5րդ դարում անհրաժեշտութիւն առաջացաւ հին եկեղեցիներին կից կառուցելու օժանդակ սենեակներ՝ ավանդներ պահելու համար, որոնք սկզբում կառուցուած էին եկեղեցիների արեւելեան ծայրերին, հիւսիսային կամ հաւարային կողմի վրայ, իբրեւ յաւելուած . օրինակ, Քասաղի եռանաւ տաճարի ավանդատունը, որ 5րդ դարի յաւելուած է, կառուցուած է եկեղեցու արեւելեան ծայրի հիւսիսային կողմում (*), իսկ Դիրաքլարի եկեղեցունը՝ արեւելեան ծայրի հարաւային կողմում :

Չպէտք է մոռանալ, որ 5րդ դարում կառուցուած եկեղեցիները, մեծ մասամբ, իրենց արեւելեան ծայրին ունեն զոյգ ավանդատներ, մէկը՝ հիւսիսային եւ միւսը՝ հարաւային կողմում : Սրանք ոչ թէ յաւելուածներ են՝ բուն տաճարի վրայ բարդած, այլ կառուցուած են նրա հետ միասին, իբրեւ նրա անքակտելի մասը :

(*) Թորոս Թորամանեան - Նիւթեր հայկական ֆարտաբալետութեան պատմութեան, աշխատութիւնների ժողովածու, Երևան, 1942 թ. էջ 112-119 եւ 121 : Նաև Ալեքսանդր Սահիմեան, Քասաղի բազիլիկայի ֆարտաբալետութիւնը, Երևան, 1955, էջ 119 : Ճարտարապետ Սահիմեանն ավանդատներն անուանում է օժանդակ սենեակներ, որ կառուցուած են տանարների կամ եկեղեցական դահլիճների կից :

Այդպիսիներից մէկն է Տեկորի նշանաւոր տաճարը, որի աւանդատները, նրա արեւելեան կողմում, կիսով չափ մտնում են դահլիճը դոյացնող ուղղանկիւն քառանկիւնու մէջ եւ կիսով չափ էլ նրանցից դուրս են չեչտուում դէպի հարաւ ու հիւսիս եւ այդ մասով նրանք սահմանափակում են հարաւային, հիւսիսային, արեւմտեան կողմերն ընդգրկող արտաքին սիւնապարզ սրահի արեւելեան ծայրը: Տեկորի տաճարի աւանդատները ուղղանկիւն քառանկիւնի սենեակներ են, որոնք ձգուած են հարաւից դէպի հիւսիս, իսկ արեւելքից արեւմուտք նրանք զգալի կերպով նեղ են:

Դրը դարում զոյգ աւանդատներ ունեցող եկեղեցիների թիւը շատ է մեծանում: Այդպիսիներից կարելի է թուել Մաստարան, Արթիկի խաչածեւ եկեղեցին, Գոյանէն, Թալինի կաթողիկէն, Մրենք, Արուծի տաճարը եւ շատ ուրիշներ:

Ծրը դարում կառուցուել են նաեւ չորս անկիւնների վրայ չորս աւանդատուն ունեցող տաճարներ: Օրինակ, Երբերույքի տաճարն ունի չորս աւանդատուն: Դրը դարում չորս աւանդատուն ունեցող եկեղեցիների թիւը եւս շատ է մեծանում: Այդպէս են, օրինակ, Հոփսի մէի տիպի բոլոր եկեղեցիները (Հոփսիմէ, Աւան, Միսաւան, Օշականի հնազոյն եկեղեցին, որ 19րդ դարի վերջին քանդուեց եւ ձեւափոխուեց, Թարգմանչաց, Աղիամանի տաճարները եւայլն):

Ինչպէս ասացինք, աւանդատներն սկզբնապէս կառուցուել են, որպէսզի այնտեղ պահուեն եկեղեցիներում հետզհետէ կուտակուող թանկարժէք առարկաները, որոնք առօրեայ դործածութիւնից ազատ էին, այսպէս կոչուած՝ աւանդները: Նրանց միայն մի մասը հանդիսաւոր օրերին կարող էր օգտագործուել:

Աւանդները վանքերում եւ եկեղեցիներում հետզհետէ բազմանում էին մի քանի ճանապարհով, նուէրների, եկեղեցական տուրքերի, կտակների, ձեռքբերումների, ինչպէս նաեւ վանքերին կից դոյութիւն ունեցող արհեստանոցների միջոցով: Այդ բոլոր ազդիւրներից աւանդատներում բազմանում էին ոսկերչութեան, ասեղնազործութեան, փորագրութեան, ձեռարուեստի, նկարչութեան նմուշները:

Հայոց միջնադարեան եկեղեցական կանոնների մէջ բազմաթիւ կէտեր կան աւանդների ստացման եւ պահպանման մասին:

Մահակ Պարթեւի կանոնների մէջ, որոնք վերնագրուած են՝ «Նորին Ս. Մահակայ, թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զգանձս, եկեղեցւոյ, կամ որպէս մատակարարել», խրախուսուում է գիւղեր, դաստակերտներ, ոսկու եւ արծաթի դանձեր, թանկարժէք հանդերձանք եկեղեցուն նուիրաբերելը՝ հոգու փրկութեան, վախճանուած-

ների յիշատակին եւ այլ նման նպատակներով :

Վերոյիշեալ կանոնների ՄԱ (51) կէտում ասուած է . «Իշխանք զգեղւս, զդաստակերտս եւ զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ, այլք յանդաստանաց եւ ի պատճառոց հանդերձից պատուականաց, ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղաղս սիրելեաց եւ ծնողաց եւ վախճանելոց հատուցանեն հատուցմունս, զարդ եւ պայծառութիւն կազմելով հոգւոց եւ մարմնոց» :

Եկեղեցուն նուիրարերուած առարկաները, ըստ կանոնադրի, իբրեւ տուրք տրուում են Աստծուն եւ ոչ թէ եկեղեցու սպասաւորներին, որոնք միայն պահապան ու վերակացու են այն գանձերի վրայ : «Տեսանես, զի Աստուծոյ են ինչքն, քանզի իւրն համարի զտուրս մեր եւ ոչ մարդոյ ումէք . բայց միայն պահապան եւ վերակացու է տեսուչ եպիսկոպոսն» : (*)

Այդ նոյն կանոնի շարունակութիւնից երեւում է, որ պահապան եպիսկոպոսները յաճախակի ծախել են իբրեւ աւանդ տրուած առարկաները : Մախելը թէեւ արգելուած չէ կանոններով, բայց պահանջըւում է, որպէսզի առ ու ծախքի գործարքը կատարուի գրաւոր, վկաներով եւ երդումով, որպէսզի ծախող եպիսկոպոսն իբրեւ գող չճանաչուի : «Եւ թէ դէպ ինիցի փոքր ինչ ծախեն, գիր առնեն եւ վկայս կացուցանեն եւ երդումն, զի մի երեւեսցին թիւրք եւ գողք ի գործս իւրեանց» : (**)

Կանոնադրի մէջ տեղեկութիւններ կան նաեւ այն մասին, որ եկեղեցիներում պահուող սպասք եւ վարագոյրները քահանաները տրամադրել են կերուխում անողներին՝ գինի խմելու եւ նորապսակներին առազատ սարքելու համար :

Սահակ Պարթևի կանոնների Ի (20) կէտում ասուած է . «Եւ լսեմ թէ եկեղեցւոյ սպաս, մանաւանդ զվարագոյր ի հարսանիս յառազատ փեսայի եւ հարսի, եւ զսկի՛՛՛ գինի ըմպելոյ անօթս, տան գինւորաց : Վասնորոյ արժան է զքահանայն խզել ի կարգէ իւրմէ վասն այլպիսի խառնակ եւ չար գործոց, զոր յայսմ՛հետէ այլ մի ոք իշխեսցէ առնել» : (***)

Վիմական արձանագրութիւնների մէջ բազմաթիւ տեղեկութիւններ կան վանքերին եւ եկեղեցիներին ոսկեայ եւ արծաթեայ բարձրարուեստ առարկաներ նուիրելու մասին, մեծ մասամբ՝ մասնատուների, զարգախաղերի եւ զրքերի կազմի ձեւով :

(*) Կանոնագիրք հայոց, ձեռագրերի համեմատութեամբ խմբեց Արսէն Ղլտմեան, Թիֆլիս, 1913, էջ 45 :

(**) Նոյն տեղը, էջ 46 :

(***) Նոյն տեղը, էջ 24 :

Օրինակ, Հաղբատավանքի վիմական արձանագրութիւններէ մէջ, իբրեւ նուէր, բազմաթիւ այլ առարկաների եւ կալուածքներէ հետ միասին յիշատակած են նաեւ՝ 1. «Սաչ մի արծաթի ոսկեզօծ» (արձ. 35), 2. «Սաչ մի արծաթի» (արձ. 76), 3. «Գ (3) նշան» (այսինքն՝ խաչ) (արձ. 50), 4. (Ս. Նշան ոսկի, որ ունի մասունս» (արձ. 50), 5. «մեծածախ պահարան» (արձ. 44), (պահարանը տուփ, զդրոց իմաստով է գործածուած, մեծածախ պահարանը ոսկուց կամ արծաթից է լինում, թանկարժէք քարերով զարդարուած), 6. «մեծածախ պահարան» (արձ. 45), 7. «Մեծածախ պահարան Ուրդաձորոյ Ս. Նշանին» (արձ. 59 եւ 96), (այդ արծաթէ կամ ոսկէ տուփ է, զանազան յօրիւուածքներով, որի մէջ պահուել է Ուրդաձոր եւ Ս. Նշան անունը կրող թանկարժէք խաչը), 8. «Մեծածախ սկիւզ» (արձ. 39), 9. «Սկիւք արծաթիք» (արձ. 111), (սկիւհներն այստեղ մէկից աւելի են, բայց չգիտենք, թէ քանիսը), 10. «Սպաս զարդուց» (արձ. 50), (եկեղեցու զարդարուն սպաս է նուիրուած, բայց թէ ինչ՝ չի յիշատակուած, հաւանաբար այն պատճառով, որ առարկաների վրայ եղել են փորագրի արձանագրութիւններ՝ նուիրաբերման մասին), 11. «Սպասք եկեղեցուց» (արձ. 79), (այստեղ եւս, նախորդի նման, յայտնի չէ, թէ ինչ առարկաներ են), 12. «Ճկոյթն Գրիգոր Լուսաւորչի» (արձ. 61), (անշուշտ ճկոյթն ունեցել է մասնատուփ կամ աջ, որ սովորաբար ոսկուց կամ արծաթից են լինում՝ զարդարուած թանկարժէք քարերով), 13. «Աւետարան» (արձ. 11), 14. «Գ (3) գիրք» (արձ. 32), (միջին դարերի համար մեծ նուէր էր, որովհետեւ գիրքը, որ ձեռքով էր գրւում եւ զարդարում, շատ ծախսեր էր պահանջում), 15. «Ոսկեմած աւետարան» (արձ. 44), (մածել-պատել, ոսկով պատած աւետարան), 16. «Բ. (2) Գիրք» (արձ. 109), 17. «Աւետարան մեծածախ» (արձ. 111) : (*)

Այդպիսով բազմաթիւ նուէրներ են տուել նաեւ Սանահնի վանքին եւ ուրիշ շատ վանքերի ու եկեղեցիներին :

Այդ նուէրները դարերի ընթացքում աւերի եւ զոդութեան են ենթարկուել, կորել, ոչնչացել են, եւ մեր ձեռքը քիչ բան է հասել : Այդ քերի մէջ էլ կան արուեստի այնպիսի գլուխ գործոցներ, ինչպիսիք են էջմիածնի փղոսկրեայ կաղմով աւետարանը, Խոտակերաց Ս. Նշանը, Հաւուց Թառի «ամենափրկիչ» անունը կրող փայտեայ փո-

(*) Փակագծերի մէջ բերուած արձանագրութիւնների համարները վերցրել ենք մեր տպագրուող աշխատութիւնից, որ նուիրուած է Հաղբատավանքի ֆարտապետութեանը եւ վիմական արձանագրութիւններին :

բաքանդակ նշանը, Կիլիկեան շրջանից մեզ հասած արծաթեայ պատկերագարդ պահարանը եւ այլ առարկաներ, որոնք արծաթագործութեան, նկարչութեան եւ փորագրութեան լաւագոյն նմուշներ են :

Ներսէս Մեծի եւ Մամիկոնեան նախարարական տան Ներշապուհ եպիսկոպոսի անունից գրուած կանոններից մէկը պարտադրում է, որ գլխաւոր քահանան եկեղեցում լինի մշտապէս եւ եկեղեցու սպասն էլ նրա մօտ լինի : «Պաշտօն պատարագիք եւ սպասք եկեղեցոյ ի գլխաւոր քահանային տանն եղիցի, որպէս յառաջագոյն կարգեալ է, եւ ինքն գլխաւոր քահանայն զեկեղեցին մի իշխեսցէ թողուլ եւ զործոց տան պարապիլ, այլ միշտ ի Ս. եկեղեցւոյն կացցէ» : (*)

11րդ դարից սկսած, աւանդատների դերը փոխուեց, որը սերտորէն կապուած էր Հայաստանում տիրող քաղաքական անբարենպաստ պայմանների հետ :

Հարցն այն է, որ իրար ետեւից Հայաստանի գլխին եկած դժբախտութիւնները՝ սկզբում սելջուկ թուրքերի (1047-1048 թթ.), հետագայում՝ Խորիզմի շահ Ջալալեղզինի (1225 թ.) եւ մոնղոլների (1236 թ. եւ հետագայի) արշաւանքների եւ աւերածութիւնների հետեւանքով Հայաստանում տիրեց յուսալքութիւն, այնպիսի ծաւալով, որ ամէն մարդ, դառնացած իր կեանքից, մտածում էր միայն հանդերձեալ կեանքի եւ հոգու փրկութեան մասին : Այդ ժամանակ՝ սկզսեցին ամէն ինչ նուիրել եկեղեցուն՝ կայուածք, դոյք, դրամ, այգի, անձնական ու եկեղեցական իրեր, պայմանով, որ եկեղեցու սպասաւորները պատարագ մատուցանեն իրենց եւ մերձաւորների հոգու փրկութեան համար :

Բազմաթիւ նուիրատուների պահանջները բաւարարելու համար անհրաժեշտ էր պատարագի սեղանները շատացնել եկեղեցիներում, որովհետեւ մի օրուայ ընթացքում մի սեղանի վրայ միայն մի պատարագ կարելի էր կատարել, իսկ հին եկեղեցիները միայն մի սեղան ունէին : Նուիրատուներին այդ էջը բաւարարում, որովհետեւ նրանք միայն նշանաւոր օրերին էին պատարագ ուզում ամէն տարի :

Այդ դրութիւնից դուրս գալու համար եկեղեցու սպասաւորներն աւանդատները եւս օգտադործեցին պատարագի համար եւ նրանց մէջ զոհասեղանի խորհրդանշանը հանդիսացող վէմքար (պատարագի սեղան) դրին եւ աւանդատների արեւելեան կողմի պատը դարձրին կիսաբոլոր խճրան : Դեռ աւելին : Աւանդատները դարձրին կրկնայարկ, վէմքար դրին նոյնիսկ տապանատներում, զանդակատներում եւ այլ բոլորն արին նուիրատուների պահանջները բաւարարելու նպատակով :

(*) Կանոնագիրք, էջ 111 :

Այդ ժամանակուանից սկսած, աւանդատները կոչուեցին նաեւ խորաններ, իսկ առաջ այդպէս էր կոչուում միայն եկեղեցու գլխաւոր սեղանը, որտեղ դրուած էր պատարազի վէմքարը:

Մօտաւորապէս 13րդ դարից սկսած, եկեղեցու գլխաւոր սեղանը միւս երկրորդական սեղաններից տարբերելու համար սկսեցին կոչել աւագ խորան:

Այս բոլորից յետոյ, եկեղեցիներում եւ վանքերում աւանդները պահուում էին աւանդատներից մէկում, իսկ միւսները օգտագործուում էին իբրեւ խորան:

Մեծ վանքերում, որտեղ թանկարժէք շատ առարկաներ կային, աւանդները պահուում էին յատուկ կառուցուած շէնքերում, որոնք տարբեր տեղերում եւ ժամանակներում տարբեր անուն էին կրում — նշխարատուն, նշխարախուց, դանձատուն, դանձարան եւայլն: Ինչ խօսք, որ այս շէնքերն աւելի մեծ էին, քան աւանդատները, ունէին զեղեցիկ ճարտարապետութիւն՝ իրենց ժամանակի ոգուն համապատասխան, եւ իրենց բնոյթով եկեղեցիներին կից աշխարհիկ կառուցուածքներ էին, ինչպէս, ասեմք, վանքերի սեղանատները, աղբիւրները եւայլն: Նշխարատներն ունէին պատերի մէջ արուած յարմարանքներ (խորշ, պատուհան, դարան)՝ պահուող առարկաները խնամքով դասաւորելու եւ պահպանելու համար: Օրինակ, Հաղբատի նշխարատունն ունեցել է 8 դարակ, դարակներ ունի նաեւ Սանահինի նշխարատունը: Վերջինս կառուցուած է վանքի հիւսիս-արեւելեան կողմում, աշխարհիկ ճարտարապետութեամբ եւ զեղեցիկ յօրինուածքով: Կառուցումն աւարտուել է 1063 թուականին:

Կառուցման վերաբերող արձանագրութեան մէջ ասուած է՝

«Ի ՇԺԹ (512 + 551 = 1063): Ես Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնդխարատունս»... եւայլն:

Մի ուրիշ, աւելի ուշ ժամանակի արձանագրութեան մէջ այդ շէնքը կոչուել է նշխարախուց:

Հասկանալի է, որ «տուն» կամ «խուց» միեւնոյն իմաստն ունեն այստեղ եւ երկու դէպքերում էլ այդ շէնքը կառուցուած է գլխաւոր քապէս նշխարներ, այսինքն՝ մասունքներ պահելու համար, որոնք, ինչպէս յայտնի է, օսկեայ եւ արծաթեայ յարդարանքի մէջ էին դրուում, մեծ մասամբ՝ զեղեցիկ պահարաններ (մասնատուփերի) եւ ահանակու խաչերի:

Մասունքների հետ միասին նշխարատներում, ինչպէս նաեւ աւանդատներում, պահում էին նաեւ բազմաթիւ այլ առարկաներ՝ եկեղեցական թանկարժէք սպասք, հանդերձանք, իշխանական եւ առաջնորդական մատանիներ, աշխարհիկ առարկաներ եւ գրքեր:

Հնում գրքերը մեծարժէք առարկաների թուին էին պատկանում եւ պահուում էին ոսկեայ եւ արծաթեայ առարկաների հետ միասին : Գրեթէ բոլոր նշխարատուն եւ գանձատուն կոչուող շէնքերում, այլ առարկաների հետ, պահուել են նաեւ գրքեր եւ, ընդհակառակը, մատենադարաններում էլ՝ գրքերի հետ միասին նաեւ այլ առարկաներ :

Այդ է պատճառը, որ երբեմն նշխարատունը կոչուել է գրատուն եւ, ընդհակառակը, գրատունն էլ որոշ արձանագրութիւնների մէջ՝ նշխարախոսք : Այդտեղ ոչ թէ անունների շիթթութիւն է տեղի ունեցել, այլ, ելնելով այդ շէնքերի բովանդակութիւնից, միեւնոյն շէնքը երբեմն անուանել են գրատուն եւ երբեմն էլ՝ նշխարատուն :

Միջին դարերում զիրքը գրուում էր գեղադիր մասնագէտի ձեռքով, որ գրիչ էր կոչուում, եւ պատկերազարդում էր մանրանկարչի կողմից, որ ծագկող անունն էր կրում : Մեծ ծախս եւ ձեռքի հսկայական աշխատանք էր գործադրւում մէկ օրինակ զիրք պատրաստելու վրայ : Անհրաժեշտ էր կաշին մշակել եւ մագաղաթ պատրաստել, իւրաքանչիւր էջը կոկել, մոմել, տողել, գրել, նկարազարդել, գիրք կազմել, կազմը զարդարել եւայլն : Ամիսներ եւ երբեմն էլ տարիներ էին հարկաւոր մի ձեռագիր զիրք արտադրելու եւ նկարազարդելու համար :

Չնայած տաժանելի աշխատանքին, մի շարք վանքերում գրքերի արհեստանոցներ կային՝ իրենց նշանաւոր գրիչներով եւ ծաղկողներով : Դրանց այսօր անուանում են գրչութեան օջախներ, որտեղ գրուել եւ պահպանուել են հազարաւոր գրքեր : Գրչութեան օջախները ոչ միայն հին գրքերի արտադրութեանն են ծառայել, այլեւ այդպիսի օջախների շուրջն են համախմբուած եղել մեր հին մատենագիրները եւ այնտեղ հեղինակել իրենց արժէքաւոր գործերը : Այդ օջախները միաժամանակ եղել են մտքի կենտրոններ :



Դարեր շարունակ հայ ժողովուրդը ստեղծագործել է արուեստի գլուխ գործոցներ, որոնք երբեք ինքը չի օգտագործել, չի վաճել եւ վաղ թէ ուշ, տարբեր ճանապարհներով դրանք հաւաքուել են պատաներում եւ եկեղեցիներում :

Ո՞ւր են այսօր այդ բոլորը : Ո՞ւր են վիմական արձանագրութիւնների մէջ յիշատակուած ոսկեզօծ, արծաթապատ, մեծածախ իրերն ու պահարանները : Ո՞ւր են Տրդատի արքայական զգեստը, որ Ուլտանէսն իր աչքով է տեսել Դուլինի կաթողիկոսարանում :

Հազարաւոր առարկաներից մեկ ժառանգութիւն են մնացել միայն փշրանքներ :

Պատահական չէ, որ արքունի թանգարանները պատմական երկերում յիշատակուել են միայն օտարերկրեայ կառավարչին կաշառու տալու կապակցութեամբ:

Նոյն բախտն է վիճակուել կաթողիկոսարանում պահուող առարկաներին, եկեղեցիների եւ վանքերի աւանդատներում պահուող բարձրարուեստ ստեղծագործութիւնների: Նոյնիսկ ստորերկրեայ ծածուկ պահեստները չեն փրկուել կորստից:

Ղեւոնդ Երէցը պատմում է, որ Եսայի կաթողիկոսի (775-788) մահուանից յետոյ Դուլինի արար ոստիկան Սուլէյմանն իր մօտ կանչում է հայ հոգեւորականներին եւ մեծ սպառնալիքներով նրանցից պահանջում է թաքցրած եկեղեցական թանկարժէք իրերը: Կղերականները ինչ պահել էին ծածուկ տեղերում՝ վախից բերում ցոյց են տալիս, եւ ոստիկանը վերցնում է ցանկացածը: Այդ մասին պատմիչը գրում է. «Եւ զամենայն ինչ զոր գտանէին ի դանձաւ ծածկութիւն ցուցին նման (Սուլէյմանին) եւ ոչինչ մնաց ի ծածկութեան, զոր ոչ եղին առաջին նորա, զսպասս ցանկալիս ոսկւոյ եւ արծաթոյ եւ որ ի քարանց պատուականաց, եւ զհանդերձս թագաւորացն զոր ի պատիւ սրբոյ եւ փառաւորեալ աստուածընկալ սեղանոյն եւ խորանին տեսոն նուիրեալ էին: Եւ իբրեւ ետես զայն ամենայն՝ խորհեցաւ միանգամայն վարել յաւարի. դարձեալ շրջեալ յայնց մտաց՝ առնոյր ինչ ցանկալի թուէր անձին իւրում՝ ի դանձուցն եւ ի հանդերձիցն պատմուականաց եւ զայլ ինչ ի սպասուցն»: (*)

Այնուհետեւ, Ղեւոնդ Երէցն իր պատմութիւնը վերջացնում է Ստեփանոս Դուեցու կաթողիկոս դառնալու հանգամանքներով: Նա պատմում է, որ 788 թուականին Ստեփանոսը մեծ կաշառատութեամբ կաթողիկոս է դառնում եւ վատնում է այն ամէնը, ինչ մնացել էր վեհարանում: Նա գրում է. Ստեփանոսը, «որ բազում կաշառօք յաջորդեալ ի հայրապետութեանն յաթո՞ վատնեաց ինչս եւ զստացուածս»: (**)

Աւարի եւ կաշառատութեան դոհ են դարձել ոչ միայն Դուլինի, այլեւ Էջմիածնի, Աղթամարի կաթողիկոսարաններում եւ բազմաթիւ վանքերում պահուող եկեղեցական ու աշխարհիկ ստեղծագործութիւնների հարուստ հաւաքածուները: Այդ մասին բազմաթիւ տեղեկութիւններ կան մեր միջնադարեան մատենագրութեան մէջ:

Յովհաննէս Ղրիմեցին Հաղրատավանքի պատմութեան վերաբե-

(*) Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի հայոց, Բ. տպ. ՍՊԲ, 1887, էջ 169-170:

(**) Ղեւոնդ Երէց, էջ 170:

ըող իր անտիպ աշխատութեան մէջ պատմում է, որ 1716ից 1751 թը-
ւականը Հաղբատի առաջնորդ է եղել Սուրբունեան Գրիգորը, որ իր
ժամանակի մեծագոյն մասը տրամադրել է վաշխառութեան. կարի-
քաւոր գեղդացիներին դրամ է փոխ տուել վաշխով ու հետզհետէ տը-
րապետել է նրանց հողերին: Այդ եղանակով նա վանքի հողերը հաս-
ցրել է 500 օրավարի:

1747 թուականին Սուրբունեանը Հաղբատավանքը լքել եւ փախել
է Թբիլիսի, որտեղ եւ 1751 թուականին մեռել է: Լուրեր են պատ-
մել, որ նա վանքից փախչելու ժամանակ իր գանձերն ու դրամը թա-
ղել է այնտեղ: (*)

1777 թուականին Հաղբատի առաջնորդ է նշանակուում Երուսա-
ղէմից իրբեւ նուիրակ եկած Թեքիրտաղցի (Թրակացի) Աբրահամ
վարդապետը: Նա Հաղբատում մի առաջնորդարան է շինում իր բնա-
կութեան համար եւ սկսում է ամէն տեղ փորփորումներ կատարել՝
գանձ գտնելու նպատակով:

Ղրիմեցին գրում է, որ Աբրահամը՝ «Սկսաւ որոնել զպահարանս
եւ զամենայն վայր եւ անկիւն բրելով եւ քանդելով, առ ի գտանել
զպահատ ինչ երեւելի, թաղուցեալ ի ժամանակէ անտի Սուրբունեան
Գրիգորի, բայց ոչինչ կամ սակաւ ինչ շահէր անդուստ»: (**)

Այս Աբրահամն ունեցել է մի սարկաւազ՝ Պետրոս անունով, որին
«լլիբը» եւ «ազահ» է անուանում Ղրիմեցին եւ «հրամայող իր վար-
դապետին»:

Փոքրաւոր Պետրոսն իր վարդապետից աւելի առաջ է անցնում
քանդումներ կատարելու եւ գանձ որոնելու աւերիչ գործունէու-
թեամբ: «Սա ինքն մոլեալ ի սէր գանձուց, եւ առաւել քան զվարդա-
պետ իւր վառեալ ի խնդիր նոցա, ոչ ինչ վայր եթող, զոր ոչ բրեաց,
եւ ոչինչ շինուած, որ ոչ խախտեաց, որոց խախտուածք երեւին մին-
չեւ ցայսօր», գրում է Ղրիմեցին:

Այդ քանդումները եւս արդիւնք չեն տալիս, ուստի այնուհետեւ
սկսում է որոնումներ կատարել քարայրներում եւ մի քարայրի մէջ
գտնում է բազմաթիւ գրչազիր գրքեր: Այդ մասին Ղրիմեցին պատ-
մում է հետեւեալը. «... ձեռն արկանէ ապա ի բազմադարեան պա-
հարանն կամ քարայրն գրոց մատենից, որ կայ յարեւմտից Հաղբա-
տայ ի խորագոյն յընդարձակագոյն մասն ջրաղացի ձորոյն յայսմ

(*) Ղրիմեցի Յովհաննէս Եպիսկոպոս, «Պատմութիւն հռչակաւոր
վանից Հաղբատայ Ս. Նշանին. հիմնեալ յարձանագիրս նախնեաց:
Անտիպ, էջ 182:

(**) Նոյն տեղը, էջ 196:

կողմանէ, հանդէպ ամբողջին կայենոյ, եւ է բացառոյն ի վանացս իր-
բեւ քառորդիւ ժամու, յորում էին, ըստ պատմելոց ակնանտեսից,
անհամար գրչագիր եւ երկաթագիր հնագոյն եւ ընտիր մատեանք,
մեծամեծ եւ փոքունք, ի յորով դարուց ժողովեալք, թող զմատեանս,
որք կային ի վերնայարկ խորանս եկեղեցւոյ սրբոյն Գրիգորի եւ զան-
գակատանն»: (*)

Աբրահամ վարդապետը, մի ամիս չարչարուելով, բոլոր ձեռագրե-
րը քարայրից բերել է տալիս վանք, լցնում է զանագան տեղեր՝ խորանների եւ
մատուռների մէջ: Այդ թափթփուած ձեռագրերը հետզհետէ դողա-
նում եւ տանում են՝ ում ինչ դուր է դալիս: Արիմեցին զարմանքով
այդ մասին գրում է. «Ձգիտեմ թէ զիա՞րզ կորեան կամ անհետ եղեն
այնչափ անհամար մատեանք, մանաւանդ ստուարագոյնքն ի նոցանէ
եւ առաւել մեծամեծքն»:

Եւ այդ Պետրոս սարկաւազը ձեռագրերից ամենաարժէքաւորնե-
րը, այսինքն՝ հնագոյնները, կազմահան եղածներն ու մաշուածները
հաւաքում, մեծ կոյտ է կազմում զանգակատան մուտքի դիմաց 10-12
ոտնաչափ բարձրութեամբ եւ վառում: Արիմեցին գրում է. «Ասի
յակնատեսից, թէ վերոյիշեալ Պետրոս սարկաւազ գոյրովս ի մատե-
նից անտի, որք փտեալք էին ըստ մասին կամ ցրուեալք ի թերթս
թերթս, կամ ի տետրակս, ժողովեալ եւ դիզեալ հանդէպ դրանն զան-
գակատան իբր տասն կամ երկուսասան ոտնաչափ թանճրութեամբ,
հուր էարկ եւ այրեաց զամենայն իբրեւ զանպիտանս»: (*)

(*) Զանգակատան եւ Ս. Գրիգոր եկեղեցու մէջ եղած ձեռագրե-
րի մասին Արիմեցին հետեւեալն է պատմում:

Մխիթար Գալանթարը, որ Գանձակի խառնութեան եմբակայ
րերից 1000 ընտանիք հայեր էր գաղթեցրել Շուլավեր եւ յետոյ 1776
քուականին, այսինքն՝ Աբրահամի առաջնորդ նշանակուելու նախորդ
տարին, տանուտէրերի եւ հոգեւորականների ուղեկցութեամբ շրջա-
գայութեան է դուրս գալիս՝ Շուլավերի մերձակայ վայրերին ծանօ-
թանալու նպատակով: Երբ պղնձահանքից տեսնում է Հաղբատի եւ
Սանահինի հոյակապ վանքերը, զարմանում է, որ նրանք լճուած ու
ամայացած վիճակումն են գտնում: Նա իր ուղեկիցների հետ միա-
սին մաքրում է յուշարձանները, գոհ մատուցում եւ փառելուց յետոյ
Գրիգոր եկեղեցու երկու վերնախորանների եւ զանգակատան միջնա-
յարկի չորս խորաններում գտնում է անհամար գրչագիր հնագոյն
գրքեր, որոնցից շատերն իջեցնում է եւ մէկ առ մէկ գնում եւ դարձ-
եալ իրենց նախկին տեղը դնում: (Յովհաննէս Արիմեցի, յիշեալ աշ-
խատութիւն, էջ 193):

(*) Արիմեցի, էջ 193-198: Արիմեցու անտիպ գործի Հաղբատի

Այդպէս ոչնչանում են բազմադարեան մշակոյթի մեծաթիւ կոթողներ, որոնց թւում՝ քանի-քանի հեղինակների արժէքաւոր գործեր, որոնք այսօր մեր ձեռքը չեն հասել :

Այսքան ձեռագիր ոչնչացել է միայն մի վանքում, մի օրում, այն էլ՝ առանց արտաքին թնամու միջամտութեան : Նրանք զոհ են դնացել տգիտութեան, եւ այդ դէպքը եզակի չէ :

Այս բոլորից յետոյ, եթէ այսօր ողջ աշխարհում պահպանուել են մօտ 30,000 հայերէն ձեռագիր գրքեր, ապացոյց է այն բանի, որ նրանց ընդհանուր թիւը եղել է առնուազն տասն անգամ աւելի :

Առաւել վատ վիճակում են եղել թանգարաններում, աւանդատներում եւ դանձատներում պահուող ոսկեայ, արծաթեայ իրերը, բարձրարուեստ գորգերը, բանուածքները, ականակուտ առարկաները, որոնք նիւթական բարձր արժէք են ունեցել : Այդպիսիներից միայն հատ ու կէստ առարկաներ են հասել մեզ :

Եզրակացութիւն.— Հայաստանը միջին դարերում ունեցել է թանգարաններ, հարուստ դանձատներ, աւանդատներ եւ նշխարատուներ, որպիսիք կարող էր ունենալ աւատական իրաւակարգ ապրող որեւէ զարգացած ժողովուրդ : Նրանց մէջ կէսորոնացուած են եղել հայ աշխատաւոր ժողովրդի դարաւոր ստեղծագործութեան լաւագոյն նմուշների հաւաքածոները, որոնք հետզհետէ բազմապատկուելու փոխարէն, քաղաքական անբարենպաստ պայմանների եւ տգիտութեան հետեւանքով, կողոպտուի են ենթարկուել եւ ժամանակի ընթացքում գրեթէ անհետ կորել :



Կ. Ղ.

ձեռագրերի ոչնչացման վերաբերող հատուածը տպագրուել է «Բագմավեպ»ի 1956 թուականի 4-5 միացեալ համարում : Մենք մէջքերու մնեքը կատարել ենք ձեռագրից :





ԳԱՌՆԻԻ ԵՒ ԴՈՒԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Հայաստանը եղել է նախամարդու բնակութեան եւ գործունէութեան հնագոյն օրրաններից մէկը: Այստեղ էլ մարդը կերտել է քարե-դարեան իր գործիքները, բնակութեան յարմարեցրել քարանձաւները եւ ապրել բնական սնունդով:

Մէկը միւսին են յաջորդել հազարաւոր սերունդներ, որոնք ընտելացրել են կենդանիներին, մշակել հողը, անցկացրել առուներ, կառուցել տներ ու բերդեր, կերտել գործիքներ ու զէնքեր, աշխատել ու կռուել եւ ճանաչել աշխարհը:

Հարիւրաւոր սերունդներ են մաքառել ու ստեղծագործել՝ յետնորդներին ժառանգութիւն թողնելով իրենց հոգեւոր ու նիւթական մշակոյթը, դարաւոր փորձը: Եւ այսօր այդ ամէնի մասին մենք տեղեկանում ենք գլխաւորապէս պեղումների միջոցով:

Վաղուց է հնագէտի բրիչը դադարել սոսկ թանգարանների համար նոր նիւթեր երեւան բերող գործիք լինելուց եւ ստանձնել է աւելի մեծ դեր, ստացել խորը խորհուրդ եւ իմաստ:

Սովետական Հայաստանի հնագէտները գործելու լայն ասպարէզ ունեն: Նրանց պեղումներն ընդգրկում են հին եւ նոր քարի դարը, պղնձի դարը, բրոնզի դարը, երկաթի մշակոյթի վաղ շրջանը եւ հնագոյն ցեղային միութիւնների ու պետական կազմաւորումների դարաշրջանը, վերջապէս, հին եւ միջնադարեան Հայաստանի տարբեր պատմական ժամանակաշրջանները:

Մեծ են Հայաստանում ծաւալուած պեղումները արդիւնքները, եւ յօղուածի սահմաններում այդ ամէնի մասին խօսելն անհնարին է, ուստի կը բնութագրենք միայն Գառնիի եւ Դուլինի պեղումները արդիւնքները:

Գառնին գտնուում է Երեւանից մօտ 30 քիլոմէթր դէպի արեւելք, Գեղամայ լեռների՝ արեւմուտք ձգուող բազուկների միջեւ, մի գեղադէր վայրում: Այստեղ կան հին ամրոցի մնացորդներ, հեթանոսական փառահեղ տաճարի աւերակներ, միջնադարեան եկեղեցիների վլատակներ, քանդակազարդ խաչքարեր:

Գառնին հին հայկական նշանաւոր ամրոց է եղել, արքայական ամարանոց եւ գօրակայան: Պեղումների շնորհիւ յայտնաբերուեցին պալատական շէնքերի խմբի մէջ մտնող մի քանի կառոյցների մնացորդները: Ամրոցի եռանկիւնաձեւ դարաւանդի ծայրին ամրոցի հրապարակն է, որի ճակատը զարդարում է Ա. դարի յունա-հռոմէական տիպի վեհաշուք սիւնազարդ տաճարը: Նրա կողքին, Ազատ դետի գեղատեսիլ ձորի համարեայ եղրին վեր են խոյացել պալատական երկու շէնք՝ մէկը եղել է հանդիսաւոր սրահ, իսկ միւսը՝ արքայական բնակելի ապարանք: Սրահը մի ընդարձակ կառուցուածք է, որի երկայնական պատերից դուրս են պրծել ութական մոյթի, իսկ կենտրոնական առանցքով անցել է ազատ մոյթերի մի շարք: Դէմ-դիմաց կանդնեցուած այս մոյթերի վրայ է հիմնուել սրահի ծածկը: Սրահի կողքին կառուցուած է եղել արքայական բնակելի ապարանքը, որը երկայնական առանցքով անցնող մի պատով բաժանուել է երկու թեւի: Իւրաքանչիւր թեւում ունենալով 5-6 սենեակ: Երկյարկանի այս շէնքից պահպանուել են միայն նկուղային յարկի մնացորդները, այստեղ եղել են ապարանքի տնտեսական բաժանմունքները՝ մառան, հնձան եւայն, իսկ մի սենեակի յատակի տակ կառուցուած է եղել ջրամբար: Ապարանքի պատերը նկարազարդուած են եղել, սակայն նկուղային յարկում միայն մի տեղում է կարմիր ներկուած սվաղի հատուած պահպանուել:

Ապարանքից հիւսիս, հրապարակի վրայ կառուցուած է եղել արքայական բաղնիքը, որն ունեցել է տաք, հով եւ սառը բաժանմունքներ, իսկ հանդատարան-հանդերձարանի յատակը զարդարուած է եղել խճանկարով: Բաղնիքն ունեցել է կրկնակի յատակ, եւ տաք օդն ու ծուխը վերին յատակի տակ մտնելով՝ տաքացրել են յատակը եւ ամբողջ բաղնիքը:

Գառնիի խճանկարը մի հարուստ յօրինուածք է, որը պատկերում է ծով՝ առասպելական արարածներով, աստուածութիւններով, ձկնորսներով եւ ձկներով:

Գառնիի պալատական շէնքերի խումբը, բացի որմնանկարներից եւ խճանկարներից, զարդարուած է եղել նաեւ մարմարէ արձաններով, աւազաններով, որոնց բեկորները գտնուել են պեղումների ժամանակ :

Հայ արքաները Գառնիում թողել են քարի վրայ փորագրուած արձանագրութիւններ, որոնցից 1945 թուականին գտնուել է Տրդատ արքայի յունարէն արձանագրութիւնը՝ ամբողջ շինարարութեան մասին, իսկ 1961 թուականին՝ մի պահլաւերէն արձանագրութիւն, որպիսին Հայաստանում գտնուում է առաջին անգամ :

Գառնի ամրոցի, մանաւանդ դիւղի արեւմտեան թաղամասի Ա.—Գ. դարերի դամբարանների պեղումների շնորհիւ յայտնաբերուել են մեծ արուեստով պատրաստուած, իրենց ձեւերով ու զարդարանքներով բազմազան կաւէ անօթներ, ապակեայ դոյնզոյն սրուակներ, մետաղեայ զէնքեր, գործիքներ, զարդեր եւ կենցաղային այլ իրեր, ինչպէս նաեւ հարեւան երկրներից, մանաւանդ՝ Միջագետքից, Սուրբայից եւ Միջերկրական ծովի արեւելեան աւազանի այլ երկրներից ներմուծուած բազմաթիւ առարկաներ :

Գառնիի պեղումները ցոյց են տալիս, որ հին Հայաստանում նկատելիօրէն բարձր զարգացման էին հասել նիւթական արտադրութիւնը, քաղաքային արհեստագործութեան տարբեր ճիւղերը, ճարտարապետութիւնը, արուեստը : Հայաստանը տեղ էր գրաւել հին աշխարհի զարգացած երկրների շարքում եւ բաւականաչափ ընդարձակ տնտեսական եւ մշակութային կապեր ունէր նրանց հետ :

Գառնիից առապարներով անցնող ճանապարհը տանում է հարաւ, դէպի Արարատեան դաշտ : Այստեղ նոյնպէս մեծարժէք հնութիւններ կան՝ մեր հինաուրց ժողովրդի ստեղծագործ տաղանդի փառաւոր յիշատակները : Ահա այնտեղ՝ Մասիսի ոտքերի տակ, Արաքսի ափին կապտին են տալիս երեք բլուր : Այնտեղ էր ծաղկում «գեղեցիկ երկիր Հայաստանի» երբեմնի մայրաքաղաք Արտաշատը : Շքեղ էր Արտաշատը, փարթամ՝ Արարատեան դաշտի բերքով, արհեստներով, առեւտուրով :

Անցնում են ժամանակներ : Արտաշատի չուրջը ճահիճներ են դոյանում, օդը վատանում է, քաղաքում առաջանում են հիւանդութիւններ : Այդ ժամանակ Պոսրով Կոտակ թագաւորը, Պորենացու վկայութեամբ, անտառ է տնկում Ազատ դետի հովտում եւ արքունիքը փոխադրում է անտառից վերեւ մի բլրի վրայ եւ շինում է արեւից պատսպարուած ապարանք. (այս տեղը) եւ պարսկական լեզուով կոչւում է Դուին, որ նշանակում է բլուր :

Դուինը ծաղկում է մանաւանդ 360ական թուականներից յետոյ,

երբ Շապուհ պարսից արքան աւերեց Հայաստանի քաղաքները: Այնուհետեւ, դրեթէ միայն Դուինը պահպանուեց ու շարունակեց բարգաւաճել՝ դառնալով Հայաստանի գլխաւոր քաղաքը նաեւ պարսից մարզպանների եւ արար ոստիկանների ժամանակ: Այն ընկաւ ԺԳ. դարում, երբ բոլորում էր իր հազարամեակը:

Իսկ սրտեղ է Դուինը, սրբ է այն բլուրը, որտեղ հիմնադրուել են արքայական ապարանքները դեռեւս Դ. դարում: Արարատեան դաշտը եզերող բլրաշարքից այգիների ու ծառատունկերի մէջ նկատուում է մի լերկ հողաբլուր, որին թուրքերը Թոփրաք Գալէ՝ հողաբերդ անունն են տուել: Իրօք, այստեղ բերդ է եղել՝ Դուին մեծ քաղաքի միջնաբերդը:

1937 թուականից սկսուեցին Դուինի սիսեմատիկ պեղումները, որոնք դեռ շարունակուում են: Ինչեր չի տուել Դուինը միջնադարեան Հայաստանի պատմութեան, մշակոյթի, քաղաքների, արհեստագործութեան, առեւտրի եւ արուեստի ուսումնասիրութեամբ զբաղուողներին:

Միջնաբերդում եղել են քարակերտ պալատներ, որոնց մի բաժանմունքում գետեղուել է մարզպանական Հայաստանի արխիվը: Այդ շէնքերը աւերուել են, հրկիպուել, վառուել է նաեւ արխիվը, որից պահպանուել են միայն փաստաթղթերին ամրացուած կաւէ կնքագրումները:

Քարէ շէնքերի փլատակների վրայ կառուցուել են հում աղիւսից շարուած հաստահեղոյս շէնքեր, որոնք աւերուել են թերեւս երկրաշարժից, ապա կրկին կառուցուել ու աւերուել է միջնաբերդը: Բլրի դազաթին շերտ-շերտ կուտակուած դարաւոր փլատակների վրայ կանգնեցուել են նոր պալատներ՝ թրծուած եւ յարդարուած ձեւաւոր աղիւսներից: Միջնաբերդի փլատակների տակ գտնուել են նաեւ ապակեգործի արհեստանոցի, կաւէ անօթներ թրծելու հնոցի եւ այլ շինութիւնների մնացորդներ:

Միջնաբերդի շէնքերից ոչ պակաս նշանաւոր կառոյցներ են եղել ընդարձակ քաղաքի տարբեր մասերում, մանաւանդ կենտրոնական թաղամասում: Այստեղ յայտնաբերուած շէնքերը նոյնիսկ աւելի վեհ են ու շքեղ: Միջնաբերդը քաղաքից անջատուած է եղել ընդարձակ եւ խոր փոսով, որը ջրով էր լցուում, իսկ նրա վրայ նետուել է շարժական կամուրջ: Պահպանուել է կենտրոնական թաղամասից դէպի կամուրջը տանող կամարակապ մուտքը:

Այս թաղամասի բաւականաչափ ընդարձակ բարձունքի կենտրոնում վեհօրէն կանգնած եղել Դուինի մայր տաճարը, կողքին՝ կաթողիկոսական պալատը, մի այլ եկեղեցի եւ ուրիշ շէնքեր:

Դուինի մայր տաճարը կրել է մի շարք փոփոխութիւններ : Սկզբում այտեղ եղել է առանց զմբէթի, թաղակապ ծածկով եռանաւ բաղիլիկա : Ե. դարի կէսերին կառուցուել են եկեղեցու հարաւային, հիւսիսային, արեւմտեան արտաքին սիւնաստանները, արեւելեան կողմից խորանին յարող երկու աւանդատները և երկրաչափական ձեւեր ունեցող խճապատ յատակը :

Է. դարի սկիզբներին շէնքը կրկին վերափոխուել է եւ երկայնական կողմերից՝ հարաւից ու հիւսիսից դուրս պրծնող խորանների շնորհիւ ստացել է խաչաձեւ սրահի տեսք, որի վրայ դրուել է զմբէթ : Գմբէթաւոր հսկայ սրահի ձեւով այն կանգնած է եղել մինչեւ Թ. դարի վերջերը եւ կործանուել երկրաշարժից : Մայր տաճարի կրած փոփոխութիւնները բնութագրական են Դ.-է. դարերի հայ ճարտարապետութեան զարգացման ընթացքի համար եւ օգնում են նրա լուսաբանութեանը :

Կաթողիկէի մօտ, նրանից փոքր-ինչ դէպի հիւսիս-արեւելք կառուցուած է եղել միանաւ բաղիլիկ եկեղեցի՝ հիւսիսային կողմից բաց սիւնաստանով, որ բնորոշ է Ե.-Զ. դարերի միանաւ եկեղեցիներին շատերի համար :

Նշանաւոր կառուցուածք է կաթողիկոսական պալատը : Դա մի խոշոր աշխարհիկ շէնք է՝ կենտրոնական երկշար սիւներ ունեցող ընդարձակ դահլիճով եւ երկու թեւերով, որոնցից իւրաքանչիւրն ունի հնգական սենեակ : Դահլիճի սիւների քարէ հսկայ խոյակները զարդարուած են արմաւենու զալարուն ճիւղի տեսք ունեցող եւ այլ բուսական ու երկրաչափական քանդակներով : Դուինի կաթողիկոսական պալատը է. դարի հայ աշխարհիկ ճարտարապետութեան բացառիկ յուշարձանն է :

Դուինում բացուել են նաեւ այլ աշխարհիկ շէնքեր, արհեստանոցներ, որոնք օգնում են հայ ճարտարապետութեան եւ, ընդհանրապէս, միջնադարեան հայ մշակոյթի շատ կարեւոր հարցերի լուսաբանմանը :

Գիտական մեծ արժէք են ներկայացնում Դուինի պեղումների շնորհիւ յայտնաբերուած բազմատեսակ իրերն ու առարկաները, որոնց թիւը հազարների է հասնում :

Սեպեղէն անօթները զարդարուած են զծագրութեան, փորագրութեան, զրոյմագրոգրի միջոցով : Ձնարակուած խեցեղէնը (զոյնզոյն ապակեեման շերտով պատուած կաւանօթներ) այնքան առատ է, այնքան բազմազան ու շքեղ, որ միայն նրանից մի ամբողջ թանգարան կարելի է կազմել : Յախճապակին երանգների հարստութեամբ ու համադրութեամբ, կենդանական, բուսական ու երկրաչա-

փական զարդերի բարձր արուեստով հիացմունք է պատճառում դիտողներին եւ այսօր էլ առատ նիւթ է տալիս ժամանակակից կիրառական արուեստին : Իսկ երկաթի զործիքներն ու զէնքերը, մետաղէ իրերն ու զարդերը, ոսկերչութեան բարձրարուեստ արտադրանքի բազմաթիւ նմուշները . . . :

Տեղում արտադրուած իրերի հետ միասին Դուինում գտնուել են չինական սելադոնի, իրանական շողուն յախճապակու, բիւզանդական ապակու նմուշներ, արաբական, սելջուկեան, թաթարական, վրացական գրամներ, որոնք խօսում են հարեան, նոյնիսկ հեռուոր երկրների հետ միջնադարեան Հայաստանի ունեցած անտեսական, առեւտրական եւ մշակութային կապերի մասին :

Դուինի եւ Գառնիի պեղումները ցոյց են տալիս, որ մեր նախնիները իրենց զարաւոր առաջընթաց ուղու վրայ մշտապէս մաքառել ու ստեղծագործել են, թողնելով մի հին քաղաքակիրթ ժողովրդի պատիւ բերող մշակութային մեծ ժառանգութիւն, չեն խորշել իրենց կենսափորձն ու մշակոյթը ուրիշ ժողովուրդների ունեցած լաւագոյնով հարստացնելուց :

Մեր նախնիների թողած ժառանգութիւնը սուկ հիացմունքի առարկայ լինել չի կարող, այն ունի ոչ միայն հոգեւոր, այլեւ նիւթական, դաստիարակչական նշանակութիւն : Այն օգնում է հինը ճանաչելու, բայց նորը, աւելի վեհը, աւելի զեղեցիկը կառուցելու գործին :

Բ. Ա.







Գ. ՔԵՐԵՍՏՈՒՅՃԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ԵՐԱՃՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

PIERRE BOULAIZE ԵՒ «Ա.Լ.Է.Ա.ԹՈՒԱՐ» ԵՐԱՃՇՏՈՒԹԻՒՆԸ

Երաժշտութեան թեքնիք կատարելագործման պատմութեան մէջ հակահնչիւն (dissonant) դաշնեակներու օգտագործումը փորձառական երկարատե ու դանդաղ շրջաններէ, խարխափումներէ յետոյ աստիճանաւոր կերպով միայն տեղ գտաւ դասական արուեստին մէջ:

Բոլոր harmonique նորութիւններուն գործադրութիւնը տեղի ունեցաւ նախ ժուժկալ կերպով, նոյնիսկ մեծ նախազուշուրթիւններով: Մարդոց զգայնութեան մէջ անոնց յառաջ բերելիք ցնցումները, անոնց ստեղծելիք անխորժ տպաւորութիւնները առաջուց կամ յետոյ մեղմացնող նախապատրաստութիւններով:

Ներկայ դարու կիսուն մօտաւորութեան սակայն, երաժշտական արուեստին մէջ տեղի ունեցան ձեւափոխումներ, որոնք աւելի հիմնական եւ շեշտուած կերպով յայտնաբերեցին արդէն խմորումի մէջ եղող հարմոնիք նոր մտածումներու բիւրեղացումը, որոնք կարճ ժամանակուան մէջ ստանալով նաեւ աւելի մեծ համեմատութիւն մը, ստանձնեցին տեսակ մը պատկերաքանդի դեր, ուժգին կերպով հրմըտակելով դասական դպրոցին պատնէշները մինչեւ որ երաժշտական թեքնիքը յանդեցաւ աթօնալիզմի, որուն մէկ մասնաւոր երեւոյթը եղաւ նաեւ Sériel կոչուած դրութիւնը եւայլն:

Տարակոյս չկայ որ կշռութային տարրը, ինչպէս նաեւ չափական դրութիւնը, ուրիշ ազդակներ անմասն չէին կրնար մնալ բոլոր այդ հիմնական փոփոխութիւններէն եւ պիտի ենթարկուէին հետեւաբար իրենց կարգին նաեւ մեծ փոփոխութիւններու:

Այդպէս ներքին հարմոնիք ատաղձը տեսակ մը քայքայումի ենթարկուելէ վերջ շարժումը պիտի վարակէր նաեւ ընդհանուր դասական ֆօրմը:

Այդ երեւոյթին ակնատես կ'ըլլանք ներկայիս «սոսնապահ» կոչուած երիտասարդ երաժիշտներու խմբակի մը ստեղծագործութիւններուն միջոցաւ : Անոր ամէնէն կարկառուն դէմքերն են, Փրանսացի Իրէն Պուլէզ, գերման Շթոքհաուզըն, եւ իտալացիներ՝ Լուիճի Նօնօ, Պէոբօ :

Այս խումբը եւ մի քանի ուրիշ երկրորդական ուժեր որոնք կ'աշխատին ստեղծագործական գրեթէ նոյն շաւիղին մէջ, հակառակ իրենց գործերուն պատճառած réaction ին, յաջողած են արդէն ստեղծել հետաքրքրներու բաւական ընդարձակ շրջանակ մը :

Բ. Պուլէզ հիմնած է նաեւ Փարիզի մէջ «Տօմէն Միւլիքալ» կազմակերպութիւնը, որ նուիրուած է Փրանսական երաժշտութեան այդ նորագոյն դպրոցին ներկայացման եւ տարածման :

Մասնաւորելով մեր խօսքը այս վերջինին մասին, Փրանսացի երաժիշտը որ խիստ զարգացած եւ փայլուն միտք մըն է, կարճ ժամանակուան մէջ գրաւեց առաջնակարգ դիրք մը, մանաւանդ միջազգային շրջանակներու մէջ եւ կը նկատուի ամէնէն հեղինակաւորներէն մին :

Արուեստագէտը կանուխէն իսկ յարեցաւ սէրիէլ դպրոցին եւ շուտով գծեց իր անձնական ուղին, շատ աւելի հեռուները տանելով այդ թեքնիքին մէջ իր յանդուզն նախաձեռնութիւնները :

Իր ստեղծագործական խառնուածքին շատ մօտ զգալով Փրանսացի խորհրդապաշտ բանաստեղծ Մալարմէն, վերջերս անոր երկու քերթուածներուն վրայ գրած է իր «Improvisation sur Mallarmé»-ները, որոնց մէջ Պուլէզ արդիական երաժշտական դպրոցին կը բերէ վերստին անտիպ նորութիւն մը, ինչպէս ցոյց կուտայ երկին անունը :

Վերջերս Սթրադպուրիի մէջ հիմնուած երաժշտասէրներու ընկերութեան հրաւէրով՝ Պուլէզ կատարած էր բանասօսութիւն մը, որուն մէջ արուեստագէտը կը բացասուէ իր յղացած նոր գործին ներքին իմաստը :

Պուլէզ կ'ըսէ հետեւեալը .

«Էմփրովիզասիոն»ը, այնպէս ինչպէս կ'ըմբռնեմ այս պարագային, երաժշտական արուեստէն ներս նոր եւ ազատ ծաւալի մը թափանցումն է :

«Մինչեւ այժմ աւանդական ձեւով նուագախումբի համար դըրուած կտորի մը մէջ նուագածուները մեկնարկութեան պահուն նոյնքան կախում ունէին նուագապետին ցուցմունքներէն, որքան ստեղծագործութեան մէջ կանխաւ եւ ճշգրիտ կերպով հաւաքական նուագածութեան վերաբերեալ հաստատուն օրէնքներէ, որոնց դժած սահմաններէն կարելի չէր շեղիլ :

«Մինչդեռ Էմփրովիզասիոնը տեղի կուտայ երկու տարրերու միջև կապերուն թուլացումին, այսինքն ստեղծագործութեան ֆօնմին եւ գործիական նուազածութեան յենակէտներուն միջև:

«Մինչեւ վերջերս՝ կերտուածքի ամբողջական եւ յատկանշական դիմադիծը ճշգրիտ կերպով սահմանուած կ'ըլլար: Կար որոշ կերպով ուրուադծուած երաժշտական լեզու մը իր յարակից դոյացուցիչ տարրերով: Այժմ սակայն երաժշտական լեզուն յարաբերական երեւոյթներու վրայ ձեւ կ'առնէ, որով անհրաժեշտ է նաեւ որ ֆօնմը նոյնպէս յարաբերական պայմաններու համապատասխանէ: Ըսել կ'ուզենք թէ անհրաժեշտ է այլեւս մտցնել տարրեր որոնք այդ ֆօնմը մեկնարկութենէ մեկնարկութիւն այնպիսի փոփոխութեան ենթարկեն, որ նոյն գործը կարելի չըլլայ երկու անգամ նոյն կերպով տալ: Փօնմի կազմութիւնը ասկէ առաջ կ'իրականանար տարրեր ձեւով մը:

«Օրինակ առնենք կտորի մը մէջ երեք զանազան տարրերու ներկայութիւնը: Ա., Բ. եւ Գ.: Աւանդական-զասական սիդրունքներու համաձայն, Ա.ին կը յաջորդէր Բ.ը եւ անմիջապէս յետոյ նաեւ Գ.ը: Արդի նոր յատկանշը այն է սակայն, որ իր կազմութիւնը, իր ձեւը պէտք է ստանայ որոշ չափով մեկնարկութեան պահուն առնուելիք որոշումէ մը: Ուրիշ խօսքով, որոշ վերապահութիւններով եւ պայմաններով մեկնարկութիւն տրուին կարելիութիւններ որպէսզի Ա.էն վերջ փոխանակ Բ.ի Գ.ը յաջորդէ:

«Երեւակայեցէք պահ մը կայարանի մը երկաթուղիի զիծերուն բաժանման կեդրոնը, ուրկէ լծակի գործողութեան մը միջոցաւ շոգեկառքը ըստ կամս դէպի այս կամ այն թիւ զիծը կարելի է ուղղել: Ճիշդ նոյն ձեւով ալ նուազածուներուն կամ վարիչին այդպիսի պատահական կամաւոր մէկ որոշումը մեկնարկութեան պահուն պիտի կարենայ ֆօնմի փոփոխութիւն մը յառաջ բերել:

«Ներկայ բացատրութիւնը կը պարունակէ նորութեան ընդհանուր իմաստը միայն, որովհետեւ Էմփրովիզասիոն սիւռ Մալարմէի երկրորդը նոր ուղղութեան մէկ առաջին փորձն էր, ինչ որ մտադիր էի աւելի առաջ տանիլ: Մինչ այդ, սակայն, հարցը աւելի մօտէն ուսումնասիրած ըլլալով, ներկայ երկրորդ Էմփրովիզասիոնիս ֆօնմը նախկինէն շատ աւելի ազատ եւ յարաբերական ձեւով մըն է յղացուած: Անոր մէջ հեղինակելու բրոպիւմը ենթակայ է ճշգրիտ եւ մեթոտիք տրամաբանութեան մը, որ կրնայ մին հաստատուն եւ միւսը շարժուն երկու դրացի բնագիր թէքսթերու գոյութեանէն ծնունդ առնել:

«Ազատութեան եւ պարտադրութեան միջև համեմատութիւնը արտաքնապէս տեսանելի է երկու ազդակներուն միջոցաւ, այսինքն խմբավարին շարժումներէն եւ ծանօթագրութեանէն:

«Նուազածութեան պահուն մէկ կողմէն կան նօթազրութեան ցոյց տուած աւանդական նշանները որոնք կը փոխանցուին դէպի նուազախումբը վարիչին շարժումներուն միջոցաւ, յետոյ նօթազրութեանէն դուրս կան նաեւ ձեռքի շարժումներ, որոնք կը տրուին անոր կողմէ, պարզապէս օգին մէջ ըսելու համար օրինակ. «Ճամբան բաց է»: Այդ պարազային ուրեմն նուազածուն կրնայ պարտադրուած քէմքօէն դուրս ելլել: Այդ մասերը ցոյց տրուած են փոքր նօթերով մասնաւոր նշաններու միջոցաւ, ինչպէս նաեւ առաւելագոյն ժամանակը զօր կրնայ օգտագործել այդ նպատակաւ»:

Ուրիշ տեղ մը, Ալէաքսառ վերտառութիւնը կըող իր գրութեան մէջ, քոմփոզիսիոնի մասին Պուլէզ հետեւեալ միտքը կ'արտայայտէ թէ՛ դասական ըմբռնումով հեղինակելու արուեստը բազմաթիւ «որոշումներ»ու մէկ վերջնական արդիւնքն է: Թէ՛ հեղինակել կը նշանակէ հարկադրուած ըլլալ մէկ լուծումէն միւսը, մէկ որոշումէն միւսը անցնել, որով այդ պարազային հեղինակին ստեղծագործական կամքն է որ կը միջամտէ, որպէսզի իր մտքին ներկայացող յօրինուածքի նախազիծերը ստանան իրենց վերջնական ձեւը:

Եւ սակայն, կ'ըսէ Պուլէզ նաեւ, ատոր մէջ իսկ անակնկալը չի դադրիր երբեք դեռ գոյութիւն ունենալէ:

«Անձնական փորձառութեամբ դիտեմ թէ, կը գրէ Պուլէզ, աշխատութեան պահուն անկարելի է նախատեսել նիւթին բոլոր թաքուն կարելիութիւնները: Որքան ալ նախատեսող զօրեղ ոգի մը գործէ հեղինակին մէջ, առանց այդ անակնկալին նկատուման հեղինակելու արուեստը իր ամէնէն վսեմ մէկ առաքինութեանէն պիտի զրկուէր»:

«Հեղինակելու արուեստը հակառակ իր րասիոնէլ բնոյթին պարտաւոր է ամէն վայրկեան անակնկալ մը պատրաստ ունենալ, որպէսզի իրեն կարելի ըլլայ պարունակալից գործ մը տալ»:

Պուլէզի այս բացատրութիւններէն կարելի է հետեւցնել թէ, այս պարազային ալ թէեւ հեղինակը, ինչպէս միշտ, իր գործը Էմփրոպիէ-Քասիոնի որոշ ազատութիւններով կը վստահի մեկնարկուին, եւ սակայն շատ աւելի, երաժշտական պատմութեան մէջ իր նախընթացը չունեցող ընդարձակ սահմաններու մէջ: Հետեւաբար «անակնկալ»ներու այս սկզբունքին կիրարկման մէջ երկին վերակայացման տեսակէտէն մեկնարկուին բերած մասնակցութիւնը կ'ըլլայ այլեւս ոչ թէ յետ ստեղծագործութեան, այլ անոր քովնտի կերպով:

Մթրազպուրկի բանախօսութեան մէջ Բ. Պուլէզ Էմփրովիգասիոնի ձեւին մասին խօսած պահուն յիշած էր իր Էմփրովիգասիոն սիւռ Մալարմէ անուն գործը: Արուեստագէտը զանազան առիթներով յայտարարած էր նաեւ թէ երաժշտական այդպիսի նոր ֆօռմեր ստեղծելու

զաղափարը իր ստեղծագործական փորձառութեան մէկ թելադրութիւնը էր եղած, այլ գրականութեան հետ իր ունեցած կապերը ներշնչած էին իրեն այդ միտքը: Օրինակ տուած էր Ճէյմս Ճոյսի վէպերը եւ մասնաւորաբար Փրանսացի խորհրդապաշտ բանաստեղծ Մալարմէի քերթուածները եւայլն, որոնք զինքը մեծապէս տպաւորած էին եւ նպաստած այդպիսի զաղափարի մը հասուննալուն:

Երաժշտագէտ Էրնսթ Թոմաս ուսումնասիրելով Պուլէզի նորագոյն գործերը, որոշապէս կը մատնանշէ երաժիշտին յարափոփոխ մասերէ կազմուած գործեր յղանալու զաղափարին մէջ Մալարմէի ունեցած խոր ազդեցութիւնը:

Այդ առթիւ կը յիշատակէ խորհրդապաշտ բանաստեղծին անաւարտ մէկ գործին՝ «Լը Լիվրը»ին յառաջաբանը, ուր հեղինակը կը գրէ. «Գիրք մը կըսկսի թէեւ, սակայն չի վերջանար, կամ ամէն պարագայի աւարտած ըլլալու պատրանքը միայն կուտայ»:

Այլուր Մալարմէի հրատարակիչը Շէրէր, հատորին կցած իր մեկնարկութեան մէջ կը գրէ. «Գրական ամէնէն ճիշդ միջոցն է ազատ ու ինքնատիպ ոգիով եւ սակայն նաեւ առանց կամայականութեան գրքի մը՝ նոյնիսկ շաղկապող տարբերուն ապահովել շարժականութիւն մը, այսինքն անոր էջերը, նախագասութիւնները, անոր մէջի յանգը, բառը, նոյնիսկ տառերը: Գիրքը որ տառերու ամբողջ մէկ ընդլայնումն է, պէտք է նոյնպէս ստանայ շարժականութիւն մը» եւն.:

Արտայայտուած բոլոր այս մտքերը փոքր զաղափար մը կուտան նորագոյն երաժշտութեան արդիապէս հետապնդած նպատակներուն մասին:



Յարափոփոխ Փօսփի ռահվիրաներէն մին է նաեւ, ինչպէս յիշեցինք, գերման երաժիշտը՝ Շթոքհաուզըն:

Այս վերջնոյն հեղինակութիւններէն մին է նաեւ զաշնակի համար նորագոյն ձեւով յղացուած կտորը՝ Քլավիրըթիւֆ 11ը:

Գործը բաժնուած է 19 մասերու, որոնցմէ իւրաքանչիւրը նուազածուն կրնայ իրարու կցել, անոնց յաջորդութեան կարգը ըստ կամս փոխելով:

Անհաւատալի թիւ մը պիտի տար այդպէս կարգի փոփոխութեան ենթարկուած կտորի մը տուած կարելիութիւնները, 19ի բազմապատ-

կութեամբ : Եւ որպէսզի այդպէսով ստեղծուած այլազանութիւններու թիւը աւելի ստուարանայ, հեղինակը անոնցմէ իւրաքանչիւրին սահմանած է նաեւ տարբեր արագութիւններ, տարբեր նիւաններ, եւայլն :


Հետեւաբար, մեկնարկու արուեստադէտին կը մնայ այլեւս որոշել հեղինակութեան ընդհանուր ֆօռմը եւ ոչ թէ ինքը հեղինակը :

Շթոքհաւորզըն այս առթիւ կուտայ նաեւ հետեւեալ բացատրութիւնը, իր կտորին մասին .

«Նուազածուն բոլորովին աննպատակ կերպով իր նայուածքը կը նետէ իր առջեւի նօթերուն վրայ, որոնք կը պարունակեն սոյն 19 կրտորները եւ կը նուագէ սկսելով անոնցմէ որեւէ մէկէն, որեւէ արագութեամբ կամ նիւանով, որուն վերջաւորութեան պիտի սկսի դարձեալ որեւէ ուրիշէ մը : Կտորներուն իւրաքանչիւրը յղացուած է այնպէս որ կարելի ըլլայ որեւէ ուրիշի մը հետ անմիջականօրէն կապ հաստատել» :

Այդ բոլորին իրազեկ ըլլալէ եւ այդպիսի երաժշտութիւն մը ունկընդրելէ վերջ, մեր մտքին մէջ կը մնայ մէկ բան միայն, մէկ հարցում թէ՛ ո՞ւր եւ ի՞նչ ձեւով պիտի վերջանայ կամ ո՞ւր պիտի յանդի երաժշտական արուեստին մէջ նորոյթներու այս խոյանքը դէպի անձանօթը :

Գ. Բ. .





ՆՈՐԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑՈՒՄ



Հայկական ՍՍՌ-ի Գիտութիւնների ակադեմիայի Պատմութեան ինստիտուտը մեր հայազիտական կարեւորագոյն օջախներից է: Այս տեղ աշխատում է մօտ հինգ տասնեակ գիտնականներից բաղկացած համերաշխ մի խումբ, որ տարիներ շարունակ զբաղուած էր մեր ժողովրդի հարուստ պատմութեան բազմատեսակ հարցերի ուսումնասիրութեամբ՝ սկսած հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը: Ինստիտուտում, ձեռք-ձեռքի տուած, հայ ժողովրդի ելեւէջներով լեցուն պատմութեան հարցերն են մշակում հին, միջին եւ երիտասարդ սերունդի մտաւորականներ՝ գիտութեան զոկտորներ եւ թեկնածուներ երկարամեայ աշխատանքում արդէն աչքի ընկած վաստակի տէր պատմաբաններ, գիտութեան մէջ իրենց առաջին, բայց հաստատ քայլերն անող ասպիրանտներ:

— Խիստ բազմազան է այն թեմատիկան, որի վրայ ներկայումս աշխատում են մեր պատմաբանները, — ասաց ինստիտուտի գլխավոր Ա. Յարութիւնեանը, պատասխանելով մեր այն հարցերին, թէ ինչպիսի թեմաների վրայ են առանձնապէս ուշադրութիւն դարձնում գիտնականները: — Դուք մեզ մօտ կը հանդիպէք գիտական աշխատողների, որոնց ուշադրութեան կենտրոնում հայ ժողովրդի ծագման ու կազմաւորման հարցերն են, ուրիշների, որոնք ուսումնասիրում են մեր ժամանակակից պատմութիւնը: Կարճ ասած՝ մեր խումբի տեսադաշտն ընդգրկում է հայ ժողովրդի պատմութիւնը՝ իր ամբողջութեան մէջ, նրան զբաղեցնում են մանաւանդ այն հարցերը, որոնք մինչեւ օրս համեմատաբար քիչ են մտահոգել հայազէտներին: Հայ ժողովրդի պատմութեան նմանօրինակ ուսումնասիրման պահանջը իր արտայայտութիւնն է դտել մեր ինստիտուտի կառուցուածքում. այն

կազմուած է հին ու միջին դարերի, նոր եւ սովետական ժամանակաշրջանների պատմութեան բաժինները :

Սրանց կողքին, ինչպէս պատմեց դիրեկտորը, ինստիտուտում պահաս կարեւորութիւն չի տրուած նաեւ հայ ժողովրդի պատմական կապերի եւ զազուլթահայ պատմութեան հարցերին: Այս նպատակով վերջին տարիներին ինստիտուտում բացուել է նոր բաժին՝ ՍՍՈՄ ժողովուրդների եւ նոր դեմոկրատիայի երկրների պատմութեան բաժինը :

Ահա երկու տարի է, ինչ ինստիտուտը բարձրացրել է մի խնդիր, որը հաւասարապէս մտահոգում է նրա բոլոր աշխատողներին, դարձել է նրանց գիտական մտորումների վլխաւոր առարկան: Դա հայ ժողովրդի պատմութեան «բազմահատորեակի» ստեղծումն է: Նախատեսում է մօտակայ տարիներին ստեղծել 7 մեծածաւալ հատորներից բաղկացած գիտական մի հրատարակութիւն, որն իր մէջ պիտի ամփոփի հայ ժողովուրդի պատմութիւնը՝ սկզբից մինչեւ մեր օրերը:

— Սա մեր հարցերի հարցն է, եւ այդ ուղղութեամբ մեզանում արդէն նկատելի աշխատանք է կատարուած, — ասաց Ա. Յարութիւնեանը: — Նախ կազմուել է «Բազմահատորեակի» պլան-ծրագիրը: Դա մի ծաւալուն գիրք է, որտեղ ըստ ժամանակաշրջանների նշուած են հայ ժողովրդի պատմութեան հարցերը: Այլ խօսքով ասած՝ պլան-ծրագիրը այն ուղենիշն է, որով պիտի ընթանայ շարադրանքը՝ ըստ թեմաների եւ զբանցում ամփոփուած հարցերի: Մինչեւ գիտական խորհրդի կողմից հաստատուելը՝ անցեալ տարուայ Յունիսին, այն գրուեց ռեսպոնդենտի մտաւորականութեան՝ պատմաբանների, զրականագետների, փիլիսոփաների եւ տնտեսագետների համատեղ քննարկմանը: Նախապէս 200 մտաւորականների բաժանուել էին այդ ծրագրի օրինակները: Երկու օր տեւեց քննարկումը: Բաւական է ասել, որ երոյթ ունեցան աւելի քան 30 գիտնականներ, որոնք արժէքաւոր շատ դիտողութիւններ եւ ձշտումներ կատարեցին: Այս բոլորի սղագրութիւնները ինստիտուտի բաժինների կողմից հանգամանօրէն ուսումնասիրուեցին, եւ ծրագիրը համապատասխան փոփոխութիւնների ենթարկուեց: Այժմ այն հաստատուած է ինստիտուտի գիտական խորհրդի կողմից, հաստատուած են նաեւ հատորների խմբագրները եւ թեմաների հեղինակները: Գիտա-կազմակերպչական այս աշխատանքներին գուզընթաց, դեռ 1961 թուականից սկսուել է «Բազմահատորեակի» մի շարք թեմաների մշակումը: Դրանով զբաղուած են ոչ միայն մեր, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատակիցները, այլեւ ռեսպոնդենտի բարձրագոյն ուսումնական

Հաստատութիւնների եւ դիտա-հետազոտական հիմնարկները մի շարք մասնագէտներ: Նախատեսուում է 1967 թուականին աւարտել «Բազմաճատորեակը»:

Սակայն «Բազմաճատորեակը» ամենեւին էլ չի սպառում ցանկը այն թեմաների, որոնց վրայ այժմ աշխատում են ինստիտուտի դիտանականները: Դիրեկտորը, մեր առջեւ պարզելով դիտահետազոտական աշխատանքների ծրագիրը, դիտական քարտուղար Վ. Բարխուդարեանի հետ միասին հանգամանօրէն տեղեկացնում է իւրաքանչիւր դիտական աշխատողի կատարածի ու կատարելիքի, նրա բարձրացրած թեմայի նշանակութեան մասին:

Մեր ժողովրդի բազմադարեան պատմութեան շատ եւ շատ հարցեր այստեղ գտել են իրենց բարեխիղճ մշակողին: Ահա թէ ինչպիսի է թեմաների եւ դրանց կատարման պատկերը ինստիտուտում, բացի «Բազմաճատորեակից»: Հին եւ միջին դարերի պատմութեան բաժնում պատշաճ եւ սիստեմատիկ կերպով առաջ են քաշում եւ լուծւում այդ ժամանակաշրջանի պատմութեանը առնչուող բազմաթիւ խնդիրներ: Այդ բաժնի վարիչ, պատմական դիտութիւնների դոկտոր Ս. Երեմեանը «Հայկական ՍՍՌ ատլաս»ում, որ լոյս է տեսել վերջերս, գետեղել է պատմական Հայաստանի 9 քարտէզներ. նա պատրաստել եւ հրատարակութեան է յանձնել «Հայաստանը ըստ Անանիա Շիրակացու աշխարհացոյցի» մեծածաւալ քարտէզը՝ նրան կից 8 մամուլ բացատրական-հետազոտութեամբ: Աւարտուելու վրայ է նաեւ նոյն հեղինակի «Ֆէոդալական յարաբերութիւնների ձեւաւորումը Հայաստանում» ուսումնասիրութիւնը:

Նշանակալից աշխատանք են կատարում նաեւ այս բաժնի միւս դիտաշխատողները: Հ. Անասեանը ընթացիկ տարում աւարտում է «Հայկական Մատենագրութիւն» բազմաճատոր աշխատութեան Բ. հատորը, իսկ Վ. Յակոբեանը՝ «Կանոնագիրք Հայոց» աշխատութեան երկրորդ գիրքը: «Կանոնագրքի» Ա. հատորը շուտով լոյս կը տեսնի: Ուշադրաւ են բաժնի երիտասարդ գիտնականներ Հ. Բարթիկեանի եւ Ա. Տէր-Ղեւոնդեանի ընտրած թեմաները: Նրանցից առաջինն աշխատում է «Հայ-բիւզանդական յարաբերութիւնները» թեմայի վրայ, իսկ երկրորդն արդէն աւարտուել է «Հայաստանում արաբական էմիրութիւնների պատմութիւնը» բաւականին ծաւալուն աշխատութիւնը: Զաւլախների պատմութեան ուսումնասիրութեամբ է զբաղւում դիտութիւնների թեկնածու Մ. Զուլալեանը:

Գիտական լուրջ աշխատանք են ծաւալել Նոր պատմութեան բաժնի աշխատակիցները: Սրանց թեմատիկան, մասնաւորապէս, ուշարժան է նրանով, որ ընդգրկում է Հայաստանի սոցիալ-տնտեսական կեանքի եւ այլ հարցեր: Բաժնի աշխատանքները ղեկավարում է ան-

ուանի հայադէտ, ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանը, որին հայ ընթերցողը ծանօթ է վերջին տարիներին լոյս տեսած նրա «Միքայէլ Նալբանդեան» եւ «Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան» երկհատոր աշխատութիւններով: Նրա անմիջական ղեկավարութեամբ ինստիտուտի գիտաշխատողներ Ս. Ավակիմեանը, Վ. Յակոբեանն ու Վ. Մարտիրոսեանը արդէն պատրաստել եւ շուտով տպագրութեան կը յանձնեն «Հայ-ուսական յարաբերութիւնները 13րդ դարի առաջին քառորդում» փաստաթղթերի ժողովածուն՝ շուրջ 45 մամուլ ծաւալով: Ժողովածուն սկսում է ընդարձակ մի ներածութեամբ, որը գրել է ակադեմիկոս Ա. Յովհաննիսեանը:

Բաժնի թեմաներում արժանի տեղ են գտել նաեւ հայ ժողովրդի արեւմտեան հատուածի պատմութեան բազմաթիւ հարցեր: Այսպէս, գիտութիւնների թեկնածու Ն. Կարապետեանը շուտով կ'աւարտի «Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» մեծածաւալ մենագրութիւնը, Հ. Ղազարեանը այս տարի կ'աւարտի իր «Արեւմտահայ դեմոկրատական շարժման պատմութիւնից (1850-1880 թուականներ)» աշխատութիւնը, Արեւմտահայ գիւղացիութեան վիճակին եւ Արեւմտեան Հայաստանում ազրարային յարաբերութիւնների պատմութեանն է նուիրուած Ա. Համբարեանի մենագրութիւնը, որը մի քանի ամիս յետոյ կը յանձնուի բաժնի քննարկմանը՝ հրատարակուելու համար:

Հայ ժողովրդի պատմութեան ուրոյն կողմերից մէկը հայ գաղթականութեան պատմութիւնն է: ՍՍՌՄ ժողովուրդների եւ նոր դեմոկրատիայի երկիրների պատմութեան բաժնի գիտաշխատողներ Վ. Բարխուդարեանը, Պ. Կոկոնեանը, Ս. Յովնանեանը, Ժ. Անանեանը, Գ. Պինգերեանը եւ ուրիշներ, բաժնի վարիչ Վ. Ոսկանեանի ղեկավարութեամբ, ձեռնամուխ են եղել Նոր Նախիջեւանի, Յունաստանի, Պուլկարիոյ, Ուկրաինայի, Ղրիմի, Աստրախանի եւ այլ վայրերի հայ գաղութների պատմութեան ուսումնասիրութեանը:

Ահա սրանք են այն թեմաները, որոնց վրայ այժմ աշխատում է սովետահայ պատմաբանների մեծ ընտանիքը: Կասկած չկայ, որ հայ ժողովրդի պատմութեան բազմահատոր գիտական հրատարակութիւնը կը լինի նրա ամենանուիրական աւանդը դարերի խորքից եկող իր խոհուն ու աշխատասէր ժողովրդի մշակութային դանձարանում:

Վ. Մ.

*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԻՆ

Եգիպտահայ նկարիչներու ցուցահանդէսին առիթով «Radio-Monde» շաբաթաթերթը իր վերջին քիւնով հրատարակած է հետևեալ տողերը հայ արուեստին մասին: Ստորեւ քարգմանութիւնը.—

Ձեւերու կեանքը կամ հոգին կը հասնի նախահայրական ժառանգութենէ մը, զոր ժամանակը, համբերութիւնը, բազմաթիւ սերունդներու մտահոգութիւնը ձեւաւորած են իրենց պատկերին համաձայն: Ոստ մը պատուաստել կը նշանակէ նոր աւելցով հարստացնել եւ կամ ոչնչացնել: Հայ արուեստը կը սիրէ իր անցեալը, հայ արուեստագէտը դիտէ ընդունիլ ազդեցութիւնները: Ան մեծ է ատով իսկ, ան հետաքրքիր եւ խելացի է ի տես ցեղերու, ուրիշ ժողովուրդներու ձեռք բերածներուն:

Սակայն, անցեալին կապուած ըլլալով հանդերձ, ան դիտցած է իւրացնել արեւմտեան զեղազիտութեան իրեն ներկայացուցած ամենատարբեր հոսանքները: Այս ըսել է թէ՛ ան կը տարբերի⁶: Բնա՛ւ երբեք: Ան կ'ըմբռնէ, այսինքն թէ՛ կ'ապրի եւ թէ՛ իր խղճմտանքը, իր շիտակութիւնը կը մնան միակ կանոնները իր հասկացողութեան: Այն որ հայ արուեստագէտ կ'ըսէ՝ կ'ենթադրէ լուրջ, օրինաւոր եւ անմիջական աներկբայութիւնները շրջանակի մը, ընտանիքի մը, երկրի մը, միջավայրի մը, մէկ խօսքով ընկերային եւ բարոյագիտական իրականութեան մը, ուր նուիրապետական յարգանքը եւ լաւ կատարուած աշխատանքի մը սէրը զետեղուած են աստուածներու կարգին: Հայը չի խարդախեր, եւ եթէ ինքզինք կարող կը տեսնէ, չ'անտեսեր երբեք նաեւ իր սահմանները:

Ի մի հաւաքելով, հայ ստեղծագործողը ունի տրամաբանութեան եւ զգացումին պարզեւարբեր արժէքները, ներդաշնակուած արտայայտութեան մը մէջը, ուր ամէն ինչ որ փայլուն է՝ կը սրբուի, բուն խանդավառութիւն է՝ կ'ոչնչանայ...:

Դարերը կերտած են հայկական խղճմտանքը — եւ ժամանակաւոր դժբախտութիւններէն ո՛չ մէկը կարողացած է կոտրել այն մոմը, որ կը վառի սուրբին պատկերին առջեւ: Անապատին կեդրոնը, հայը կարող է, մայրամուտին իմանալ զանգին զօղանջը, որ կը ծանուցանէ երեկոյեան ժամերգութիւնը: Անապատին կեդրոնը, ան երկրին ընդերքէն դուրս կը քաշէ դաշտերու ծաղիկ մը՝ ժպտուն եւ հեզ: Ասոր մէջ բան մը կայ աւելի զօրեղ, քան մարդոց սովորական արտայայտութիւնը, կա՛յ հոգին խղճմտանքին խորհրդանիշը, որ այլեւս չի պատկանիր ներկայի մանրուքին, այլ այն վերջին քննութեամբ մը, իր վերջնագոյն ճիգը ի սպաս կը դնէ պատասխանելու միշտ ներկայ վերակենդանացման իրականութեան կոչին: Հայ ամենամեծ բանաստեղծը Գրիգոր Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» սօսնչակի գրքին մէջ մեզի կ'ըսէ.

«Տէ՛ր իմ, Տէր պարգեւատու, ինքնաբույս բարի, Բոլորին տիրող հաւասարապէս, միայն դու Արարիչ ամէն ինչի՝ Աննառեւի, անտեսանելի, անզնեւի, անշօշափելի, անորոնելի, Անկիրք եւ անժամանակ, անշամանդազ գիտութիւն» :

Դարերէ ի վեր, նոյն այս աղօթքը կեանքի իւրաքանչիւր եղանակին, իւրաքանչիւր առաջին ժպիտին եւ իւրաքանչիւր ողբերգութեան կը կրկնուի հազարաւոր մարդոց կողմէ, որոնք սորված են, որ կեանքը արժէք ունի, երբ միայն աշխատանքը կը դափնեւորէ ճիգերը, եւ իր առողջ մտահոգութիւնը կը քաղցրացնէ յոյսը : Որովհետեւ հայուն համար ոչինչ զիւրին է, ոչինչ կարող է զիւրին ըլլալ : Ան զիտէ թէ զիւրութիւնը տկարներու կնիքն է, եւ արցունքը անոնց՝ որոնք չեն տեսեր : Դուք կը հասկնաք անոր անվստահութիւնը օտարի հանդէպ, դուք նոյնպէս կ'ըմբռնէք, թէ ինչու իր սիրտը կը բաբախէ իր երկրին մէկ որդւոյն նուազազոյն անմիջական արտայայտութեան իսկ, թէ ինչու ի վերջոյ իր լեզուն, իր սովորութիւնները այնքան յարգուած են իր կողմէ, իր զաւակներուն կողմէ . . . :

Այն որ, օր մը, իր պատմութեան մէջէն տեսած է կարմրած գետը եւ աւերակուած տուները, չի կրնար նայիլ ուրիշ տեղ, քան ինքն իր մէջ՝ ուրկէ կուզայ այս նայուածքը ինքնազննիչ, կիսասքող, այս կծկուած հոգին, այս խղճմտանքը, որ միայն ճշմարտութիւնը կ'ընդունի, սրտին ճշմարտութիւնը, որ երբեք չի ճանչնար կեղծիքն ու սուտը քաղաքավարութեան, եւ որ կը յարզէ կամ կը տեսնէ միայն այն ինչ որ անմիջական է, ներդաշնակ եւ իրական :

Ուրեմն թոյլատրելի է սպասել, որ պատուաւոր եւ կանոնապահ բարոյականութեամբ ժողովուրդ մը արտայայտուի պատուաւորապէս, այսինքն՝ անկեղծօրէն : Եզիպտոսի մէջ ապրող օտար համայնքներէն, հայ համայնքը թերեւս միակն է, որ կը ներկայացնէ խղճմտանքի նման մեծութիւն մը, աշխատանքի եւ պարզութեան նման փարում մը : Մեծ գետին ափերուն վրայ այսպէս կ'ապրին զգայնութեան անբիծ ծաղիկները՝ փթթելով եւ մեծնալով : Միշտ երիտասարդ եւ առոյգ զարնան մը բոյրը կը սնուցանէ հարուստ, հեշտալի կամ անդոհալի խիւսը Զօրեանի, ճշմարտութեան ճիշ մը, երկրին ճշմարտութիւնը, կը պսակէ Բիւզանդի (Կոնստանեան) զօրքը, խելացի գիծերու իմաստուն համաչափութիւն մը կը սնուցանեն մտերմիկ Յակոբեանի demi-teinte երբ . Օննիկ Աւետիսեան, իր կարգին, կ'երզէ իր հայրերուն միսթիք եւ մտաւորական հայրենիքին հայրենարազճ կոչերը :

« L'Art pour tous » կալըրին հպարտ է 1962ի այս սկիզբներուն ներկայացնելով կտաններ, իրագործուած մարդոց կողմէ, որոնք իրենց գործին եւ իրենց պարտականութեան զիտակցութիւնը ունին, արուստագէտի պարտականութիւն, այսինքն զիտակցութիւն մը, որ ոչ մէկ սակարկութիւն, ոչ մէկ սուտ, ոչ մէկ տկարութիւն կ'ընդունի . . . » :

ԿԱՐԾՐ ՓԱՅՏԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Փիէր Կիւսման հեղինակն է «Փորագրութիւնը 19րդ դարուն» գիրքին, ուր կը խօսի փորագրութեան զանազան ձեւերուն ծագման մասին: Իր գիրքը տպագրուած է 1930 թուականին: Կարծր փայտի փորագրութիւնը լայնօրէն տարածուած էր, մանաւանդ արժէքաւոր գիրքերու զարգացումին համար:

1915էն առաջ կարծր փայտի փորագրութիւնը կը վերագրուէր անգլիացի փորագրիչ Պեյլիքի, եւ Անգլիայէն տարածուեցաւ Ֆրանսայի եւ Եւրոպական այլ երկիրներու մէջ: Տարիներու ընթացքին զանազան փաստեր ցոյց տուին թէ, Պեյլիքէն առաջ Ֆրանսայի մէջ մէկ քանի փորագրիչներ փորձած էին, առանց մեծ յաջողութեան: Արեւելքէն ալ անձանօթ փորագրիչներ եկած էին, որոնք կապ ունէին Հոլանտայի հետ: Այդ անձերը ժամանակին Ամստերտամի հայկական դպրութէն էին, ուր կը գտնուէր նաեւ հայոց Առաջնորդ սրբազանը:

Փիէր Կիւսման կը գրէ հետեւեալը. «Արեւելքէն, Պոլիս տպագրուած հայկական Ազաթանգեղոսի պատմութեան գիրքը, որուն նկարները փորագրուած են կարծր փայտի վրայ եւ պիւրէնով, էջմիածնի վանական Մարգուանցի Մկրտիչի գաւակ Գրիգորի կողմէ, կը փաստեն 66 տարուան տարբերութիւն մը Պեյլիքի գործերուն եւ հայկական կարծր փայտի փորագրութեան միջեւ»:

Պեյլիքի գործերը կը կրեն 1775 թուականը, իսկ Ազաթանգեղոսի պատմութեան գիրքը՝ 1709 թուականը: Պատմութեան գիրքէն արտատպած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի չարչարանքը Տրդատ թագաւորին առջեւ, ուր հեղինակը ցոյց կուտայ զանազան փաստերով, կարծր փայտի վրայ փորագրութեան իբր նմոյշ:

Փայտի վրայ փորագրութիւնը Ծայրագոյն Արեւելքէն կուգայ: Ճարտական Էսթամբուները կակուղ փայտի վրայ են եւ ճարտական դանակով փորագրուած: Կակուղ փայտի փորագրութեան համար պտղատու ծառերու փայտը կը գործածուի: Իսկկարծր փայտի փորագրութեան համար կը գործածուի անպտուղ ծառերու փայտը:

Ինչպէս որ պիւրէնը կը գործածուի պղինձի համար, ողորկ եւ տոկուն մակերեսի մը վրայ, ամէն ուղղութեամբ, նուրբ գործերու համար, եւ կը գործածուի կարծր փայտի վրայ, նոյն ողորկ եւ տոկուն մակերեսին համար: Հետեւաբար քայլ մը եւս առաջ՝ փորագրութեան պատմութեան մէջ, մանաւանդ տպագրութեան միջոցով արտադրուած արժէքաւոր գիրքերու համար:

Կիւսմանի գիրքին մէջ յիշուած հայկական փորագրութեան մի քանի էջերուն ամփոփումը ընելով, կը մնայ մօտէն հետաքրքրուիլ հայկական գիրքերու այն փորագրուած նկարներով, որոնք 1700էն 1775 թուականներուն կը պատկանին:

ՆԻՇԵՐ ԵՒ ՆՕԹԵՐ



ERNEST HEMINGWAY

Ամերիկեան գրականութեան խոռվայոյզ մէկ դէմքը, որ կը մարել յանկարծ խորհրդաւոր մահով մը, արկածահար կամ ինքնասպան: Յեղաշրջական մը ընկերային վիպադրութեան մէջ, որով խայթող այլ կակծալի իրատեսութեամբ մը մերկացուց հակադրութիւններու այն աշխարհը, ուր մարդկային հաւաքականութիւնները իրարու կը բախին, կորսուած, առեւանգուած դադափարապաշտութեան մը ի խնդիր, եւ կը խորտակուին յաճախ ճակատագրականութեան թաթին տակ:

Հէմինկուէյ յաւիտեանական այս տուամը կուտայ առանց ողբերգականութեան, բայց նոյն ատեն եղբրական պարզութիւնով մը, կտրուկ, յստակ եւ ցնցող յաջորդականութեամբ մը, ուր սերունդի մը բեկորները յորձանքէ յորձանք կը նետուին, մեռնելու եւ ապրելու կռիւին մէջ, ուր անհատը իզո՞ւր կը մաքառի ծովերուն դէմ, իր երազին դիակը կարենալ փրկելու համար, ուր պատերազմը իր մեծ պատրանքը կը տարածէ մեռեալներու դաշտին վրայ, եւ կը կնքէ ա՛նոնց սէրը, ուխտը, կամ թերեւս անյայտ մարտիրոսագրութիւնը:

Հէմինկուէյի տաղանդը կը ցած է պատմել այս բոլորը յարաճուն գարգայումով մը, եւ ստեղծած անոնց համապատասխան հերոսները, զանոնք վարող գործողութեանց հանգոյցը եւ այդ էակները կախարդող անմեկնելի առեղծուածը, դարու մը ոգին՝ որ ժամանակէն դուրս կը ցայտէ եւ կը ջանայ փշրել ընկերային բոլոր կապանքները:

Վիպասանը իր գրական այս հանդանակը յանդգնօրէն պաշտպանած է նշանակալից գործերու մէջ, ինչպէս Մախազաւցը որո՞ւ համար կը հնչէ, ուր արիւնի եւ ատելութեան խրամներու մէջ կը ծաղկի փոխն ի փոխ սիրոյ, նուիրումի եւ խիզախութեան դափնեպսակը, Հրաժեշտ գեմֆերուս, ուր նորէն վթութեան եւ սիրոյ խաղաղութիւնն է որ կը քողարկէ մահը, մարդոց հակամարտութիւններուն յետին փշուրները, Մերուսիս եւ ծովը, որ այս անգամ կը նկարագրէ ոյժին եւ կիրքերուն, նպատակին եւ տքնութեան սարսոտալի անակնկալները, որով մարդը կ'որսայ հսկայ ձուկը, բայց անոր կմախքը միայն կը տանի իր հետ:

Հէմինկուէյ օժտուած է զիտելու, պատմելու, համեմելու անըս-



T. POLAD

С. ΦΟΙΛΙΟΥΣ



ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԻԱՆ

TER-GHEVONDIAN



Բ. ԹՕՓԱԿԵԱՆ

P. TOPALIAN

Բ. ՊՈՏՈՍԻԱՆ



BODOSSIAN

Պ. ձԵՐԱՆԵԱՆ



JERANIAN





ՍՈՒՆԱ ԹՕՓԱԼԻԱՆ

S. TOPALIAN



ՔԱԶԱԶՈՒՆԻ

KATCHAZ

Բ. ԹՕՓԱԼԻԱՆ

«Խաղաղության ճանապարհը»

P. TOPALIAN





պառ թարմութեամբ մը, եւ իր գրչին տակ ինկած ամէն դէպք, վիպական ամէն իրադարձութիւն իրարու կ'օղակուի միշտ նոր գրգիռով մը: Եւ այս կենդանութիւնն է որ տարօրինակ պայծառութիւն մը կը բանայ ամէնէն ետք իր գործին մէջ, կը լուսաւորէ իր անձերը եւ անոնց նուիրաբերումը, անյուսութեան փոխարէն փրկութեան նշոյլ մը բերելով շատ անգամ, տարտամ ճառագայթ մը՝ որ կը խաղայ իր նկարագրած գերեզմաններուն եւ աւերակներուն վրայ: Ահա թէ ինչու Հէմինկուէյ կրնայ եղբայրանալ այն հոգիներուն, որոնք պատերազմէն ստեղծեցին մերկ, անկաշկանդ բայց սրտառուչ գրականութիւն մը, անոնց՝ որ կոչուեցան Փրանսացի Րոլան Տորժըլէս կամ գերման էրիչ Մարիա Բեմարք: Իր Մահագանդը զուգահեռական մը կը կազմէ առաջինին Փայտէ Խաչերուն եւ երկրորդին համարաւարտ վէպին՝ Արեւմուտքի մէջ ոչ մէկ նորութիւնի հետ:

Իր կեանքով թէ վախճանով, էրնրսթ Հէմինկուէյ իր ապրեցուցած հերոսներուն բախտը ունեցաւ, եղաւ ռամիկ ու որսորդ, կամաւորապէս կուռեցաւ ճակատէ ճակատ կամ անհետացաւ կոյս անտառներու խորը, ու մեռաւ իր իսկ գէնքէն արձակուած գնդակով մը: Իր վէպը զեղուն է բաբախուն մարդկայնութեամբ մը, որ իր գործը կը պաշտպանէ ու կը նուիրագործէ իր Դէմքը, Սթայնպէքի, Ֆոքըրի, Էրսթին Քալտուէյի կողքին:

Եղ Սիմֆեռեսի

WILLIAM FAULKNER

Ֆոլքնէր մեռաւ վերջերս: Ապագայ սերունդները պիտի ըսեն՝ թէ Բոնչ կարեւոր տեղ պիտի յատկացուի իրեն համաշխարհային գրականութեան մէջ:

Մալու, իրեն յատուկ մանուածապատ եւ փառարանական ոճով Սրբավայրի նախարանին մէջ, ՅՕական թուականներուն, հանրութեան ուշադրութիւնը կը հրաւիրէր մեծ վիպասանին վրայ, մինչդեռ քիչ ժամանակ ետք Սառթո, քանի մը գովեստներ ընելով հանդերձ կը ժխտէր այս տաղանդը, եւ Ֆիտ՝ աւելի վերապահ իր քննադատութիւնը կը սահմանափակէր Ֆոլքնէրի գրականութեան ձեւին, կերպին միօրինակութիւնը ի յայտ բերելու մէջ:

Այսուհանդերձ, Փոուսթի մահուրէն ի վեր համաշխարհային բեմին վրայ չերեւցաւ ուրիշ վիպասան մը որ վերստեղծած ըլլար վիպապաշտ տիեզերք մը նոյնքան ընդարձակ, նոյնքան հարուստ եւ նոյնքան ողբերգական:

Ուրիշներ վէպեր գրեցին, ինչպէս Հէմինկուէյ, Տոս Փասոս կամ Սթէյնպէք, բայց անոնք ամէն բանէ աւելի գրագէտներ են, անոնք պատմութիւն մը կը պատմեն պատմութեանը համար. մինչդեռ Ֆոլքնէր աշխարհ մը կը ստեղծէ իր հերոսներուն չափանիշով. անոնց շունչին, անոնց դաւադանք հոգիին չափով:

Ինչպէս Պարզաք, Թոլսթոյ, Սթանտոյ կամ Տոսթոյեւսքի, ան իր

տիպարներուն մտասեւեռում եղած միեւնոյն բնաբանը կը վերածափէ: Ինչպէս իր նախորդները, ինքը գերտակցութիւնը ունի արդիական աշխարհի կազմաւորութեան, ուր անհատը հետզհետէ աւելի կը կորսուի բազմութեան մէջ, ուր չի դադրիր երբեք պայքարելէ պահպանելու համար իր անձնական մղձաւանջները, իր զեղխութիւնները, իր առաքինութիւնները: այդպէսով՝ իր ստեղծագործութիւններուն քանակը ուղղակի մրցակցութիւն մըն է Աստուծոյ հետ:

Կ'ըսեն թէ դժուար հեղինակ մըն է: Եթէ նոյնիսկ այդպէս է, անտեղի է զայն մեղադրել մտքի նուաճումներէ օգտուելուն համար:

Եթէ անջրպետ մը կայ Պալլաքի եւ Փոռութի տեսութիւններուն միջեւ, թէպէտեւ միջավայրերը ուր իրենց հերոսները ապրած են այդքան ալ հեռուոր չեն, ինչո՞ւ նոյնը չընդունինք Փոռութի եւ Ֆոլքնէտի միջեւ:

Առանց եռանդուն պաշտպաններու թերեւս առաջինը տակաւին սպասէր համակիրներու, երկրորդն ալ չունենար իրեն արժանի հետեւորդները:

Ֆոլքնէտի կերպը հասկնալու համար պէտք է ձոյս կարգանք: Ինք եղաւ համադրողը:

Անշուշտ Ֆոլքնէտ մասնաւոր ճաշակ մը ունէր մանուածապատ ձեւերու, բայց առանց վարպետի մը օրինակին պիտի ունենա՞ր յանդերձնութիւնը ասոր, որոշ ձանձրոյթ մը, որոշ թախծանք մը, նոյն ժամանակ յամառ եւ արթնամիտ պեղումը հոգիի խոր ծալքերուն:

Պէտք է հաւատալ որ մեր հոգեկան վիճակներու վերլուծումը կ'առաջնորդէ ստեղծագործը, եթէ ան կ'ուզէ խուսափիլ սովորականէն, հասարակ տեղիքէն եւ փնտռել պատմուածքի ձեւ մը որ արհամարհէ աւանդութիւն դարձած ձեւերը:

Եթէ մէկը վերսկսէր Թովմաս Հարտի կամ Ֆիէրլըինկի նմանիլ — եւ անոնց թիւը շատ ւ, — որեւէ վարկ չէր թէ իր ունենար, ոչ ձեւը արդիական չըլլալուն, այլ անոր համար որ դարը կը պահանջէ նոր տեսակերպ մը, զգալու նոր ձեւ մը: Արդ, Ֆոլքնէտինը այժմէական է, ո՛չ ձանձրոյթի կը վախնայ, ոչ ալ բարդ եւ խառնիճաղանձ տիեզերք մը մէջտեղ հանելու ճիգէն: Տիեզերք մը որ երեւութապէս միայն ախուր է: Պիտի մեղադրեն զինքը իր գաւառականութեանը համար, իր յոռետեսութիւնը որ երբեմն մեռելային է եւ պիտի գովաբանեն իր տիեզերականութիւնը, իր տարօրինակ բանաստեղծութիւնը, իր մաքրակրօնութիւնը — քանի որ միմիայն հարաւի մասին կը խօսի — կ'ուսումնասիրէ ստորադասութեան զգացումով համակուած էակներ, նոյնիսկ այլասերածներ կամ նիւթերը կը վերցնէ հին կտակարանին մէջէն: Նոյն պերճութեամբ կը նկարագրէ գլխարկ մը կամ ներքին մենախօսութիւն մը:

Ասոնք նոյն քննադատութիւնները կամ գովեստներն են որ առհասարակ գրագէտի մը մասին ի յայտ կուգան: Միեւնոյն յատկանշական կողմերը կարելի՞ չէ բառ առ բառ վերագրել ժիւլիէն Կոխի...:

Բայց ասոնք այլեւս չեն յիշատակուիր երբ բանաստեղծին տարողութիւնը մարդկային պչրասիրութիւններու տեսողութեան սահմանէն անդին կ'անցնի:

Ինչ որ իր գործին արժէքը կ'ապահովէ իր հուլիւնն իսկ է, —

մարդիկ իրենց ճակատագրին դէմ մաքառող եւ իր արտայայտելու նոր ու ինքնատիպ կերպը:

Ըլլան անոնք աղքատ կամ Վարուստ, առողջ կամ անկեալ, հոգեբանը՝ (Ֆոլքնէն հոգեբան է գերագանցօրէն) գիտէ զանոնք առաջնորդել իրենց նկարագրին պահանջած ձեւով, իրադարձութիւններու դիպուածը որ կը յարուցանեն, եթէ արուեստագէտը գիտէ զանոնք միտով պարուրել եւ իրր թշուառներ յանձնել իրենց ներքին ճակատակագրականութեան:

Այն արկածախնդրութեան մէջ որ կեանքն է, ո՛չ ոք պիտի ուրանայ գործին արժէքը:

Այս գործը, որուն եթէ մօտենայ պէտք ըլլար, ձեզի խորհուրդ չէի տար «Ապալոյն, Ապալոյն»ով սկսիլ, որ է իր գագաթնակէտը, բայց երբ որ պէտք ըլլար վայրկեան մը միայն կարգալ, ասիկա պիտի յանձնարարէի:

Ամբողջ Ֆոլքնէնը հոն է իր յատկութիւններով եւ թերութիւններով, ձեւաւորման մեթոտով, իր խռովեալ հոգիով, իր հերոսներով, իր ինքնուրոյն բանաստեղծութեամբ եւ իր մեծութեամբ:

Եդ. Պասսաֆեան

ՏԻԿԻՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳԵՒՈՆԵԱՆԻ ԵՐԳԱՀԱՆՌԷՍԸ

Քանի մը ամիսներ առաջ Փարիզի մէջ տեղի ունեցաւ Տիկին Արմենուհի Գեւոնեանի Մշոյ երգերուն ունկնդրութիւնը, Տըպլուսի սրահին մէջ:

Արուեստագիտուհին իր մայրենի երկրին տարազը վրան, չմոռնալով արախչին, տեղական ապարանջանն ու գունաւոր մուճակը, նախորոք ժապաւէնի վրայ առած իր երգերը սկսաւ ձայնասփռել, իւրաքանչիւրին մասին տալով համապատասխան բացատրութիւններ: Իսկ երբեմն ալ ձայնագիր գործիքը մէկդի դնելով, իրեն յատուկ նուրբ սահանքներով, օրօրումներով ու մանաւանդ բարբառային հընչականութեամբ երգեց այլեւս բոլորովին կորստեան մատնուած մեր երբեմն Մուշի սիրոյ, կռուի, ուրախութեան, աշխատանքային եւ տխրութեան երգերը:

Այլեւս յուշ դարձած մեր գաւառին ոգեկան բոլոր ստեղծագործութիւնները, երգերէն, ասացուածքներէն մինչեւ տեղական աննման պարերը, կոտորածներուն հետեւանքով հիմնովին կորստեան ենթարկուած՝ Տիկ. Գեւոնեան միակն է որ իր հայրենի երգերը հարազատութեանը մէջ պահեր ու անաղարտ հասցուցեր է մինչեւ ներկայ թուականը: Ասոր համար հայ ժողովուրդը երախտագէտ է իրեն:

Տիկին Գեւոնեանի բերքը կը կրէ թանգարանային բնոյթ. այլ սակայն ապագայ հայ երաժշտագէտներ այդ մասնիկներէն, երանգներէն կրնան լայնադիր երաժշտական յորինումներ կատարել:

ԷԶԸ ԴԱՐՁՈՒԱԾ Է...

Քանի մը ամիսներ առաջ, Սթոֆ հրատարակչականը լոյս կ'ընծայէր հատոր մը, որ ամբողջապէս զերծ էր անցուկ գրական նորաձեւութիւններէն, ըսեմք ունայնութիւններէն, որոնք գրաւած են հրապարակը՝ շնորհիւ ազազակող ԱՄԻԱններու:

Դիրքը անմիջապէս ընդունելութիւն գտաւ ֆրանսալոս երկիրներու մէջ, դարձաւ գրադարաններու ամէնէ աւելի կարգացուող հատորներէն սէկը, նիւթ ժառանգեց դասագրքերու՝ շնորհիւ իր ոճի, շարագրութեան, քերականութեան եւ պատմելու կատարելութեան. Վատիկանի պաշտօնախօսները ամբողջ սիւնակ մը կը յատկացնէր գրքին գրուածման եւ հայաստանի Կրօններու Միութեան պաշտօնախօսները «Երական Խերթ»ը գնահատական տողեր կը նուիրէր անոր: Վեց ամիս յետոյ դիրքը կը հասնէր իր հինգերորդ տպագրութեան: Ընթերցողները շէին կրնար անկէ բաժնուիլ, վերջին էջը հասնելէ առաջ: Թարգմանիչներ կը տքնէին զայն նոր ընթերցողներու ներկայացնելու համար, եւ, մեզի շատ ծանօթ երկրի մը դեսպանը կը բազմապատկէր իր գիմուսները ֆրանսայի Արտ. Կործ. նախարարութեան մօտ՝ այս գրքին դէմ:

Սօսքը Վիքթոր Կարտոնի վերջին հատոր «Զմրուխտակիր Ասպետը»ին մասին է:

Այս ամէնուն անտեղեակ էի, երբ, ոչ զերծ որոշ մղձաւանջէ, սոյն գրքին ընթերցման ձեռնարկեցի, առանց նախապէս կարգացած ըլլալու «Կեանքին կանաչ Արեւը», վիպաշարքին առաջին հատորը: Մտահոգուած էի, որովհետեւ կը վախնայի աւելորդ անգամ մը եւս կարգալ 1915ի ջարդերուն վերաբերող երեմիականներ, մարտիրոս Հայաստանի, սոսկալի զոհերու վերաբերեալ ընկճող պատմութիւններ:

Վիքթոր Կարտոն մեզ բերաւ հիմնական վկայութիւն մը, որ պիտի թոյլատրէ հայ բոլոր սերունդներու վերագտնելու եւ վերստեղծելու իրենց էութեան անմահ աղբիւրը: Վերջնականապէս կ'անհետանայ յաւիտենական եւ անպաշտպան նոխազի տիպար հայուն կերպարանքը, անոր փոխարէն կը տեսնենք այլ դէմք. — Հայը պատերազմիկ՝ բայց խաղաղասէր, արհեստաւոր կամ արուեստագէտ, ստեղծագործ բազմազան հանճարներով օժտուած, քրիստոնեայ՝ քանի որ վստահութիւն ունի իր մերձաւորին հանդէպ, վերջապէս քաղաքագէտ որ կը ճանչնայ մարդկային ոգիի պատմական բոլոր դարձուածքները իրենց սահմաններով: Ո՛չ մէկ պատրանք, — եւ ա՛յս է ամէնէն լաւը — եւ սակայն՝ ոչ մէկ յոռետեսութիւն: Յոյսը անմահ է — այո, առեւը կործանած է: Պիտի վերաշինուի, անպայման:

Դարերու խորքէն, Ասպետը մեզի կ'երկարէ մաղաղաթը հայ ժողովուրդի հաւատամքին յաւիտենական ուխտին. սակայն մագաղաթը կը յայտնէ նոյնպէս առասպելական զանձի մը գոյութիւնը: Ո՞վ է այն ունայնամիտը, որ չի հասկընար թէ այս զանձը ուրիշ մողական շնորհքի մը մէջ կը գտնուի, որ կրնայ անուանուիլ «հաւատա՛, ապրէ՛, ստեղծէ՛, Կեանքի Կանաչ Արեւը, պիտի ծագի ամէն՛ն օր, ամէն՛ն օր»:

Վիշտերուն էջը դարձուած է ուրեմն: Այժմ վերածնունդին էջն է:

Ամէնէն մեծ գնահատանքը — հեղինակին ըսել որ շնորհիւ իր հատորին, մեր սերունդը կը հասկնայ իր հայրերու անդիմադրելի կարօտը անցեալին, կարօտ՝ որ կը բոցավառէ դէմքերը

ալ կորուսեալ», ծանօթ էր մեզի եւ յարգելի՛ ինչպէս թանգարան մը : Կարտօն մեզ համար կը կենդանացնէ այդ անցեալը իր գաղտնիքներով, կենսունակութեան իր բանալիով, ամբողջ գեղեցկութեամբը . այլեւս չունինք այն տպաւորութիւնը թէ սրբապիղծ ոտքերով կը քալենք մահադաշտի մը վրայէն . — ո՛չ — կը պտտինք յաւիտենական եւ հրաշալի մրգաստաններու մէջ, որոնք մեր նախնիքները պատրաստած են մեզ համար :



Լսի որ «էջը դարձուած է», սակայն անհրաժեշտ էր որ այդ էջը կատրելապէս գրուած ըլլար դարձուելէ առաջ : Ի՛նչ մեծ բախտ . Վիքթօր Կարտօն քանդակած է այդ էջը, այնտեսակ ձեւով, ոճով եւ լեզուով, որ անոր յաւիտենական տեսողութիւնն ապահովուած է ի փառս ամենայն հայոց : Կարտօն վերստեղծած է հայոց այդ անցեալ աշխարհը այնքան սիրելի եւ հրաշալի, որ մենք զայն կը ձանձնանք եւ այլեւս երբեք պիտի չմոռնանք :

Անփոփոխելի կանոններու համաձայն «գրուած» ընտանեկան սեղանէն մինչեւ պատերազմը, հոմերոսական հայհոյանքներ ու կատակներ կուռի ընթացքին, հրաշքի նմանող բուժումներ, մխիթարանքներ եւ մանկական յուզիչ սէրեր, ամէն ինչ մեզի կը հրամցուի տրամախօսութեան անպիտի արուեստով, բեմադրութեամբը, կենսունակութեամբը, որ յենէ իրականութիւն կը նսեմանայ անոնց կողքին : Բոլոր տիպարները գրաւիչ են, սակայն երկու դէմքեր կը տիրապետեն գործին . փոքրիկն Վահրամը եւ իր «Ճոշ Մարէն»՝ Ոսկեհատ Պաթունը :

Գրքին ամենամեծ հմայքը, անկասկած, կուզայ անկէ՛ յ որ երկիրը, երկինքը, ծովը, լեռներն ու պարտէզները մեզի ներկայացնուած են մանուկի մը՝ Վահրամի տեսիլքին համաձայն : Ան դեռ կ'ապրի առասպելական շրջանը, ուր իրականն ու երազը կը խառնուին եւ կը ստեղծեն հերոսութիւնը : Անոր հերոսական երազները, բնական է, չեն արգիլեր որ ան խորապէս կապուած ըլլայ, մխով եւ ոսկորով, իր մըրգաստանին, իր տան, իր Վանայ Աշխարհին :

Կարտօնի գործին ամենամեծ ինքնատպուլթիւնը կուզայ անցեալ՝ նահապետական կեանքի մը վերստեղծման արտասովոր «ներկայութեանէն» եւ հարազատ քանդակէն : Ամբողջ աշխարհի համար Կարտօն մոռացումէ կը փրկէ հայ դարաւոր աւանդութեանց իմաստութիւնը, անոնց տալով արտասովոր կենսունակութիւն եւ վաստկելով անոնց աշուղի հանդամանքը, ինչպէս Հոմերոս եւ ինչպէս Միսթրալ :

«Քաջ»երուն ուժը կուզայ իրենց մէջ արմատացած այն խորունկ հաւատքէն, որ իրենք շառաւիղն են Նոյ նահապետին, նախնեաց հողին վրայ եւ երկինքի տակ : Կարտօնի ազգայնականութիւնը, կը սկսի համազգայնութեամբ, բարձրանալով մինչեւ մարդկութեան ծագումը, Մասեաց Ռտնէն, եւ կարծես՝ մարդկային արժանապատուութեան ի յարգանք, փորձելով ամբողջ աշխարհին հասկըցնել որ մարդը՝ մէկ է :

«Զմրուխտակիր Ասպետը» միաժամանակ Հաւատքի եւ Յոյսի Հանդանակ մըն է, քանի որ այսքան սուգերէ եւ ճեղքերէ վերջ, իւրաքանչիւր հայ կը յիշէ Ծիածանի Դաշինքը, Մասիսի ոտքին, Աստուծոյ եւ մարդոց՝ հայոց միջեւ, ճիշտ այնպէս, ինչպէս Ոսկեհատ Պաթունը կ'աւանդէ իր թոռնիկին : Ծիածանի Դաշինքին տէր, առանձնաշնորհեալ իւրաքանչիւր հայ, ուր որ ալ գտնուի, կը յիշէ որ իր հետ ունի այդ լուսէն քանի մը շառակի :

ԼԷՈՆԱՐՏՕ ՏԱ ՎԻՆՉԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋ

«Սովետ Նիուզ» հանդէսը (Լոնտոն), կը հաւաստէ թէ հայ գիտնական մը հաստատած է որ Լէոնարտո տա Վինչի իր կեանքի երկու տարիները (1480-1482) անցուցած է Արեւմտեան Հայաստանի մէջ: Սովետահայ գրադէտ Միքայէլ Մազմանեան իր այս թէզը կը պաշտպանէ «Լէոնարտո տա Վինչին Հայաստանում» գրքին մէջ որ վերջերս հրատարակուած է Ս. Միուլթեան մէջ:

Հայ գիտնականը իր կեանքի երեսուն տարիները անցուցած է ուսումնասիրելով Լէոնարտոյի պատմութիւնը եւ երկարօրէն քննած է իտալացի հանճարին ձեռագիրներն ու տախտակները Ֆրանսա եւ Իտալիա կատարած իր բազմաթիւ այցելութիւններու ընթացքին: Մազմանեան Լէոնարտոյի Հայաստան գտնուած ըլլալու իր համոզումը հիմնած է երկրաչարժի մը մասին Լէոնարտո տա Վինչիի կատարած նկարագրութիւնը բազդատելով իրեն ժամանակակից Առաքել Դաւրիժեցիի նկարագրականին հետ, Արեւմտեան Հայաստանի մէջ պատահած երկրաչարժի մը մասին, որ պատահած է 1482ին, ու կ'աւելցնէ թէ ոչինչ գիտեն Լէոնարտոյի գործունէութիւններու մասին 1480 եւ 1482 տարիներու միջեւ: Մազմանեան կը հաւաստէ նաեւ թէ Լէոնարտոյի արխիւները

բուն մէջէն գտած է Հայաստանի քարտէս մը եւ հայկական տիպի զանազան զձագրութիւններ: Վերջապէս, Մազմանեան գուտ հայկական ոճով որոշ մաթիֆներ երեւան հանած է Լէոնարտոյի ճարտարապետական կարգ մը նրկարներուն մէջ:

**

Միւս կողմէ, Ապրիլ 25ին Երեւանի արուեստի աշխատաւորներու տան մէջ տեղի ունեցած էր Լէոնարտո տա Վինչիի ծննդեան 510ամեակին նուիրուած երեկոյ մը, ուր Արա Սարգսեանի ներածական խօսքերէն յետոյ խօսած է Միքայէլ Մազմանեան, «Լէոնարտո տա Վինչին Հայաստանի մէջ» թեմայով:

Յենուելով հին հայկական եւ իտալական աղբիւրներէ քաղուած ուսումնասիրութիւններու վրայ, Մազմանեան պատմած է որ Լէոնարտո տա Վինչին գտնուած է Հայաստան եւ ծանօթանալով հայկական ճարտարապետութեան զայն մասամբ տարածած է Իտալիոյ մէջ: Դասախօսը լուսարձակ յապտերով ցոյց տուած է Լէոնարտո տա Վինչիի «Ատլանտեան մատեան» աշխատութենէն նկարներ, որոնցմով հանճարեղ նկարիչը տեղեկութիւններ հաղորդած է Հայաստան կատարած իր ուղեւորութեան մասին:



ԱՅՍ ՀԱՏՈՐՈՎ

ԵԴ. ՍԻՄՔԷՇԵԱՆ	Ս. ՄԵՐԱՅ ՄՂՅՈՅ	5
Վ. ՆՈՐԵՆՑ		7
ՅԱՐՈՒԹ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ	ԵՐԱԳԵԼ	8
ՈՒԻԼԵԱՄ ՍԱՐՈՅԵԱՆ	ՄՈՓԱՍԱՆԻ «ԳԼՕԶԸ»	9
ԵԴ. ՍԻՄՔԷՇԵԱՆ	ՊԱՐԸ	15
Կ. ՓՕԼԱՏԵԱՆ	ՆԻՖՈՍ ՔԱԳԱՆԾԱՖԻ	19
Զ. ՈՐԲՈՒՆԻ	ԿԱՐԱՅԻՆ ԵՐԳԸ	49
ՓՕԼ ՎԱԼԵՐԻ	ՊԵ ԹԵՍՔ	62
Ե. ԱՅՎԱԶԵԱՆ	ՆՈՒԻՐՈՒՄ, ՂՕՊԱՆՉԻՆԵՐ	65
ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ	ԿԱՐՕՍ, ԲԵՐԿՐԻԻՆ	68
Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ	ՎԵՐԱՊԱՐԹ	70
Վ. ԵՐԱՆԳԵԱՆ	ՀՐԱԷՐ	70
ԱՐՇԱԻՐ ՄԿՐՏԻՁ	ՆԻՒ-ԵՄՐԲ	71
Գ. ԴԱԻԹԵԱՆ	ՀԻՆ ԿՅԱՐԱՆԸ	72
Վ. ՄԱՎԵԱՆ	ԿՈՂՈՒՄ	74
Յ. ՔԻԻՐՏԵԱՆ	ՀԱՅ ԱՐՈՒԵԱՍԻ ՄԱՍԻՆ	75
Ա. ԽԱՆՏԱՆԵԱՆ	ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՐԵՐՈՒ ՄԷՉԷՆ	81
ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐԵԱՆ	ՄԻՉՆԱՊԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ	97
Բ. ԱՌԱՔԵԼԵԱՆ	ԳԱՌՆԻԻ ԵՒ ԴՈՒԻՆԻ ՎԵՊՈՒՄՆԵՐԸ	115
Գ. ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆ	ՆՈՐԱԳՈՅԻՆ ԵՐԱԺՂՏՈՒՔ	122
Վ. ՄԻՔԱՑԵԼԵԱՆ	ՆՈՐԸ ՎԱՍՈՒ. ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ	129

ՆԻՇԵՐ ԵՒ ՆՕԹԵՐ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ղ Ա Ն Դ Է Ս





ԱՆԴԱՍՏԱՆ-ի այս հատորին
տպագրութիւնը աւարտեցաւ
1962 հոկտեմբերին, «Արաքս»
տպարանին մէջ, իմ քաղաքը
թեամբ Բ. Թօփալեանի,
Փարիզ :

Directeur : P. TOPALIAN

Imprimerie Araxes
46, Rue Riche
PARIS - 9^e

